

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵջ


ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՊԱԶԱՐ

1930



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Ն Ա ւ Ե ր

Լիզանի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵջ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Խոհեմարդ
869



1980

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Հ. ՆԵՐՍԻՍԻ Վ. Ի. ԶԵՏՈՅԵՎԻ

Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ո Ւ

ՏԱՐԾՈՅՑ ԵՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

ԱՋԱՋՆՈՐԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՅԼԻՑՈ

Ի ԲԱՐԵՎԱՇՏԱԽԹԻՒՆ

ԵՒ Ի ՏՈՒՆ ԱՆԴՐ ՄԵՇԻՆ ՄԻՒԹՈՐԱՅ

Հ. Վ. Հ.

Ա. Զ. Պ.

Հայաստանեայց Եկեղեցւոյ գլուխն ա-
ւանդական սովորութեամբ մը կ'ընտրուի
համազգային ժողովով, եւ կը կարգուի այդ
պաշտօնին՝ ձեռնադրութեամբ եւ օժմամբ,
որ զատ է եպիսկոպոսականէն եւ յաւե-
լուած անոր վրայ։ Շքեղ քան մ'է ըստ ին-
քեան այդ ձեւը, որ թէ նիներէն եւ թէ
նորերէն ոմանց նոյն խոկ թելադրեց աւելի
ինչ մը նշմարել մեր հայրապետին վրայ՝ քան
միւս եկեղեցեաց պատրիարքաց։ Զանազան
անձինք խօսած են խնդրոյս մասին, քայց
անցողաբար, անքաւական չափով, եւ յա-
ճախս յանգեղով սխալ հետեւութեանց։ Կ'ար-
ժէր ուրեմն վերաբննել զայն, եւ համնիլ
անոր վերջնական լրւծման։ Այս նպատա-
կաւ Ա. Ղազարու նեմարանին մէջ անցեալ
տարւոյ նոյեմբ։ 24ի օրը, յորում ինձ վի-
ճակեցաւ քանախօսել, նիւթ առի խնդրոյս
ծիսապատմական մասը, ձեռնադրութիւնը։
Զոր լրացնելով ընտրութեան նկարագրով,
կ'ընծայեմ պատմաէր ազգայնոցս, որոց
հետաքրքրութեան կը կարծեմ քաւական
գոհացում տուած լինել այսու։

Եկայլ ձեսկեցուք՝ զայս զառայնորդ կե-
նաց մերոց տոշեալ մեզ յԱստուծոյ զՊրիզոր
հովիւ կացուցանել։ — Ագաթ. 595։

Ա

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մեր ազգին համար յոյժ կարեռը գործ
մը համարուեր է միշտ իւր հոգեռը պետին
ընտրութիւնը, և ամէն անգամ քաղաքա-
կան ու եկեղեցական իշխանութիւնը թա-
փով փարեր են անոր։ Բայց մեր քով այդ
գործը հաստատուն ձև մ'ունեցած չէ բնաւ.
այլ կախուեր է ազգիս քաղաքական կա-
ցութենէն, և անոր հետ զանազան յեղա-
շըրջութեանց ենթարկուեր դարերու հո-
լովման մէջ։ Այս պատճառաւ կարեռը է
բաժնել զայն շրջաններու վրայ, որպէս
զի կարենանց անոր պատկերը տեսնել
յատակօրէն և իւր ամբողջութեան մէջ,
նկատելով զայն նախ միւս քրիստոնեայ ազ-
գերու սովորութեան մէջ, որ համեմատու-
թեան եզր պիտի կազմէ հայկականին հետ։

Ա. Բնդիանիրական Եկեղեցոյ մէջ: — Ուրովհետեւ այն շրջանին, ուր ազգովին կապուած էինք տիեզերական Եկեղեցւոյ հետ, կրօնական բոլոր խնդրոց մէջ հասարակօրէն հաւասար կ'ընթանայինք ամենուն հետ, ինչպէս կը ցուցնէ ճշգրիտ պատմութիւնը, պիտի կարծուէր՝ որ մեր ազգն այս նիւթիս մէջ ևս կը հետեւէր միւս քրիստոնէից: Աակայն իրողութիւնը ճիշդ հակառակն է: Եւ ահա թէ ինչ կերպով կը ներկայանայ հարցն անոնց քով՝ սկսեալ Եկեղեցւոյ ծագմանէն:

1. Մատնիչ Յուղայի կորստեամբ՝ պէտք էր նշանակել անոր փոխանորդն առաքելական խմբին մէջ: Ազոր համար հաւացուած էին ի միասին առաքեալը և միւս եղբարը, ժողով մը «հարիւր և քսանից», որոց առջեւ կանգնեցաւ առաքելոց զլուխը Պետրոս, և առաջարկեց ընտրել մին անոցմէ՝ որոնք Յիսուսի քարոզութեան ամբողջ շրջանին անոր ականատես և երկոտասանից կենակից եղած էին: Ազոցմէ յառաջ կոչեցին երկու հոգի, Յովսէփու Մատաթիա, աղօթեցին՝ որ Աստուած յայտնէ անոցմէ ուզածը, յետոյ «ետուն վիճակս նոցա, և ելանէր վիճակն Մատաթեայ, և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն¹»: Ուրեմն այդ տեղ՝ քրիս-

տոնէութեան խանձարըոց մէջ՝ ընտրական ծեն ընդհանրական է արդէն, կը կատարուի գործակցութեամբ եկեղեցւոյ առաջնորդաց ու հաւատացելոց։ Աակայն հոդ խնդիրը կը դառնար բարձր պաշտօնատարի կամ առարերյ մը շուրջ, որ կը համեմատի եպիսկոպոսին։ Խակ երբ եկան ստորնազոյն պաշտօնէից՝ եօթն սարկաւագաց ընտրութեան, առաքեալը զայն թողուցին «աշակերտաց բազմութեան», ըսելով. «Ենտրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս եօթն»։ Այդպէս ալ ըրին, և տարին «կացուցին առաջի առաքելոցն», որոնք աղօթեցին ու ձեռնազրեցին զանոնք¹։ Այս էր տարբերութիւնն երկու դասակարգերու ընտրութեան մէջ։

Կ'անցնինք ուրիշ պատմական օրինակաց, որոց մէջ դարձեալ պահուած կը գտնենք հաւաքական ընտրութեան եղանակ՝ թէ եպիսկոպոսաց և թէ մետրոպոլտաց համար, որով խառն ալ պիտի նկատենք զանոնք։ Յակորոս տեառնեղբօր մասին կը պատմէ Եւսեբիոս՝ թէ «ընկալաւ յառաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղեմի»։ Անոր յաջորդին համար «ասի բան», կը զբէ նոյն պատմիչը, թէ «առաքեալըն և աշակերտց

1. Գրծը. Զ, 2-6. — 2. Եւսեբ. Պատմ. Եկ. Բ, իզ.

տեառն մերոյ՝ որ մնացեալը էին ի ժա-
մանակին, ժողովեցան ի միասին յամե-
նայն կողմանց, հանդերձ ազգականօք
տեառն մերոյ՝ որ ըստ մարմնոյ . . . և
արարին խորհուրդ . . . և ամենեցեան միա-
բան միով խորհրդով հաւանեցան» ըն-
տրութեան Շմաւոնի կղէոպեանց¹։ Պողի-
կարպոս կենակից առաջելոց, «ի ձեռնա-
զրութենէ նոցա ընկալաւ նա զեսիսկո-
պոսութիւն Զմիւռնացւոց եկեղեցւոյն²»։
Նոյն քաղաքին ծերունի Նարկիսոս եպիս-
կոպոսին օգնական կ'ընտրուի Աղեքսան-
զրոս՝ «միաբան հաւանութեամբ սահմա-
նակից եպիսկոպոսացն³»։ Հռոմայ Փա-
րիանոս հայրապետի ընտրութեան համար
«ժողովեալ էին եղբարբ ի միասին յե-
կեղեցւոջ»։ Անոնց մէջ էր և Փարիանոս,
պարզ հաւատացեալ մը, ազարակէն նոր-
դարձած, որոյ վրայ կ'ըսուէր՝ թէ հոն
խորհրդական աղաւնի մ'է եկեր կանգներ,
— ինչ որ յետոյ պիտի պատմուի նաև
ու. Բարսղի ու մերս Ներսիսի մասին. —
և «ընդ այն տեսիլ շարժեալ ժողովուրդն
առ հասարակ», միաբերան կ'աղաղակեն՝
թէ «Արժանի է դա. և վաղվաղակի առեալ
զնա՝ նստուցին յաթոռ եպիսկոպոսու-

1. Եւսեբ. Գ, ժա. — 2. Նոյն՝ Գ, լու. — 3. Նոյն՝
Զ, ժա.

թեան¹» : Հոս յայտնապէս իսկ կը տես-
նուի եպիսկոպոսաց ու ժողովրդեան գոր-
ծակցութիւնը : Եւ այս բոլոր օրինակները
կը վերաբերին Ա-Գ. դարերուն, թէպէտ
պատմիչը կը զրէր 325ին : Խնդրոյս հնա-
զոյն վկայ մը, ո. կղեմէս Հռոմայ, առ կո-
րընթացիս Ա. թղթին մէջ, զրուած Ա. դարու
վերջերը, կ'ըսէ՝ թէ առաքեալք այնպէս
սահմանեցին՝ որ եպիսկոպոսն ընտրուի ե-
պիսկոպոսաց ժողովէն, և «ամենայն եկեղե-
ցին հաւանեսցի²» . այսինքն տեղւոյն քրիս-
տոնեայ հասարակութիւնը : Աստի չի տար-
բերիր իսկութեամբ վկայութիւնը ո. կի-
պրիանոսի, վախճանեալ 258ին, թէ «յաս-
տուածային տուչութենէ և յառաքելական
պահպանութենէ խնամով պահեալ կայ, ...
զի վասն ըստ օրինի կատարելոյ զՃեռ-
նաղրութիւնս, առ ամբոխին՝ որում առաջ-
նորդն ձեռնադրի, զումարեսցին եպիսկո-
պոսը մերձաւորք այնը գաւառի, և ըն-
տրեսցի եպիսկոպոսն առաջի ամբոխին»,
քննելով անոր կեանքն ու զործերը : Նոյն-
պէս կատարուեր էր Լեզիոնացւոց Սարի-
նոս եպիսկոպոսի ընտրութիւնն ալ, «հա-
ճութեամբ, կ'ըսէ, ողջոյն եղբայրութեանն,
և դատաստանաւ եպիսկոպոսաց՝ որ այժմս
ժողովեալ էին, որք և թուղթս առաքեցին

1. Եւուր. Զ, իթ. — 2. Patr. Graeca, I, 297.

առ ձեզ զնմանէ, և ետուն նմա զեպիս կոպոսութիւնն, և ձեռնադրեցին զնա փոխանակ Բասիլիզեայ¹։ Այս ձեն էր ուրիմն՝ որ ի զործ կը դրուէր ամենուրեք։

2. Սակայն Եկեղեցւոյ առաջնորդը երթալով տեսան՝ որ ամրոխին մասնակցութիւնը միշտ օգտակար արդիւնքներ չէր տար, զի ժողովուրդն ի վիճակի չէր միշտ կշռելու ընտրելոյն արժանաւորութիւնը։ Այս պատճառաւ Նիկիոյ ժողովը 325ին փորձեց վերապահել ընտրութիւններն եւ պիսկոպոսաց զասուն, սահմանելով այս պէս. «Ի դէպ է յոյժ արդարե՝ զի եպիսկոպոս կարգեսցի յամենեցուն (եպիսկոպոսաց) որ են ի զաւաոին։ Այլ թէ զժուարին իցէ այն վասն կարեոր ինչ հարկի կամ հեռաւորութեան ճանապարհի, երեք եեթի նմին տեղւոջ զումարեալը, և բերեալ զհաւանութիւն և զթուղթո ի բացեայ եղելոցն, այնպէս կատարեսցեն զընտրութիւնըն, և ընդ նմին զհաստատութիւնն ընկալցին ի մետրոպոլտէ զաւաոին» (կան. դ)։ Ինչպէս կը տեսնենք, լոկ եպիսկոպոսաց թողլով ընտրութիւնը, լոելեայն կը մերժէր ժողովրդեան մասնակցութիւնը։ Նոյն սահմանը՝ նոյն ծածուկ լեզուով՝ կրկնեցին նաև Անտիոքայ ժողովն 341ին

(կան. Ժր), Ասրդիկեայն՝ 343ին (կան. զ), և Լաւողիկեայն՝ 381ին (կան. Ժր): Իսկ վերջին ժողովս ուղեց աւելի յստակ ալ խօսիլ, և ըստ «Զէ արժան թողուլ ամբոխին զքնտրութիւն այնոցիկ՝ որ կոչեցիալ են ի քահանայութիւն» (կան. Ժդ)¹: Բայց այդ վճիռները մնացին ձայն բարբառոյ յանապատի, և ընտրութեան հին եղանակը շարունակուեցաւ Եկեղեցւոյ մէջ, կ'ըսէ և կը ցուցնէ օրինակներով Վան Եսալէն²:

Յ. Նորոյթ մ'եղաւ աշխարհական իշխանութեան միջամտութիւնն ընտրութեանց, երբ 338ին Կոստանդ կայսրն աթոռազուրկ ըրաւ անձամբ Կոստանդնուպոլսի Պօղոս արքեպիսկոպոսը, և անոր տեղ նշանակեց Նիկոմիդիոյ եպիսկոպոսն Եւսեբիոս³: Եւ ո. Աթանասի աքսորանաց առթիւ՝ Աղեքսանդրիոյ աթոռին վրայ յաջորդաբար նստեցուց իւր զրան երիցումը՝ Գրիգոր, ու Գէորգ, որոյ գէմ բողոքեց Աթանաս իւր արդար լեզուով: Եակ Թէոդոս Բ՝ Պրոկոփի ընտրութեան ժամանակ ծագած անհամաձայնութեանց առթիւ՝ իւրովի ոստանին առաջնորդ կարգեց զնես-

1. Pitra, *Juris eccl. hist. et monum.* Romae, 1864. I, 428, 462, 472, 497. — 2. Հմմ. Vacant, *Dict. Théol.* IV, 1258. — 3. Առկրաս, Բ, զ-է:

տորիոսա¹։ Նոյնը պատահեցաւ և ի Հռոմ,
ուր 418 ին առաջին անգամ Անորիոս
կայսրը թիկունք կանգնեցաւ հակառակա-
թոռ Եւլալիոսի, և հրամայեց աքսորել
օրինաւոր հայրապետը Բանիփակիոս։ Յե-
տոյ երկուքն ալ իւր մօտ կոչեց՝ զատելու
համար։ արտաքսեց հակապապը, և զբո-
նիփակիոս հաստատեց աթոռին վրայ։
Այնուհետև կը շարունակեն ու կը բազ-
մանան միջամտութիւնք Պետրոսի յաջոր-
դաց ընտրութեանց մէջ²։ Այս ոտնձգու-
թեանց զէմ վճռեց Նիկիոյ Յ տիեզերական
ժողովը 787 ին՝ իւր Գ կանոնով, եպիս-
կոպոսաց ժողովոյն վերապահելով եպիս-
կոպոսներն ընտրելու իրաւունքը, առանց
միջամտութեան աշխարհիկ իշխանու-
թեանց³։ Նոյն պայքարը շարունակեցիկե-
ղեցին նաև յետոյ՝ աւելի կամ նուազ
յաջողութեամբ։ Բայց մեք այսչափը բա-
ւական համարինք։

Ամփոփելով, Եկեղեցւոյ սկիզբէն՝ եպիս-
կոպոսական ընտրութեանց մասնակցեր
են, ա՝ զաւառին եպիսկոպոսները, բ՝ ըն-
տրելոյն վիճակին ժողովուրդը, գ՝ աւելի
ուշ բաղաքական իշխանութիւնն ևս, մերթ
յարգելով ու մերթ անտեսելով բուն ըն-

1. Առկրաս, Ե, իւ. — 2. Հմմա. Vacant, IV, 2291
— 2310. — 3. Pitra, II, 105 - 6.

տրողաց իրաւունքը : Այժմ անցնինք տես-
նել խնդիրը հայ եկեղեցւոյ մէջ :

Բ. Արշակունեաց շրջան : — 1. Բոլո-
րովին տարբեր հանգամանօք կը ներկա-
յանայ հարցը մեր քով, ուր ընտրութիւնը
սկսան վերոյիշեալ չորս ժողովոց սեղ-
մումներէն յառաջ, յանձին Լուսաւորչին՝
մեր առաջին հայրապետին : Հոդ հայ ազգը
զեռ նոր կը դառնար քրիստոնէութեան,
և ոչ մի եպիսկոպոս չունէր տակաւին :
Հարկ էր ընտրել առաջին կաթողիկոսը :
Տրղատ արքայ՝ իւր կնոջ ու քրոջ հետ
հրաման կու տայ և ի վաղարշապատ կը
հաւաքուին «զօրքն ամենայն» . այսինքն
«մեծամեծը և կուսակալը, գաւառակալը,
պատուաւորը, պատուականը, զօրավարը,
պետը և իշխանը, նախարարը և ազատը,
դատաւորը և զօրագլուխը», որոնք բոլորը
միանգամայն զինուորական էին : Հոն
«խորհուրդ ի մէջ առնոյր թագաւորն ընդ
ամենեսին», և կ'առաջարկէ «զԳրիգոր
հովիւ կացուցանել», որուն կը հաւանին
ամէնքը : Հիմ կը զրուի հոդ ազնուապե-
տական լնտրուրեան մը, որ կանոն կը
դառնայ յաջորդ ընտրութեանց ևս : Առ-
վորարար աւագանին է արքային հետ, և
մերթ վերջինը միայն, — որոյ ձայնն ան-

պակաս ու զօրագոյն է միշտ, — որ կ'ընտրեն հայրապետը, սկսելով արեւմտեան կայսերաց ոտնձգութենէն ալ կանուխ :

Լուսաւորիչ յոգնած պաշտօնին ծանրութենէն, անապատները կը փախչի : Տրդատ դարման մը կը խորհի այդ վիճակին : Երեք իշխան կը յզէ և Յունաց կողմերէն բերել կու տայ անոր երկու որդիքը, կը տանի իրենց հօրը քով, և կը խնդրէ՝ որ «Ճեռնազրեացէ տացէ նմա եպիսկոպոս» զԱրիստակէս, «զոր ճեռնազրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ խր» , այս ինքն փոխանորդ կամ «զործակից եպիսկոպոսակից» , որուն և կը յաջորդէ յետ անոր մահուան¹ :

Տիրան արքայ երբ սպանեց զՅուսիկ, «միաժողով եղեալ մեծամեծը նախարարացն, և ի մի վայր եկեալը, խորհուրդ խորհեցան, հաւանեցուցին զթագաւորն»՝ ծերունի Դանիէլ եպիսկոպոսին տալ աթոռը : Չորս նախարարք զնացին բերին զայն ժողովին առջեւ, և նա այնպիսի կշտամբութիւն մը տեղաց անոնց վրայ, որ փոխանակ աթոռին՝ հոն խել ժողովին մէջ ստացաւ իւր խեղղամահ վախճանն ամբարիշտ արքայէն² : Յետոյ զՓառէն

1. Աղաթ. 641-42. Փաւատոս, Վենետիկ; 1882, 6:
— 2. Փաւս. 38-42.

երէց «համարեցան արժանի» կաթողիկոսութեան,և «կոչեցին զնա առ արքայն»,որ զայն յղեց ծեռնադրուելու ի կեսարիա¹: Եահակայ ընտրութեան համար նոյնպէս «միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ²»:

Եռյնը պատահեցաւ նաև մեծին Նելսոնի: «Ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծը նահապետը ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրօշուց տեալը, ամենայն սատրապը, նախարարը և ազատը, պետը և իշխանը, զօրավարը և սահմանապահը, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդ, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդի»: Հոն արքային քով կանգնած էր իւր սենեկապետը, հազած ազնուական գեղեցիկ պատմուճանը, և ըստ նուծ անոր ականազարդ կամարն ու ոսկեպատեան սուրը: Ներսէս էր նա, ս. Յուսկան թոռը, որոյ ի տես «առ հասարակ ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ Ներսէս լիցի մեր հովիւ»: Սաստիկ ընդդիմացաւ նա՝ իրը անարժան այդ պատույն, և պատմելով իւր չգործած մեղքերը, որոց ի լուր բոլորը կը մարէին խնդալէն: Սահպուեցաւ փոխ ել լեզուն

1. Φ_{mn} , 44; — 2. ζ_{ijl} , 55.

Կաթ. Ընտր. Խօսթ.

և կշտամբել ազգին չարութիւնները։ Թաւագւորին ծիծաղը բարկութեան փոխուեցաւ, կամարն ու սուրը յափշտակեց անոր ձեռքին. հրամայեց՝ ու կապեցին զայն, մազերը խուզեցին, պատմուճանը պատեցին հանեցին ու կղերական զգեստ հագուցին. ապա կոչեցին Փաւատոս Եպիսկոպոսը, որ զայն սարկաւագ ձեռնազրեց։ Ներսէս սմբած՝ կը հնազանդէր մերենարար։ Հայրապետական ընտրութիւնը կատարուած էր¹։

Գնելի անիրաւ սպանման համար Ներսէս զժուեցաւ Արշակայ հետ, որ զայն շնորհազուրկ ըրաւ, և «կացուցին փոխանակ նորա զլուխ ըրիստոնէութեանն» զջունակ². ուր կացուցին կ'ենթազրէ հաւաքական ձեր։ Յետոյ Փատ սպանեց ըզ-Ներսէս, անոր փոխան ինքն իսկ «կացոյց» Յուսիկ Եպիսկոպոսը, և «ետ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն»³։ Իսկ յետ Ասպուրակի՝ «ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զԱմհակ՝ որդի մեծին Ներսիսիսի»⁴. վկայն հեռաւոր և ընտրութեան կերպն անստոյգ։

Այսպէս ուրեմն մեր այդ չորրորդարեան բոլոր ընտրութեանց ու փոփոխու-

1. Փատ. 67-70. — 2. Կոյն. 123. — 3. Կոյն. 226. — 4. Խորեն. Գ, Խթ.

թեանց մէջ հայ եպիսկոպոսունք - ինչ-
պէս ժողովուրդն ալ - որ և է մասնակ-
ցութիւն չունին, այլ լոկ մեծամեծ իշխանք
են՝ որ կը զործեն արքային հետ, և մերթ
սա միայնակ : Յետ Ներսիսի ընտրու-
թեան է որ կը կոչուի Փաւստոս եպս,
ձեռնադրելու զայն : Նոյնպէս Արշակ ըզ-
գունակ ընտրելէն վերջ հրաւիրեց հայ
եպիսկոպոսունքն անոր ձեռնադրութեան¹ ;
Մեր ազնուականութեան այդ վարմունքը,
Հակառակ կաթողիկէ Եկեղեցւոյ սահմա-
նաց, արդիւնք էր անշուշտ մեր կէս հե-
թանոս բարքերուն, որ կ'իշխէին դեռ այդ
զարուն, և հեօփ կը պահէին աւագանին
Եկեղեցական օրինաց ծանօթութենէն ու
պատշաճ մեծարանքէն :

2. Եթէ հայ կղերն արհամարհուած էր,
և անտեսուած իւր կանոնական իրաւունքն
ընտրութեանց մէջ, սակայն կար կեսա-
րիոյ աթոռը, որ Լուսաւորչէն ցՆերսէս
և անզրագոյն ևս՝ զերագահութիւն մը կը
պահէր օրինօք ու զործնականապէս ալ
մեր հայրապետութեան վրայ, հաստա-
տուած դաշամբ, և ուր յետ ընտրութեան
կ'երթային մեր կաթողիկոսունք՝ հաւա-
նութիւն ու ձեռնադրութիւն ստանալու:
Այնքան զօրաւոր էր այդ կապը, որ երբ

Պատ ինքնազլիսարար զՅուսիկ զբաւ Ներ-
սիսի աթոռին վրայ, Կեսարիոյ արքեպիս-
կոպոսը և Բարսեղ՝ զրկեց զայն եղիսակո-
պոս ձեռնադրելու իրաւունքին, բայ որում
«առանց նորա հրամանի եղեալ» էր կա-
թողիկոս¹: Տղայտկան էին մեր վերջին
բանասիրաց ոմանց Կեսարիոյ այդ իրա-
ւունքն ուրանալու արուեստական ճիզերը,
զորս առիթ ունեցայ ջրելու՝ յաւերժա-
քար՝ ներքին և արտաքին փաստերու տա-
րագով մը, պատմութեան այդ և ապագայ
թշնամիաց առջե փակելով փախստեան
ամէն գուռ²:

Մեծահանդէս ու հետաքրքրիչ եղեր է
միշտ երթն ու դարձն ի Կեսարիա նոր-
ընտիր հայրապետին, որ յաչս ազգիս կը
նկատուէր «այր մեծ և պատուական, զը-
լուխ և վարդապետ, առաջնորդ աշխարհի
և թագաւորութեան միոջ»: Եռաւա-
ւորչին կ'ընկերէին տասնուվեց երեսլի իշ-
խաններ, նշանակուած տոհմային անուն-
ներով, իրենց «կառօք և երիվարօք, զօ-
րօք, նշանակօք, իւրաքանչիւր գնդօք»: Եւ
զինքը նստուցին «յոսկիապատ կառն
արքունականս», որուն լծուած էին նոյն

1. Փաւս. 226: — 2. Կարեւոր խնդիրներ, 182—223:
— 3. Փաւս. 104, 88:

կառաց յատուկ սպիտակ ջորիներ: Կը տա-
նէին նաև վկայական թուղթ մը Տրդա-
տայ և Հայոց կողմանէ, որով կը խըն-
դրէին՝ որ «մեզ գԴրիզորդ տեսուչ և վար-
դապետ առաջնորդութեան աստուածազը-
նաց ճանապարհացն և հովիւ և բժիշկ կա-
ցուսջիք»: Միանգամայն առած էին թան-
կագին պարզեւներ կապաղովկիոյ վիճա-
կին եկեղեցեաց համար: Ի դարձին՝ ար-
քայն «առեալ զզօրս իւր», թագուհւոյն և
ըրոջը հետ ընդ առաջ զնաց հայրապետին
մինչև Եփրատայ տփունքը, ցնծութեամբ
հանդիպեցաւ անոր, և ընդունեցաւ կեսա-
րիոյ մետրոպոլտին ընծայական թուղթը,
յորում կ'ըսէք՝ թէ Հայոց դարձին հա-
մար «առ Աստուած հայր ամենայնի զո-
հութիւն մատուցաք, շնորհելով Գրիզորի
զանապական պարզեւս սուրբ Հոգւոյն» և
այլն¹: Այս կրկնակ թղթերը՝ խնդրողաց
ու ձեռնազրողին կողմանէ, որոց ազա-
թանգեղեան պատճենից վաւերականու-
թիւնը կրնայ վիճելի լինել, սովորական
էին եպիսկոպոսաց ձեռնազրութեան առ-
թիւ, և մեր քով ալ յաճախ յիշուած են:

Տիրան արքայ ս. Յուսկան ուղեկից
տուաւ նոյնպէս «զմեծամեծ նախարարսն
ըստ սովորութեան օրինակին», որ էին

տասներեք հոգի՝ նշանակուած յանուանէ, և ընտրեալը բազմեցուցին զարձեալ «յար-բունական կառան»։ Ի դարձին՝ թագու-որին «ամենայն բանակօքն բազմութեամբ» զնաց ընդունել զայն, և տարին «նստու-ցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յա-թոռ հայրապետական» Աշտիշառու կա-թողիկէին մէջ։ Փառէն ձեռնազրուելու զնաց «պատարազօք և հրովարտակօք և ճոխ իշխանօքն»։ տասնուչորս հոգի։ Ետ-հակ՝ տասներեկու իշխաններով և «մեծա-շուր պատուով»։ Եւ Ներսիսի հետ կա-յին ութ երեելի նախարար։ «բազում ընծայիւր և մեծամեծ պատարազօք և հա-ւատարիմ հրովարտակօք»։ Ի դարձին՝ Արշակ զնաց մինչեւ Առիւծ լեոր, ուր հանդիպեցան իրարու «մեծաւ լրջութեամբ, լցեալը օրհնութեամբ ողջունիւն»։ և եկան «յաթոռ հայրապետութեան»։

Գ. Ե-Թ. դարերուն մէջ։ — 1. Արշա-կունեաց զահը տապալեցաւ 429ին, և Հայաստան ընկաւ Պարսից լծին ներըն, որոց թագաւորը ուզեցին մեր արքայից իրաւունքն ալ սեպհականել հայրապետա-կան ընտրութեանց մէջ։ Այդ նորութիւնը սկսաւ հետեւեալ կերպով։ Ա. Ամհակ երբ

1. Փառ. 29-30. — 2. Կոյն 44, 45. — 3. Կոյն 71-73.

ընդդիմացաւ Արտաշիսի գահընկեցութեան, զոր կը պահանջէին մեր նախարարք, անոնք զնացին մատնել արքայն, հայրապետն ու հայրենիքը՝ Պարսից։ Վռամ ազգիս երկու զլուխներն իւր զուոը կոչեց, և պահանջեց կաթողիկոսէն հաւանիլ Արտաշիսի անկման։ Երբ նա մերժեց, «այնուհետեւ հրաման տայր վաղվաղակի իրաց առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշիսէ։ Ընդ նմին և զտունն կաթուղիկոսական ի սրբոյն Ասամակայ յարքունիս ունել»։ Նախարարք կանխաւ խոստացերէին սրբոյն աթոռն արձկեցի Սուրմակերիցուն, և իրենք իսկ «նստուցին զնայաթոռ կաթուղիկոսութեան Հայոց»։ Քիչյետոյ իշխաններէն ոմանք անոր դէմ զարձան, և իրենց անմիաբանութեան վերջաւալու համար՝ «խնդրեցին այնուհետեւ իւրեանց . . . յարքունուստ կաթուղիկոս, և թագաւորն վռամ ետ նոցա զԲրքիշոյ զոմն անուն, ասորի յազգէ այր»։ Քրիստոնեայ աթոռի մը շնորհուած։ Մատնիշներդ յետոյ զզուելով ասորւոյն անբարոյ ընթացքէն, մերժեցին և ուրիշ մը խնդրեցին անոր տեղ։ Արքայն «հաւանեալ կամաւ խնդրոյն նոցա, տայր նոցա զարձեալ կաթուղիկոսայլ ասորի, որում անուն էր Շմուէլ¹»։

1. Դ. Փարպեցի, Վենետիկ, 1873, 64-69, 70, 72-74.

Բառ իս՝ հո՛ս պէտք է փնդոել պարախիկ
միջամտութեան ծագումը, և զժուարին է
հաւատալ Խորենացւոյն, որոյ համեմատ
Շաղուն Գ. մեր Խոսրով Գ. թագաւորը
գահազրկելու ժամանակ՝ զա. Այսակ ալ
«վրդովեաց» պատուին, որպէս թէ Հայոց
արքային յանցանաց մին եղեր է՝ «յան-
հրաման կարգել յեղիկոպութիւն զմեծն
Այսակ¹»։ Բայց Խոսրովու զործը շարու-
նակութիւն էր հնոյն, որոյ փոփոխու-
թիւնը չէ յիշուած մինչեւ իւր օրերը, և
Փարագին ալ չի զիաեր Շաղոյ պա-
հանջը, և ոչ Այսակայ հրաժարեցումը,
երբ կը պատմէ Խոսրովու զահազրկու-
թիւնը²։ Միանգամայն Այսակ կը շարու-
նակէ հովուել միշտ, տուանց յիշուելու
Խորենացիէն իւր վերսախին հաստատու-
թիւնը պաշտօնին մէջ։

2. Պարսից շնորհած երկու կաթողի-
կոսներէն տաղտկացած³, մեր իշխանը ջա-
նացին այնուհետեւ ի զործ զնել իրենց
աւանդական իրաւունքն ընտրութեան մէջ։
Արդէն երկու ասորիքը «հակառակաթոռ»
համարուեցան սրբոյն՝ Հայոց կողմանէ⁴.
այնպէս որ յետ հանգստեան սրբոյն՝ Այշ-
թոց անոր տեղը կ'անցնի, «և զվերակա-

1. Խորեն. Գ., ձ։ — 2. Փարա. 32-33. — 3. Կոյն.
75. — 4. Խորեն. Գ., կե։

ցութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր»:
մինչև վեց ամիս, ուր և վախճանեցաւ¹:
Եւ հոդ չկայ արքայից արքային հրամանը,
այլ կը համարիմ՝ թէ զինքն ընտրեցին այդ
պաշտօնին վահան Ամատունի հազարա-
պետն և աւագանին, որոնք յետ մահուան
վարդապետին եւս կը պատմուին «վերակա-
ցու տեղապահ յայտ արարեալ Հարցն կա-
տարելոց» զՅովսէփ², որոյ տեղապահու-
թիւնը կեղծիք մ'էր, Պարսիկները խարելու
և անոնց հաւանութիւնը չխնդրելու համար:
Աւզգակի կաթողիկոս ընտրեցին Հայք և
զՓիւտ, յայտնի Պերողի խօսքէն՝ թէ «մին-
չև ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ
հրամանի կալեալ է, և ծառայ մարդիկ
են՝ որոց քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ
է, և ոչ ինչ յինչն ունիս վստահութիւն»:
Եւ երբ մերժեց արքային պահանջած ու-
րացութիւնը, նա վճռեց. «Կաց ուր և
կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսու-
թեան հեռի ես և չէ քո³»: Այդպէս ալ
եղաւ, սակայն զիտնալու ենք՝ որ անոր
շնորհազրկութեան մէջ ուրացող հայ իշ-
խանաց մատը կար⁴, ինչպէս պատահեցաւ
և ս. Ասհակայ: Ապա թէ ոչ՝ Պերող նոր

1. Կորիւն, Վենետիկ, 1888, 26. — 2. Կոյն՝ 27
— 3. Փարպ. 346-50. — 4. Կոյն՝ 341-42.

չեր իմանար անոր կաթողիկոսութիւնը, որուն անհրաման լինելուն աչք զոցած էր:

Յ. Ամրատ Բագրատունին՝ մարզպան Վրկանայ, 607ին տեսնելու կու զայ իւր հայրենիքը, զոր կը սիրէ միշտ: Եւ որովհետեւ շատ ալ հաւատարիմ է իւր տիրոջ՝ Պարսից արքային, զալէն յառաջ հրաման կը խնդրէ շինել Դունի և Գրիգոր Եկեղեցին, և ընարել Մովսէս եղիվարդեցւոյն յաջորդը: Հազիւ հասած՝ «առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեցեն ի վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն և առաջնորդ փրկութեան իւրոյ. և նըստուցին զԱբրահամ զմիշառնեաց եղիսկոպոսն յաթոռ հայրապետութեան¹»: Իտրագեցեն, նստացին, որո՞նք՝ յայտնի չէ: Ինք կ'երեկի թէ զուրս կը մնայ, իւր պաշտօնն օտար երկիր լինելուն համար:

Թշրոց զիրքն ունի «կանոնը» և «Զեռնարկ» վերնագրերով երկու դաւանական գրուածներ², որոց առաջնոյն զլուխը կը կարգանը. «կանոնը որ եղան ի Դունի (606ին), մինչդեռ մտածութիւն էր ժողովերոյ եղիսկոպոսացն՝ կարգել կարուղիկու Հայոց յետ մահուանն Մովսէսի կաթուղիկոսի. և խափանեցան այն անգամ»:

1. Աերէսս, Կ.պոլիս, 1851, 102. — 2. Գր. բղրոց, Տփղիս, 1901, 146, 149.

Բայց բնագրին մէջ կաթողիկոսական խընդիրն ոչ միայն չէ յիշուած, այլ կ'ըսուի՝ թէ տեսնելով՝ որ շատերը յարած էին քաղկեդոնականաց, «վասն որոյ ժողովեցար եպիսկոպոսքս այս . . . հաստատել տահման կանոնականս յաղազս այնպիսիացն»¹։ Ուրեմն ժողովիդ գումարման բուն նաղատակը կրօնական էր, ոչ ընտրական։ Խոկ միւսին վերնագիրն է. «Զեռնարկ՝ զոր խնդրեաց Ամբատ Վրկան մարզպան ցայն եպիսկոպոսուն, որի դարձեալ ժողովեցան նորին հրամանաւ ի Դուին (607ին), կարդել կարուղիկոս Հայոց՝ յետ մահուան Մովսէսի. և զայս ձեռնարկ ետ նոցա»։ Ասոր բնագրին մէջ եւս չկայ ակնարկութիւն ընտրութեան, այլ կ'ըսեն՝ թէ «յայս եպիսկոպոսաց . . . որ ի ժամուն ի Դունի ի առրր եկեղեցոց դիումար՝ ձեռնարկ խնդրեցէց վասն սուրբ և ուղղափառ հաւատույ»։ Կը հետեւ՝ որ այդ զոյգ վերնագրերը, որոց մէջ կ'ակնարկուի հայրապետական ընտրութեան՝ կատարելի եպիսկոպոսաց ժողովէն, նոյն մատենին միջնաղարեան խմբագրողին շարադրածներն են, պատմական երկարաբան ձևէն ալ յայտնի, և ընտրական եղանակն իւր զարու զաղափարին արձագանգը կը թուի։

Բայց ստոյգ է՝ որ նոյն մարզպանի օրերուն կը սկսի նաև երեւիլ եղիսկոպոսաց մասնակցութիւնն իշխանաց՝ կաթողիկոսի ընտրութեան մէջ։ Երբ 591ին Մովսէս եղիվարդեցին բաժնուեցաւ Եկեղեցին, քաղկեդոնական Հայք ուղեցին իրենց զատ հովաւապետ մ'ունենալ, կ'ըսէ Յոհան մայրագոմեցին՝ որ կ'ապրէր Եղարուն։ Այն ժամանակ կարնոյ եղիսկոպոսը թիւղորոս «Կա հրաման ժողովել եղիսկոպոսացն Հայոց որ ի նորայն կողմանն՝ ի կարնոյ քաղաք, և տաէ։ Պարտէ մեզ առնել կաթուղիկոս։ Եւ ածին քզիովհան ոմն սիւնական, ձեռնադրեցին և հնազանդեցան քաղկեդոնական կրօնիցն»։ Հոս ուրեմն զուտ եղիսկոպոսութիւնն է ընտրող։ Չենք զիտեր՝ տռաջին փորձն էր այդ, թէ ուրիշներ ալ եղած էին արդին։

Գալով միւս բաժանեալ կամ պարսկային կողման, Աերէսու՝ որ կը զրէր նոյն Եղարուն, կը պատմէ թէ յիշեալ Արմատաց որդին Վարագականի մարզպան՝ 628ին դառնալով ուղևորութենէն, թափուր կը զտնէ հայրապետական աթոռը՝ կոմիտասաց մահուամբ, և «խորհուրդ առնէր ընդ ամենեցուն՝ տեսանել զոմն արժանաւոր։ Յայնժամ առաջադրութեամբ

Թէոդորոսի Ռշտունեաց տեառն ընտրեցին» զՔրիստոափոր Բ: Շարժողն ու ընտրելին ցուցնողն իշխաններ են, այս անգամ առանց հարցնելու Պարսից արքային կամքը: Իսկ որո՞նք «ընտրեցին» զայն՝ մութ կը մնայ հող, բայց յետոյ կը պարզուի: Քրիստոափորի ընթացքն ու սուր լեզուն կը սարտուցանեն զամէնքը, և յետերկու տարւոյ «ժողովիալ ամենայն եպիսկոպոսուն և իշխանս, արարին քննութիւն», յանցաւոր գտան, և «արձակեցին զոմանս յեպիսկոպոսաց անտի»: Որ ճգեցին զինքը, «և անդէն փութանակի նստուցին կաթուղիկոս զԵզր ի Նիկ զաւառէ¹»: Աւելի կամ նուազ յատակ օրինակներէդ յայտնի է՝ որ մեր եպիսկոպոսական դասը ՚Ի-Ե դարերուն իրեն զլացուած իրաւունքը Զդարլէն վայելել կը սկսի մասամբ, բաժնելով մեր իշխանաց հետ, և շնորհիւ ասոնց մէջ տիրող կրօնական նոր բարգաւաճման ու նորակազմ հոգեբանութեան:

Այդ նորոգումը կամ կ'ընդհատուի, և կամ աւելի հաւանօրէն կ'անգիտանար զայն Յովհաննէս պատմիչը, երբ ՚Ներսէս Շինողի համար կը զրէր՝ թէ 641ին «Թէոդորոսի Ռշտունեաց տէր և այլ նախարարք Հայոց հանդերձեցին կացուցանել յախոռ

հայրապետութեան փոխանակ Եղրի», և
նա վախելով այդ պաշտօնէն՝ փախաւ, և
«ապա յոզոքական բանից և ի սաղրելոյ
նախարարացն հնագանդեալ հանգարախիւր»
և յանձն առաւ¹ Հոս հայիսկոպոսունք
դարձեալ կ'անյայտանան, իսկ Աերէսս
փոխանակ այդ անազան տեղեկութեան՝
կը շատանայ բաելով՝ թէ «յաջորդեցաւ»
Ներսէս աթոռը²:

4. Աեր իշխանք Ե-Լ գարերուն փոքր
ի շատէ վայելելով Պարսից համակրու-
թիւնը, յաջողեցան իրենց պահել հայ-
րապետական ընտրութիւնը, կամ անոր
մէջ իրենց ունեցած բաժինը, ինչորէս նը-
կատեցինք: Բայց արարական բռնութիւնը,
որ Ե գարէն յաջորդեց պարսկական լծին,
վերստին ցնցեց ազգին իրաւունքը, իւր
աւերիչ և ապականիչ ձեռքը մխելով նաև
այս խնդրոյս մէջ: Դմբախտաբար մեք բա-
ւական օրինակներ չունինք այս շրջանիս
ընտրութեանց, որպէս զի կարենանք ընդ-
հանուր հետեանքներ հանել: Ահա ինչ որ
պատմութիւնը կ'աւանդէ: Սուլիման ոստիւ-
կանը կար, որ մեծ վստահութիւն ունէր
Աղձնեաց Սիոն հայիսկոպոսին սրբութեան
վրայ: Երբ Տրդատ Բ վախճանեցաւ, «իմա-
ցեալ ոստիկանն՝ վաղվաղակի առաքէ ի

ինդիր եպիսկոպոսին Ախոնի, և ածեալ՝
կացուցանել զնա հրամայէ յաթոռ հայ-
րապետութեան¹» 767 թուին։ Ինը կը
նշանակէ ընտրելին և Հայք կ'ընդունին՝
ըստ վկայութեան անազան պատմչին, որոյ
տեղեկութիւնը թէ ուստի՛ էր՝ յայտնի չէ։

Աակայն աւելի մերձաւոր է իւր զրածին
Դեռնդ, որ կը պատմէ Դունի հրամատար
Ավբեղլայի համար՝ թէ կը կողոպտէր եկե-
զեցիներն իրենց բոլոր զանձերէն։ Յետոյ
կը դարձնէ զանոնք մասամբ, «մինչև յա-
ջորդել յաթոռ հայրապետութեանն զԱտե-
փանոս (Ա, 788ին), որ բազում կաշառօք
յաջորդեալ ի հայրապետութեանն աթոռ,
վատնեաց զամենայն ինչս և զստացուա-
ծըս, մինչև եղել թողութիւն գիւղից և
ծառայից և պարտուց²։ Իը թուի ըսել՝
թէ Ատեփանոս չյաջորդեցաւ թոյլտուու-
թիւն ստանալ բազմելու հայրապետական
աթոռը, մինչև որ չլեցուց ազահ արա-
բացւոյն որկորը, և ազատեց երկիրն ալ՝
փրկանք տալով անոր։ Արաբացիք միայն
կաշառի լեզուն կը հասկանային։

Բայց հոս ալ Արաբացւոց միջամտու-
թիւնը բացարձակ չէ, և երբեմն անոնց
տեղ մեր իշխանք կը գործեն։ Յովհաննէս
ովայեցի, ընտրուած 833ին, իւր թշնամի-

1. Յ. Կ. 136. — 2. Դեռնդ, Պետր. 1887, 170.

ներն ունէր, որոնք կը պղտորեն Բագարատ
Բազրատունի իշխանաց իշխանի միտքն
անոր մասին, և նա «զրէ հրովարտակ առ
ամենեսեան՝ ի բաց կալ յընդունելոյ զհօ-
տապետն, ի մտի եղեալ այլ ևս կացու-
ցանել հայրապետ ըստ խրումն ձեռների-
ցութեան» : Կաթողիկոսը կը բանազրէ իշ-
խանը, և կ'երթայ կը ծածկուի Այրի-
վանից լուսութեան մէջ : Ամբատ սպարա-
պետ, Գրիգոր Ախանի և միւս նախարարը
լսելով զայդ՝ կը վրզովին, և «համագունդ
ի միասին եկեալը, և ժորով եղիսկոպոսաց
արարեալ» , կը ստուգեն հայրապետին ան-
մեզութիւնը, և «հաստատեն դարձեալ յա-
թոռն սրբութեան զայրն Աստուծոյ» , հա-
կառակ կամաց Բագարատայ¹ : Հոս իշխանը
և եպիսկոպոսները վերստին խոսն են :

Դ. Բագրատունեաց շրջան: — Մեր ազ-
գաշէն ու եկեղեցաշէն Բազրատունիք ոչ
միայն նորոգեցին եղիսկոպոսաց երրեմն
ստացած իրաւունքն ընտրութեանց մէջ,
այլ աւելի ևս ընդլայնեցին զայն, ի սկզ-
բան իրենց իշխանութեան՝ անոնց թողլով
նշանակել Լուսաւորչի աթոռին վրայ զա-
նոնք՝ զորս յարմարագոյն կը դատէին: Այսպէս Ասողիկ կ'աւանդէ՝ թէ 805ին
«սպարապետն Ամբատ հրամայէ ժողովել
եղիսկոպոսաց և ձեռնազրել կաթողիկոս

զջարարիս¹»։ Յայտնի է՝ որ Ամբատայ հրամանը ժողովման կը վերաբերի, և կապ չունի ընտրելոյն անձին հետ, որ եպիսկոպոսաց ազատ ընտրութեան թողուած կը թուի բացատրութեանդ մէջ, և որոց հետ ուրիշ ոչ ոք կը մասնակցի։

Բայց երբ Բագրատունիք իրենց զլուխը կ'անցնեն Հայաստանի թաղը, իրենց մտաց մէջ կը զարթնուն նաև նոյն թագին հին իրաւունքները։ Եւ Մաշտոցի մասին կը պատմուի՝ թէ անոր առաքինակրօն վարուց «հաճեալ հաւանեալ բագաւորե (Արմատ) և գահամեծար իշխանքն և պատուական արք ազատք, ... կացուցին զնա յաթոռ ու Լուսաւորչին²»։ Նոյն կերպով կ'ընտրուի նաև Մաշտոցի յաջորդն ու պատմիչը, «թերեւս ոչ կարացեալ դիմակ զոլ հրամանի արբային և կամ այլոց ևս նախարարակոյտ բազմուրեաննե³»։ Արդեօք այդ ընտրութեանց մէջ եպիսկոպոսութիւնը բնաւ անմասն էր, թէ պատմիչը զանց կ'ընէ յիշել՝ ազնուականութեան հզօրագոյն ձայնին քով, որ աւելի ազգեցիկ կը հանդիսանայ նուաճելու ընտրելոյն կամ ընտրելոց ընդդիմութիւնը։

Այդ հարցումն ըրի, որովհետև հետա-

1. Ասողիկ, Պարիս, 1859, 111. — 2. ՅՀ. ԿՊԴ. 229. — 3. Նոյն՝ 230.

զայ օրինակաց մէջ սովորաբար անպակաս կը տեսնենք եղիսկոպոսաց մասնակցութիւնը թագաւորին հետ, մինչ ազատանին հազիւ երբեք կ'երեւի։ Այսպէս 941ին Անանիա մոկացին կ'ընտրուի «հաշտեռարեմբ սոցա, (որ են Գաղիկ Արծրունի և Արաս Բագրատունի թագաւորը), և սոցին բազազան զարմիցն, և համօրեն եղիսկոպոսաց և վանականաց և այլ ճգնաւոր մենաւորաց առաջնորդից հայցմանց և միաձայն բողոքանաց», ինչպէս կը պատմէ ընտրեալն ինքնին¹, և ուր կը պակսի ժողովուրդը միայն։ Եոյնպէս 969ին բաղկեղոնական վահանիկ կաթողիկոսին դէմ «ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի բաղաքն Անոյ, տէր Խաչիկ Արշարունեաց եղիսկոպոս, և հայր Պօղիկարպոս կամբջաձորոյ վանական, և հայրն Արքովիս՝ Հոռոմոսի վանաց վանական, և հայր Ատեփանոս՝ Աեանայ վանաց վանական, և այլ եղիսկոպոսունք և հարք բազումք», որոց երկիւղէն վահանիկ փախաւ ի վասպուրական։ «Խակ ժողովին՝ կամակցուրեամբ Աշոտոյ շահանշահի կաթողիկոս հաստատեաց Հայոց զԱտեփանոս վանական Աեանայ²։ Հոս կան կրօնականք ու թագաւորը միայն, և կը պակսի ազատանին։

972ին՝ «Հրամանաւ թագաւորին որ
 (Աշոտ) Աղորմածն կոչիւր՝ ժողովեալ ըն-
 տրերց արանց (որ կ'իմացուին ազնուա-
 կանիք) և եպիսկոպոսաց սրբոց, կացուցա-
 նեն յաթոռ հայրապետական» զիսաչիկ
 Ա¹: 992ին «Գաղիկ (Ա) արքայ Հայոց՝
 կացոյց կաթողիկոս Հայոց զտէր Սարգիս,
 . . . ժողով եպիսկոպոսաց արարեալ՝ որ
 յաշխարհէս Հայոց և որ ի Յունաց կող-
 մանէն, որոց զլուխ տէր Սահակ՝ Արշա-
 րունեաց եպիսկոպոս²»: Այս ժողովը զուտ
 եկեղեցական է: 1037 թուին՝ հակառա-
 կաթոռ Դիոսկորոսը ձգելու և զՊետրոս
 իւր աթոռը դարձնելու համար՝ «Լինէր ժո-
 ղով մեծ ի քաղաքն Անի՝ եպիսկոպոսաց,
 հայրապետաց, կրօնացորաց, վարդապետաց,
 ազատաց և իշխանաց իրրեւ չորք հազա-
 րաց³»: Ուրեմն խառն ժողովով, հակառակ
 հախորդին:

1065ին Գրիգոր Վկայասիրի ընտրու-
 թեան համար կարուց թագաւորը Գաղիկ
 «ժողովէր զհարս Հայոց առ հասարակ, և
 միարան համակամութեամբ . . . յառաջ
 կոչեն զվահրամ» , որ փորձեց հրաժարիլ,
 և որոց «ամենեցուն բռնադատեալ» զայն,
 կու տան անոր Լուսաւորչի անունն ու

1. Կիրակոս, Վենետիկ, 1865, 49. — 2. Ասողիկ, 250-51. — 3. Մաթ. Ուսհայեցի, Երազմ. 1869, 89.

աթոռը։ Այդ պահուն Անոյ և կարուց մեր
թագաւորք ու հայրապետը պահպուխտ են
Յունաց տէրութեան մէջ, և յետ մահուան
Պետրոս Գետաղարձի՝ «թագաւորք Յու-
նաց ոչ տային թոյլ զնել զոր կաթողիկոս,
ստկս անառաջնորդ մնալոյ ազգիս մերոյ,
և այնր ազագաւ յինքեանս դառնալոյ»
եկեղեցական պառակտումէն։ Գաղիկ «բա-
զում աշխատութեամբ» յաջողեցաւ կայ-
սերէն հրաման ստանալ ընտրելու «զո և
կամեացին», փոխարէն շնորհելով անոր
կարսի բերդը, և այդպէս ընտրուեցաւ
վկայատէրը¹։ Սա յետոյ 1070ին ուզելով
միակեցական կենաց նուիրուիլ, և չլսե-
լով թախանձանաց «թագաւորին և իշխա-
նաց Հայոց», իւր հրաժարականը տուաւ
«ցրացատրն Հայոց», որ էր նոյն Գաղիկը,
և անոր տեղ «ընտրեցին զԳէորգ վար-
դապետն»։ զոր ինքն իսկ ձեռնազրեց
ակամայ, զի իրեն հետ պիտի երթար մե-
նաստան, և իրեն առաջարկուած պատուէն
հրապուրուած՝ դասալիք եղաւ։ Գրիգոր
մեկնեցաւ տիրած, բայց իւր ստացած
խարկանը չմարսեց, երկու տարի վերջ
դարձաւ, և հայրապետական աթոռը յետ
առաւ անոր ձեռքէն²։

1. Առիերք, ԺԴ, 17-18. Շնորհաւոյ Բանք լավառ,
Վենետիկ, 1830, 544. — 2. Մաթ. Ուսհայեցի, 280,
247.

Հոդ պահ մը կաթողիկոսը քնակեցաւ
Մուտառասնոյ մէջ, որ յունահայ բռնակալ
Փիլառոսս իշխանին ներքե էր, և ուսկից
խոյս տուաւ Վկայասէրը : Երբ Փիլառ-
ոսս ստիգեց զայն զառնալ իւր աթոռը,
Գրիգոր նամակաւ խնդրեց՝ որ իւր տեղ
ձեռնադրել տայ Գետաղարձի քեռորդին
Ասրդիս : «Յայնժամ հրամայեաց Փիլառ-
ոսսն լինել ժողով եպիսկոպոսաց և հարանց
վանականաց և կրօնաւորաց», որոնք
1076ին ձեռնադրեցին զԱսրդիս ու նստու-
ցին Հոնի բաղաքին մէջ¹:

1079 թուին մեր Բագրատունեաց տու-
նը կը շիջանէր՝ սպանմամբ վերջին պայա-
զատին : Յետ երկու տարւոյ Բարսեղ, ազ-
գական Վկայասիրին, ուսկից Անւոյ եպիս-
կոպոս ձեռնադրուած և հայրապետութեան
խոստումն առած էր երբեմն², գնաց Ա-
ղուանից ոստանը Լոռէ, և խնդրեց իւր
իրաւունքը : Այն ժամանակ «Ժողովեաց
թագաւորն կորիկէ (զարմով Բագրատունի)
զեպիսկոպոսին Աղուանից աշխարհին»
Հաղբատայ մէջ, ուր եկաւ անոնց Ստե-
փանոս կաթողիկոսն ալ, և «ձեռնադրե-
ցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ
որբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշ-

1. Ուսէ. 247, 252-53. — 2. Ասկերք, ԺԴ, 29.

խարհին Հայոց», և նստաւ Անւոյ մէջ¹:
 Տարօրինակ ընտրութիւն մ'եղաւ այդ
 տունց մասնակցութեան հայ եպիսկոպո-
 սաց, և մինչդեռ կենդանի էր Վկայա-
 սէրը, և ի Հոնի կը նստէր Մարզոփ յա-
 ջորդը Թէոգորոս, ընտրուած 1077ին²:
 Հոնի 1085ին ընկաւ Թուրքաց լծին ներ-
 բե, և Փիլառասս հրաւիրեց զԹէոգորոս
 իւր սահմանաց մէջ: Երբ նա չկրցաւ եր-
 թալ, իշխանը Մարաշի մէջ «արար ժողով
 եպիսկոպոսաց և հարանց, և ետուն ձեռ-
 նազրութիւն կաթողիկոսութեան» Վարա-
 գայի հօր՝ Պօղոսի, որ բիշ օրէն ձգեց փա-
 խաւ³: Այսպէս Հայը այդ պահուն ունե-
 ցան միանգամայն չորս կաթողիկոսներ⁴,
 հայրապետական աթոռն անքնական կա-
 ցութեան մը մատնելով:

Այդ բոլոր տեղեկութեանց մէջ բան մը
 կը նշմարենք, կաթողիկոսական ընտրու-
 թեանց մէջ մասնակցութիւնը մերթ ար-
 քայազուն իշխանաց, մերթ նաև այլոց՝
 եպիսկոպոսաց հետ միասին, ապա տակաւ
 անյայտացումն ազնուական դասուն, և կե-
 զրոնացումն եպիսկոպոսաց ու յաճախ նաև
 վանահարց վրայ, ունենալով իրենց հետ
 արքայական ու մերթ բոնացող իշխանի

1. Աւոյ. 265-66. — 2. Կոյն. 254, 259. — 3. Կոյն.
275. — 4. Կոյն. 276.

մը հաճութիւնն ալ: Խոկ ժողովուրդը գեռ
չի տեսնուիր: Այս է Բազրատունեաց շըր-
ջանի ընտրական նկարագիրը, որ թագա-
ւորութեան բարձմամբ զուտ եկեղեցակա-
նաց ձեռքը կը մնայ ժամանակ մը, ինչպէս
1166ին կը վկայէր Շնորհալին. «ընտրու-
րեամբ Աստուծոյ և սատուածայնոց արանց
համօրէն ազգիս, որպէս օրէնն պահանչէ¹»,
և ինչպէս յաթոս ելած էր ինքն ալ:

Ե. Կիլիկիան շրջան: — Անւոյ թագա-
ւորաց ընտրական ոճը կամ ընտրութեանց
մասնակցելու արքունի իրաւունքը կը նո-
րոգուի հոս, այս տարբերութեամբ՝ որ Բա-
զրատունեաց զերը կը ստանձնեն Ռուբի-
նեանը: Մեծն Լեռն 1193ին կը հրաւիրէ
չայ ևպիսկոպոսները Գրիգոր Քարավիթի
ընտրութեան, ինչպէս կ'իմացնէ Լամբրոնա-
ցին, զրելով առ արքայն. «Ճեր աստուած-
պաշտութիւնդ կոչեաց զմեզ ի մանուկ
կաթողիկոսին ձեռնազրելն»²: Բայց հազիւ
տարի մ'էր անցեր, նախանձոտ ևպիսկո-
ներ՝ որ այդ մատաղ հասակը չէին հան-
զուրժեր տեսնել հայրապետական աթոռին
վրայ ու խոնարհիլ անոր, մրով ծածկե-
ցին զայն Լեռնի առջե, որ զայն փակել
տուաւ բերդի մէջ, «մինչև քննութիւն լիցի

1. Կամականի, Վենետիկ, 1878, 133. — 2. Գր.
Տղայի Կամկ. Վենետիկ, 1865, 224.

ճշմարտութեամբ վասն նորա. և ինքն զրեաց թուղթս առ վարդապետս և եպիսկոպոսնեան Հայոց աշխարհին՝ Եթէ զի՞նչ կամք իցեն նոցա վասն այսր¹ » : Ժողով գումարուեցաւ, որուն կոչուած ու ներկայ էր զարձեալ Տարասնի առաջնորդն ալ² : Թէ ի՞նչ վճռեցին՝ յայտնի չէ. միայն թէ օր մը բերդին պարսպին ուղը ջախջախուած զտնուեցաւ մանուկի կաթողիկոսին մարմինը, և ոճրին հեղինակներն անյայտ մեացին³ : Այս տեղ ուշազրաւը՝ հայրապետին վրայ Լեռնի ի զործ զրած իշխանութիւնն է, յարգելով նաև կղերին իրաւունքը :

Հոս վերստին կը պառակտի հայրապետական աթոռը: Յովհաննէս եպս, Ասոյ, որ զործակից եղաւ Քարավիժի բանտարկութեան մէջ, «զի ընտանի էր թագաւորին Լեռնի, բռնացաւ և կալաւ» աթոռը յետ Գրիգոր Ապիրատի⁴: Բնտրութեան համար «ժողովեաց թագաւորն Լեռն շատ եպիսկոպոս, և եղիր կաթողիկոս» նոյն եպիսկոպոսը⁵: Զայս երբ տեսաւ Աերաստիոյ առաջնորդն Անանիա, «չոգաւ նա առ սուլտանն՝ զոր Հռոպոց կոչեն, ետ նմա կաշառ, և նստաւ կաթուղիկոս ի Անաստ⁶ » :

1. Կիբակ. 69: — 2. Գր. Տղայ, 224: — 3. Կիբակ. 69: — 4. Նոյն՝ 70: — 5. Ամրատ, Պարիս, 1859, 114: — 6. Կիբակ. 70.

ինք չկարօտեցաւ եպիսկոպոսաց ժողովին,
որոյ տեղը բռնեց այլաղենին իւր խթած
ուկիներուն ժողովը։ Այդ պահուն երրորդ
կաթողիկոս մ'ալ Աղթամարի մէջ կը նըս-
տէր։ Դա էր Դաւիթ, ծագմամբ Արծրունի,
որ 1113ին՝ երբ վախճանեցաւ Բարսեղ
կաթողիկոս, «արարեալ ժողով եպիսկոպո-
սաց հնզից, ձեռնազրեցաւ կաթուղիկոս»,
իրեն երևակայական իրաւունքներ ընծաւ-
յելով¹։ Բարսղի օրինաւոր յաջորդը Գրի-
գորիս այդ զայթակղութեան առաջքն առ-
նելու համար՝ Անաւ լերան վրայ գումարեց
2500 եպիսկոպոսաց ու հարց ժողով մը,
և մերժուած հռչակել տուաւ աղթամար-
ցիքը, «անէծս ցաւազինս կուտեալ ի զը-
լուխ նոցա²»։ Ինչպէս կը տեսնենք, թէ
Յովհաննու և թէ Դաւթի ընտրութեանց
մէջ՝ եպիսկոպոսաց ժողովն է զործողը,
մին թագաւորին հետ, և միւսն ինքնաւ-
զլուխ և առանձին, ինչպէս Դաւթի յա-
ջորդներէն զջաքարիա ընտրողն ալ էր
«եպիսկոպոսաց, վարդապետաց և բազում
կրօնաւորաց» ժողով մը³։

Աւկայն զեռ մեր իշխանք ալ կ'երեխն
երբեմն ընտրութեանց մէջ, երբ կը պա-
կասի թագաւորը։ Այսպէս 1220ին՝ յետ

1. Վարդան, Վենեաիկ, 1862, 116. — 2. Ենոք. Նա-
մակ. 134. — 3. Թող. Արծր. Կ. պոլիս, 1852, 363.

նոյն Յովհաննու մահուան, «Ճողովեալ
եպիսկոպոսուննուն և վարդապետուն՝ խորհե-
ցան հաստատել կաթողիկոս Հայոց։ Իսկ
իշխանքն երկպառակեցան, զի արքայ ոչ
զոյր՝ որ նորա կամօքն կացուցանէին։ Իսկ
պարոն կոստանդին պայլն զտէր կոստան-
դին բարձրերզցին կամէր, և պարոն կոս-
տանդին լամբրոնացին՝ զԴրիգոր վարդա-
պետն սկեռուցին։ Եւ Աստուած՝ որ յա-
մենայն ժամ լտէր կոստանդին պայլոյն
Հայոց, և այժմ լուաւ, և եղին զտէր կոս-
տանդին բարձրերզցին կաթողիկոս Հա-
յոց¹։ Աւը կը տեսնենը՝ թէ եպիսկոպո-
սաց ժողովի աւելի հաւանող է պայլին
առաջարկածին՝ քան ազատ ընարող։

1268ի յիշատակարան մը կը զրէ՝ թէ
«ի շնորհացն Աստուածոյ և հրամանաւ թա-
թաւորին Հեթմոյ՝ յաջորդէ զաթոսն տէր
Յակոբ (Ա), այր բարի և վարդապետ հին
և նոր կտակարանաց, անապատական վա-
րուք ճգնեալ²»։ Բայց ընտրութեան մաս-
նակցեր էր սովորական ժողով մ'ալ արե-
ւելըէն ու կիլիկիայէն՝ ըստ ուրիշ վկայու-
թեան մը³։ Յակոբ վախճանելով 1286ին,
«մեծաւ հանդիսիւ և աշխարհաժողով ամ-

1. Տարեգիրք Կիլիկ. դրչ. թ. 1308 Ա. Դ. պ. էջ 316.
- 2. Հաւաքուանն Շատկրեց. դրչ. ի Ա. Դ. պ. — 3.
- Ախոռան Հ. Ամիշանի, 249:

բոխիւ նստուցանեն կաթողիկոս Հայոց զկլոստանդին Բ., «ձեռամբ թագաւորին Հայոց լեռնի՝ որդւոյն Հեթմայ, ընդ որս և մեր նուաստութիւնս», կ'ըսէ Օքքելեան¹: Նոյն արքայի որդին ու յաջորդը Հեթմում Բ կը թշնամանայ հայրապետին հետ, «առնէ ինքեան խորհրդակից յեպիսկոպոսց և յիշխանաց զիսաւորագոյնսն նաև ի վարչապետաց իսկ», և անոնց հետ «առնէ ժողով» ու կը հրաժարեցնէ զկլոստանդին 1289ին: Ապա յաջորդին ընտրութեան կը հրաւիրէ նոյն պատմիչն ալ, որ չհաւանելով հրաժարելոյն եղած անիրաւութեան՝ կը մերժէ երթալ: Նուիրակն երբ կը դառնայ, կը գտնէ արդէն «հաստատեալ յաթոռ կաթողիկոսութեան զլանփանոս²»: Նոյն զրիչն իւր ժամանակազրութեան մէջ ալ կ'ըսէ՝ թէ «ի ձեռն թղթոց մեծապատիւ արամբը հրաւիրեցին զմեզ և զայլ եղիսկոպոսն և զայլ իշխան արեւելից՝ երթալ ի թագաւորութիւնն մեր ի Ալա՝ յընտրութիւն նորոգ հայրապետին³»:

Ատեփանոսի մահուամբ՝ 1296ին «դարձեալ առնէ ժողով թագաւորն Հեթմում, և առյ ձեռնադրել կաթողիկոս Հայոց զաէր

1. Ատեփ. Արմեաց եպս. Մոսկուա, 1861, 319.
— 2. Կոյն՝ 320-22. — 3. Հանդ. ամս. 1921, 180.

Գրիգոր՝ Անաւարզայ եպիսկոպոս¹» : Այս
պէս նաև 1322ին «զրին կաթողիկոս՝
հրամանաւ թագաւորին Լեռնի և շատ
եպիսկոպոսաց՝ զԱսոյ նպիսկոպոսն տէր
կոստանդին լամբրոնացին²» : 1340ին
«թագաւորն Լեռն ընկէց զտէր Յակոբ
կաթողիկոսն» , անկից յանդիմանուած լի-
նելուն համար . «և եղ փոխան նորա զե-
պիսկոպոսն Գաներուն զտէր Միսիթարն³» .
անշուշտ զործակցութեամբ ժողովոյ՝ ըստ
սովորութեան : Վասն զի նոյն կաթողի-
կոսը 1355ին վերստին կը բազմի աթոռը՝
հաւանութեամբ կոստանդին արքայի և
եպիսկոպոսաց⁴ :

Ամփոփելով այդ օրինակները, կիլի-
կեան շրջանիս մէջ հայրապետական ըն-
տրութիւնը կը կատարուին միշտ եպիս-
կոպոսաց ժողովէն և հաւանութեամբ ար-
քային, որ յաճախ ինքն իսկ կ'առա-
ջարկէ ընտրելին : Երբեմն կը մասնակցին
վարդապետք և իշխանք ալ, մինչ ժողո-
վուրդը զեռ բնաւ ձայն չունի :

Զ. Ծնտրութիւն իւր յաջորդին : — Եղած
են առիթներ՝ ուր արքեպիսկոպոսը իրենց
վախճանելէն յառաջ նշանակեր են իրենց

1. Առեփ. Աբմ. 326. — 2. Ամբատ. 130. — 3.
Ժմակորին. պամ. Կիլիկիոյ, զբէ. թ. 1318 լ. Դար. էջ
232. — 4. Զամէ. գ. 353.

յաջորդը։ Այսպէս Աղեքսանդր՝ մետրո-
պոլիտ Աղեքսանդրիոյ, 328ին օրհասի
պահուն իրեն իրը յաջորդ մատնանշեց
զսուրբ Աթանաս, զոր յետոյ ժողովուրդը
վաւերացուց և եպիսկոպոսունք ձեռնա-
դրեցին¹։ Այդ վերջինը նոյնպէս իրեն յա-
ջորդ նշանակեց և կղերին ու ժողովը-
ղեան հաւանութեան յանձնեց զԳիկոն կամ
Պետրոս քահանայ²։ Բայց այս եղանակը,
որ տեսակ մ'ոտնձգութիւն էր հասարա-
կաց իրաւանց մէջ, հաճոյ չթուեցաւ Եկե-
ղեցւոյ հարց, և 341ին Անտիոքայ ժողովն
արգիլեց զայն (կան. իդ)³։

Եռյնը կ'երեխ նաև մեր քով, և աւելի
յաճախ խակ։ Մեր տեսանք ո. Յովսեփու
ընարութիւնն իշխանաց ձեռքով՝ ըստ վը-
կայութեան ժամանակակցին⁴։ Խակ Փար-
ակեցին անոր հայրապետութիւնը կը դնէ
«Հրամանաւ երանելոյն Մաշտոցի» իւր
նախորդին, տեղեկութիւն՝ զոր կ'առնու
կը կրկնէ խորենացին ևս, «Հրամանաւ
երանելոյն Մեսրոպայ»⁵։ Եթէ պատմական
է այդ, ուրեմն իշխանը կատարեցին պար-
զապէս վարդապետին վերջին փափաքը։
Միջին զարուն աւելի կ'երեխ զործաղը-

1. Առզամէն, Բ, 45. — 2. Հմմա. Cabrol, *Dictionnaire d'archéol.* IV, 2621. — 3. Pitra, I, 462. — 4. Աստ.
25. — 5. Փարագ. 106. Խորեն. Գ, 45.

թոռ հայրապետութեանն¹ : Եւ ի Հոնի՛
միւս Աարզսի տեղ «Հրամանաւ նորա նըս-
տուցաննեն» զթէողորոս² :

Ոյս տեղեկութիւնք կը վերաբերին 968-
1077 տարիներու շրջանին, մինչ իրենց
զիստոր ազրիւրը Մատթէոս կը գրէր իրը
1136ին : Հետեւաբար իւր բոլոր ըսած-
ներուն ստուգութիւնը չենք կարող երաշ-
խաւորել : Ինդ հակառակն աւելի հաւաստի
օրինակներ ունինք յաջորդի ընտրութեան՝
Պահլաւունեաց մէջ : Անոնց առաջինը Գրի-
գոր վկայասէր մեծն՝ տարօրինակ ընթացք
մ'ունի այս մասին : Նախ իւր Գրիգորիս
քեռորդին «Ճեռնազրէր կաթողիկոս Եղիալ-
տոսի», ուր ինք զնացեր էր այցելութեան,
գոհացնելու համար զխալիֆայն՝ որ զինք
սիրելուն կ'ուզէր հոն պահել, ու կը
զառնայ ի Հայս : Եւ որովհետեւ անապա-
տասէր էր, իւր Բարսեղ անուն ազգա-
կանը, կանխաւ ինքնազլուխ կաթողիկոս
նստած Անույ մէջ³, «կարգէր փոխանակ
իւր հովիւ և վերատեսուչ Քրիստոսի հօ-
տին», այսինքն իրեւ տեղապահ, անոր
քնակավայր նշանակելով Շուղը : Երկու
ընտրութիւնք ալ կը կատարէ իւրովի, ա-
ռանց ժողովոյ : Ինք կ'առաջարկէ նաև իւր

1. Ուսէ. 122, 152. — 2. Կոյն՝ 259. — 3. Աստ՝

միւս փոխանորդը Հոնւոյ մէջ¹։ Միանգաւ-
մայն Բարսղի խնամոց կը յանձնէ իւր
երկու քեռաթոռները Գրիգորիս ու Ներ-
սէս, և «պատուիրէր սնուցանել զնոսա
զգուշութեամբ» . . . լինել ժառանգ սրբոյ
աթոռոյն²» :

Բարսեղ յետոյ Վկայասիրին մահուամբ
յաջորդեց անոր³։ Եւ ինքն ալ իւր մեռ-
նելէն յառաջ «գնայր յեկեղեցին», և Գրի-
գորիսի վրայ կը կատարէ հայրապետա-
կան կարգը, այսպէս ի զլուխ տանելով
Վկայասիրին կտակը⁴։ Առ այս հրաւիրած
էր «զեպիսկոպոսունս և զվանորեայս եր-
կրին և զիշխանսն» , որոնք չհասած՝ ստի-
պուեցաւ փութացնել ձեռնազրութիւնը,
իրեն պատահած արկածի մը պատճառաւ՝
որ զինքն արագ գերեզման տարաւ⁵։

Գրիգորիս յիսուն և չորս տարի վա-
րելով իշխանութիւնը, ծերացած ու խօթ,
իւր հարազատը Ներսէս «ստիպէ առնուլ
զաստուածընկալ աթոռոյ իւրոյ փոխա-
նորդութիւն» ։ Եւ առ այս ժողով կը խմրէ,
որուն կը մասնակցին «դասը սրբազնից
քահանայապետաց և քահանայից և իմաս-
տուն վարդապետաց» Վկայութեամբ ըն-

1. Ասու 37. — 2. Սովերք, ԺԴ, 28, 29, 30. Շնորհ.
Բանք բախաչ, 550. — 3. Սովերք, 30-31. — 4.
Անդ՝ 32. — 5. Վարդան՝ 116. Ուսւ. 411.

տրելոյն¹, կամ ըստ պատմչին՝ «կոչեաց զեսպիսկոպոսունս և զվարդապետս և զհարս սրբոյ լերինն (Ահաւ կոչուած) և զորս յայլ կողմանց», առանց մասնակցութեան աշխատհականաց, ինչպէս կը պահանջէր ժամանակի սովորութիւնը²: Եերսէս յետ երկար դիմազրութեան տեղի տուաւ եղրօր ու ժողովին ստիպման: Ապա ծերունի հայրապետ անձամբ կաթողիկոս ծեռնազրեց զայն, և ինըն յետ երեք ամսոյ առ Առտուած փոխեցաւ³:

Դրիգորիս ոչ միայն իւր, այլ իրեն պէս ծերութեան զուոր հասած եղրօր յաջորդն ալ նշանակած էր կանխաւ. որոյ «անզարծ կտակն հաստատեալ պահիւր» իւր եղրօրորդին Դրիգոր Տղայն «կատարել փոխանորդ (այն է յաջորդ) եղրօր իմոյ տեսան Եերսիսի», կ'ըսէ Դրիգոր յիշատակազիրը 1173ին: Ի հաստատութիւն ազոր՝ նաև Շնորհալին իւր մահուան ժամանակ «զրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռն նորա զորդի եղրօրն իւրոյ երիցազունի վասլի, զարդեսպիսկոպոսն տէր Դրիգոր՝ մականուն Տղայ. որ և արարին իսկ ըստ իւրում հրամանի⁴: Կտակներէդ զատ՝ «նաև ըզ-

1. Շնորհ. Կամակ. 12, 5. — 2. Առաջ. 39. —
 3. Առփերք. 66. — 4. Տարեգիրք Կիլիկ. սիր.
- կաթ. Բնար, և Զեռմ.

լաւութիւն բարուցն և զսրբութիւն անձինն
տեսեալ, իրը ի հրամանէ Աստուծոյ ժու-
ղովեալը», «ի հաւանութենէ բոլոր ազ-
գիս եպիսկոպոսաց սրբոց, հարց և վար-
դապետաց, վանականաց և աշխարհայ-
նոց, զօրականաց և զօրապետաց», «հաս-
տատեցին զնա յաթոռ վերակացութեան՝
բազում խրախութեամբ և մեծ հանդիսիւ»,
կը յարէ Գրիգոր յիշատակազիք¹, և կը
հաստատէ Լամբրոնացին². և ուր հաւանող
ժողովը կազմուած է եկեղեցականներէ և
աւագանիէն միանգամայն:

Այսպէս ուրեմն յաջորդին ընտրութիւնն
այզքան ընդարձակ է մեր մէջ միջին դա-
րուն, և վկայասիրի նշանակոծ մասնական
տեղապահներէն զատ, միւսերն ազատաց
կամ եկեղեցական ժողովոց հաւանութեան
ալ ենթարկուեր են միշտ ընտրողաց կող-
մանէ, առանց սակայն մերժուելու բնաւ։
Այս զրութիւնն աւելի հաստատուն հան-
գամանք առած էր Աղթամարայ և Աղուա-
նից աթոռներու վրայ՝ Անոյ 1342ի ժու-
ղովոյն ժամանակ, որ կը վկայէ՝ թէ ա-
նոնք «ընտրեն զյաջորդս իւրեանց. բայց
ոչ առ կենդանեաւ նոցուն ձեռնադրին
ընտրեալըն, այլ զկնի մեռանելոյն³»։

1. Հաւաք. յլտէ. 1173, 1174. — 2. Գովեստ ի Շեորհ.
ՄԵՅ. Ա. Պ. — 3. Mansi, XXV, 1258.

Ե. Եղանակ բնարուրեամ։ — 1. Բնարական ժողովը խմբելու համար՝ հարկ էր նախ հրաւիրել ժողովականները։ Եւ հրաւիրողը կը լինէր թագաւորը, իշխանապետը, կամ հայրապետը՝ որ պիտի ընտրէր իւր յաջորդը, ինչպէս նկատեցինք վերոյիշեալ օրինակաց մէջ։ Դ. Ատեփանոսի ընտրութեան համար՝ Հեթում Բ թագաւորն ու ժողովը նուիրակ կը յղեն Ատեփանոս սկեռացին՝ հրաւիրական նամակօր, կոչելու արևելեան եպիսկոպոսներն ու իշխանները¹։ Նոյն թագաւորը 1293ին՝ Գրիգոր անաւարզեցւոյ ընտրութեան համար կը խորհրդակցի եկեղեցւոյ ուխտին և իշխանաց հետ. «և առաքեն զիմս նուաստութիւն», — կը զրէ զրազարկեցին թորոս զրիչ, — և զսիրելի և զսննզակից եղբայրն իմ զարատուելի եպիսկոպոս տէր թումաս՝ յաշխարհն արևելից, առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց, գալ վերստին նորոգել զաթոռ սուրբ Լուսաւորչին», զոր և կը կատարեն²։

2. Իրաւունք ունէին ու կը հրաւիրուէին մասնակցելու ժողովոյն, ինչպէս տեսանք օրինակներով, Արշակունեաց շըրջանին՝ բոլոր աւագ նախարարները³։ Յա-

1. Ատեփ. Արձ. 321-22.և առաջ՝ 43. — 2. Հաշար. յատկ. 1291. — 3. Առաջ՝ 15-19.

ջորդ ու միջին զարերուն՝ նուազած հին տոհմերէն մնացած բոլոր իշխաններն ան-խափիր¹: Նմանապէս ամրողջ հայ եպիս-կոպուունք, երբ իրաւունք ստացան իշ-խանաց հետ՝ կամ առանձինն ընտրելու հայրապետը². և այս վերջին կերպն իրը ընդունուած կանոն յիշեց Շնորհալին իւր օրերուն³:

Ասկայն զործնականին մէջ՝ ըստ ընդ-հանուր սովորութեան ժողովը կը կազ-մուէր մեծամասնութեամբ այն ընտրողնե-րէն՝ որ ազգին բաղաքական շրջանակին մէջ կը զանուէին: Ինչպէս մեծ Հայաս-տանէն՝ երբ հոն էր բաղաքային կեղրոնք: Կիլիկիայէն՝ երբ հոն հաստատուեցաւ ար-բայական զահը: Եւ մերթ մէկ նահանգէ միայն՝ երբ զուրկ էինք բաղաքական ան-կախութենէ, և բոլոր ընտրողները հաւա-քելու հնարաւորութիւն չկար, ինչպէս պա-տահեցաւ Գրիգորիսի և անոր եղրօր ներ-սիսի համար⁴: Հեռուներէն ալ կը հրա-վիրուէին սովորաբար, երբ ցըռուեցաւ մեր ազգը. զոր օրինակ Յունաց կողմերէն ի Հայաստան, կամ Հայաստանէն ի Կիլի-կիա⁵: Բայց աղոնց ներկայութիւնն ան-

1. Աստ' 29, 32, 33, 43: — 2. Աստ' 28, 32, 34-38, եւն, — 3. Աստ' 39: — 4. Աստ' 48, 49: — 5. Աստ' 35, 42, 43, 51:

հրաժեշտ չէր, և առանց անոնց կամ անոնք դեռ չհասած ալ կը կատարուէր ընտրութիւնը, երբ ստիպողական էր¹: Եւ հուսկ՝ մօտէն կամ հեռուէն կու գային ու կը կազմէին ժողովն անոնք և այնչափ անձինք՝ որ կրնային, ժողովականաց կանոնական թիւ մը չլինելով բնաւ: Եւ այս պայմանաց ներքեւ կատարուած ընտրութիւնը վաւերական համարուեր են միշտ ամբողջ ազգէս:

Մեր նախնեաց մատենազրութեան մէջ գոյութիւն չունի, և անզիր աւանդութիւն կամ լոկ թուիք մ'էր անշուշտ այն «կանոնը», որ Չամչեանին «թուէր» սահմանուած 1114ին զաղթամարցիս բանազրող ժողովէն, — և զոր կրկնեցին ինձինեան, Հ. Ալիշան, Մաերեանց և այլք ևս², — թէ «յընտրութեան կաթողիկոսի լիցի միաձայն հաւանութիւն չորից զլխաւոր աթոսց արքեպիսկոպոսաց որ ի մեծ Հայս, այսինքն են Բջնոյ, Հաղրատայ, Թաղէսսի վանաց՝ որ յԱրտազ, և Ստաթեու կամ Ցաթեու, և եղաւ վճիռ՝ զի առանց հաւանութեան սոցա անվաւեր լիցի ընտրութիւնն³: Այսպիսի վճիռ չէ արուած երբեք. ինչպէս ձրի էր Օրբելեանի պա-

1. Ասու՝ 43. — 2. Հմմտ. Բաղմկ. 1902. 556. — 3. Չամչ. Գ, 37.

հանջն ալ՝ թէ «առանց սոցա (այսինքն
եպիսկոպոսաց Ախւնեաց) ոչ ձեռնադրի
պատրիարք Հայոց, և ոչ լինի ժողով
(ընտրութեան), այլ զլուխ և հրամանա-
տար ժողովոյ սորբ լինին¹»։ Պատմչիս
օրով իսկ և առանց իւր ներկայութեան
— մանաւանդ մին իւր կամաց հակառակ
— ընտրուեցան Ատեփանոս Դ. ու Գր. Անտ-
ւարզեցին, և ընտրութիւնը հաւասարապէս
յաջող ու վաւերական եղաւ²։

Յ. Բոլոր ընտրական ժողովոց վայրերը
յիշուած չեն։ Բայց անոնք որ ծանօթ են,
սովորաբար եղեր են ժամանակի մայրա-
քաղաքը, որ միանգամայն հայրապետաց
ալ աթոռ է եղեր հասարակօրէն։ Դ. դա-
րուն զատ էր սստանէն եկեղեցական ժո-
ղովոց տեղը, Աշտիշատ, «ուր զառաջին
եկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր
եկեղեցեացն, և ի տեղի լեռ նախնեացն
ժողովոց սիւնհողոսին³»։ Ատկայն ընտրա-
կան ժողովներն եկեղեցականաց զոյնը չու-
նէին բնաւ, մանաւանդ Արշակունեաց շըր-
ջանին, ինչպէս տեսանք. որով զումա-
րուեր են մայրաքաղաքին մէջ։ Այսպէս
Լուսաւորչի ընտրութիւնը կը կատարուի
«ի վաղարշապատ քաղաքի», որ էր դա-

1. Ատեփ. Ախն. 18. — 2. Աստ' 43-44. — 3. Փառ.
74.

րուն սստանը, և ուր այդ նպատակաւ հրաւիրեց Տրդատ ու զնաց ինքն ալ, ուսելից բացակայ էր նոյն պահուն¹: Բայց սստանը ստիպողական չէր միշտ, և զիանիէլ ընտրելու համար՝ կը տանին «ի զաւառն Աղձնեաց ի Բառաէջ աւան», ուր առժամապէս կը զանուէր Տիրան արթայ²:

Ակնարկներ կան՝ թէ Արքահամ ընտրուեր է Դունի մէջ³, որ ժամանակի բազարամայրն էր: Յովհաննէս կթղ. Զաքարիայի ընտրութիւնը կը դնէ «ի զիւզարագարն Երազզաւորս⁴», որ Անւոյ պայծառութենէն յառաջ Բազրատունեաց նախամեծար շէն կեղրոնն էր⁵: Ստեփանոս Դ. կ'ընտրուի ու Դէռսկորոս կը տապալի Բազրատունեաց նոր սստանին՝ Անւոյ մէջ⁶: Բարսղի համար կը զումարուին Հաղբատայ մէջ⁷, որ մեր երեւելի մայրավանքէն մին էր, և ընտրողաց մերձաւոր ու յարմարազոյն վայրը: Ա. Յակոբայ համար՝ «ի մայրաբաղարն Մսիս⁸», որ կիլիկիոյ զլիսաւոր կեղրոններէն մին էր: Կոստանդին Բ. կ'ընտրուի ու կը հրաժարեցուի «ի Աիս՝ յաւագ եկեղեցին սուրբ

1. Աղաթ. 594. — 2. Փաւա. 38. — 3. Աստ. 26. — 4. Յէ. կթղ. 161. — 5. Հմմա. Խնճիճ. Ատոր. Էփէ Հյան. Աւանան. 1822, 427-29. — 6. Աստ. 34, 35. — 7. Աստ. 37. — 8. Յշտկ. և Սիսոչան Հ. Ալիշ. 249.

Առփի¹», որ էր թագաւորեալ քաղաքն ու կաթողիկէն։ Հոն էր Դ Ստեփանոսի ընտրութեան տեղն ալ²։

Երբ թագաւորութիւն և ոստան կը վերջանային, ընտրութիւնը կը կատարուէին հայրապետական աթոռին մէջ՝ իրրեւ եկեղեցական կեղրոն ազգիս։ Այսպէս Շնորհալւոյն համար ժողովն եղաւ անտոիկ Հռոմէլլոյ ամրոցին մէջ, ուր հաստատուած էր հայրապետարանը³, իսկ կիրակոս վիրապեցւոյն ընտրավայր եղաւ Եղմիածին, որ վերստին կ'ընդունէր իւր մէջ կաթողիկոսական աթոռը, և ուր յետոյ ընտրուեցան ուրիշներ եւս⁴։

4. Ծնարող ժողովոյն նախազահ կը բազմէր՝ Արշակունեաց շրջանին՝ թագաւորը, երբ ժողովն ազատանիէն միայն կը կազմուէր⁵։ Անոր յաջորդող շրջանին, յորում նախարարը և եղիսկոպոսունը խառն կը գումարուէին⁶, թէ ով կը նախազահէր՝ յայտնի չէ մեր ունեցած տեղեկութեանց մէջ։ Բազրատունեաց տէրութեան օրով ժողովոյ և նախազահութեան հանգամանքներն երթալով կը պարզուին։ Հոգ մեր թագաւորը հետ զհետէ ձեռնպահ

1. Առ. Արմ. 319. — 2. Կոյն 320. — 3. Առփերք, ԺԴ, 47, 66. — 4. Առաջ Հմբ. Թ. — 5. Առաջ 15-19. — 6. Առաջ 28, 32.

կը մնան եպիսկոպոսաց ժողովէն, և կը շատանան՝ անոնց ընտրելոյն տալով իրենց հաւանութիւնը. իսկ ժողովոյն կը նախագահէ եպիսկոպոսներէն պատուաւորագոյնը: Արով 968ին զվահան և 969ին ալ զԱտեփանոս ընտրող զումարմանց մէջ՝ «էր զլուխ ժողովոյն կաթողիկոսն Աղուանից տէր Յովհաննէս¹». 992ին Աարգսի ընտրութեան զահագլուխ բազմած էր Արշարունեաց եպիսկոպոսը Աահակ², և 1037ի խառն զումարման՝³ «էր զլուխ ժողովոյն ծերունին Յուսէփ կաթողիկոսն Աղուանից⁴»: Նոյն դրութիւնը կը շարունակէ նաև Մուրինեանց ժամանակ, ժողովոյն անդամք ու նախագահ՝ եկեղեցականը էին. և անոնց ընտրածը կը վաւերացնէր յետոյ թագաւորն աւագանւոյն խորհրդով⁵: Իսկ իւր յաջորդի ընտրութեան կը նախագահէր կաթողիկոսը՝ երբ գործը կը կատարուէր իւր կենդանութեանը, ինչպէս տեսանը օրինակներով:

Օ, Ծնարելին կ'առաջարկուէր մերթ թագաւորին կամ իշխանապետին կողմանէ, այսինքն է նախագահէն. ինչպէս Լուսաւորէչ՝ Տրդատէն, Յուսիկ Բ՛ Պապէն, Քրիստովոր՝ Թէողորոսէ, Յովհաննէս Դ՛ մեծն

1. Առաջ. 40, 42: — 2. Առաջ. 35: — 3. Անդ: —
4. Առաջ. 89: — 5. Առաջ. 60:

Լեռնէ, կոստանդին ԱՌ իւր անուանակից
սղայլէն¹, և այլն։ Երբեմն ժողովականը կը
սղահանջեն ընտրելին համախումբ, ինչպէս
եղած կը սղատմուի Դանիելի, Ներսիսի² և
այլոց, անշուշտ կանխաւ զոյացած հա-
մաձայնութեամբ իրարու հետ։ Իսկ հայ-
րապետաց կողմանէ առաջարկուած փո-
խանորդներն ու յաջորդներ յառաջազոյն
աւ նշանակուած էին միշտ։ Եւ ինչպէս
զանազան վկայութեանց և օրինակաց մէջ
տեսանը, առաջարկելոյն մասին ժողովը
կը խորհրդակցէր նախ, և ապա կ'ընտրէր
ձայներու միութեամբ՝ ինչպէս այժմ կ'ը-
նենք։

6. Կիլիկիա արեմտեան ազգեցութեան
ներքե կը փորձէ բարւորումներ մուծանել
ընտրութեան նախկին եղանակին մէջ։ Լա-
թողիկոսօրհնէքը, զոր շարադրեց Ներսէս
Լամբրոնացին³, այսպէս կը սահմանէ.
«Յորժամ հանդերձեալ լինին բարձրացու-
ցանել զոք ի պատիւ կաթողիկոսութեան
տանս Հայոց, նախ ընտրել պարտ է ըստ
կաթողիկէ եկեղեցեացն սահմանի», որ է
միւս ըրխոտոնէից նման։ «Բոլոր ժողո-
վուրդը հայասեռ ազգիս՝ հանդերձ ամե-
նայն ժառանգաւորօքն եկեղեցւոյն և երկո-

1. Աստ' 15, 18, 28, 40, 42. — 2. Աստ' 16, 17. —
3. Աստ' զլիւ. Բ, ս. 2.

տասան եպիսկոպոսօք՝ ընտրեն ի նոցանել
երիս արու», այսինքն մասնակցող եպիս-
կոպոսներէն երեք հոգի: «Եւ ըննութեամբ
ժողովոյն» — որ զատ է երից ընտրողնե-
րէն, և անշուշտ կազմուած եպիսկոպոս-
ներէ, — ընտրեն զմի ի նոցանել վկայեալ
յամենայնի ի զործո բարիս, և ի վարս
առարինիս սուրբ և անարատ, զիտու-
թեամբ և իմաստութեամբ լի, որ կարող
իցէ հովուել զժողովուրդն որ յԱստուծոյ
հաւատասցի նմա¹»:

Պէտք է զիտնալ՝ որ երբ Տարսոնի ա-
ռաջնորդն այս սահմանը կը շարադրէր,
տակաւին Ռուբինեանց թագաւորութիւնը
չէր սկսած: Այս պատճառաւ ընտրութեան
համազգային ձև մը տուաւ նա, որ եր-
բեք չզործադրուեցաւ, և «բոլոր ժողո-
վուրդը հայասեռ ազգիս» չեն տեսնուիր
կիլիկեան շրջանիս ոչ մէկ ընտրութեան
մէջ, ինչպէս կը վկայեն նոյն և յաջորդ
զարերու օրինակները: 1198ին պսակուե-
ցաւ առաջին Ռուբինեանը՝ Լեոն, որ թէ
ինը և թէ յաջորդները ձեռք առին հայրա-
սկետաց ընտրութիւնը՝ զործակցութեամբ
եպիսկոպոսաց ժողովոյն, և «ժողովուրդը»
մոռացուած մնացին՝ ինչպէս յառաջ:

Հետաքրքրական է և մասամբ ձայնա-

1. Աստ զւու. Գ:

կից լամբրոնեան կարգադրութեան՝ Ասոյ
1342ի ժողովին տուած տեղեկութիւնը,
թէ «յետ մահու կաթողիկոսին՝ արքունի
հրամանաւ ժողովին արքեպիսկոպոսք, և
պիսկոպոսունք, վարդապետք, հարք ուխո-
տից և աւազ երիցունք», որոցմէ դուրս
կը մնան միշտ կաթողիկոսօրհնէից «ժո-
ղովուրք»։ «Եւ իւրաքանչիւր ի նոցանէ
տայ զանուն ոյր ուրուք և կամի յեպիս-
կոպոսաց կամ ի վարդապետաց կամ ի
հարց ուխտից կամ ի կրօնաւրաց», և ոչ
լոկ «եպիսկոպոսաց» դասէն՝ ըստ կաթո-
ղիկոսօրհնէից։ «և զանուանսն զրով տան
թագաւորին ընդ կնքով իւրեանց։ Եւ եթէ
բազումք իցեն վիճակեալքն, հրամայէ ար-
քայն միաբանել ի վերայ երիւց կամ երից»,
համաձայն կաթողիկոսական կարգին։ «Եւ
ապա արքայն ընդ իւրում ժողովոյն (խոր-
հըրդական իշխանաց) ընտրէ զմի յերեցունց
անտի զոր և կամի¹», ինչ որ եպիսկոպո-
սական ժողովը պիտի ընէր ըստ կաթո-
ղիկոսօրհնէից։

7. Երբ ընտրութիւնը զժուարութեանց
կը բախէր, երբեմն խնդիրը կը ջանային
լուծել վիճակով, նմանութեամբ առաքե-
լոց՝ զոր տեսանք²։ Աբրահամու ընտրու-
թեան ժամանակ՝ 607ին՝ երբ նա կը հա-

1. Mansi, XXV, 1258. — 2. Ասոյ 8.

կառակեր ընդունել պաշտօնը, ապաւինեցան այդ կերպին, «արկեալ վիճակ ըստ սովորութեան իւրեանց, և էք վիճակ առեւտարանին այս. Իջի ես յերկնից՝ ոչ (զի) զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս»։ այսինքն թէ աւետարանի վրայ վիճակ ձգեցին և ելաւ այդ խորհրդագաւոր խօսքը, որոյ ի տես Աքրահամ «Հաւանեալ և հաստատեալ ի միտս իւր, ձեռնազրի ի շնորհաց սուրբ Հոգւոյն¹»։ Տեղեկատուս թէն: ուշ, բայց տեղեկութիւնը հաւանական կը թուի։ Զի նոյնը պատահեցաւ նաև կիրակոս վիրապեցւոյ ընտրութեան առթիւ՝ 1441ին։ Շատերուն առաջարկուեցաւ աթոռը, կ'ըսէ Մեծոփեցին, և մերժեցին։ «Ապա յետ այնորիկ ապաւինեցաք յԱստուած, և միաբանութեամբ սկսաք ազօթիւք և պաղատանօք խնդրել յԱստուծոյ՝ տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց»։ Յետ որոյ «արկին վիճակ ի սուրբ առեւտարանն, և ել վիճակն կիրակոս հայրապետին, և առանց հակառակութեան եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին²»։ Բնարութիւնը յաջողած էր։

8. Շնորհալին յետ ընտրութեան՝ մեղրածորան բերանովը գեղեցիկ ատենախօ-

1. Աւետանէս, Վարչպա. 1871, Բ, 1^ւ. — 2. Այսուրատ. Հ. Ամել. 216.

սութիւն մ'ըրաւ ու թողուց զինքն ընտրող
ժողովին առջե, յորում կ'ակնարկէր իւր
տոհմին. կը ներբողէր իւր հարազատին
ու նախորդին կեանըը, կը ցուցնէր իւր
անարժանութիւնը բազմելու հայրապետա-
կան աթոսին վրայ, և թէ բռնադատեալ
կ'ընդունէր զայն, ապաւինած ընտրող ժո-
ղովականաց ազօթից¹: Առվորական չէին
անշուշտ այսպիսի ատենարանութիւնը, և
թիչ են օրինակները, հանգամանօք ալ
տարրեր: Յիշեցինը Գանիելի խօսածը²,
որ կշամբական էր, իրեն տռաջարկուած
պաշտօնէն խուսափելու խօսքեր³: Եոյն-
պիսի էր Ներսիսի խօսածն ալ, միան-
գամայն շեշտելով իւր անարժանութեան
վրայ⁴: Ուրիշ ատենախօսներ ալ եղած են
հաւանօրէն, բայց չեն յիշուած:

9. Եոյն Շնորհալին զրեց նաեւ բնդ-
հանրական բռնը մը՝ «ընդհանուր հաւա-
տացելոց Աստուծոյ հայկականացդ սեռից»⁵
սփռելոց ամենուրեք, յորում յետ ողջու-
նելու բռլոր դասակարգերը մի առ մի,
կը ծանուցանէր՝ թէ իւր հարազատն ու
նախորդը Գրիգորիս հասնելով իւր կենաց
վախճանին, — ուրեմն թուղթս կը զրէր
իւր ընտրութենէն երեք ամիս վերջ, —

1. Կամակ, 5-28: — 2. Աստ 16: — 3. Փառա.
38-41: — 4. Եոյն 69-70.

ժողով խմբեց և «ձեռնադրեաց զմերս
անարժանութիւն յաթոռ կաթողիկոսու-
թեան ազգի Հայկայ և տան թորգոմայ»:
Կը զովէր անոր ասաբինակրօն վարքն ու
երջանիկ մահը: Յոյց կու տաք իւր յանձն
տուած պաշտօնին ծանր ղժուարութիւնքն
ու խոչընդոտները: Յետոյ կը գնէր իւր
հաւատոյ դաւանութիւնը: Ապա տասն զըլ-
խոց մէջ կը զետեղէր զեղեցիկ խրատներ
ու սահմաններ իւր հօտին իւրաքանչիւր
տատիճանին ու սեոին յարմար:

Նոյնպէս վարուեցաւ նաեւ Յակոր Ա.
որ յետ ողջունելու զամէնքը թղթին մէջ,
որ լոյս տեսած է², կը յայտնէր իւր ըն-
տրութիւնը, երկիւղը պաշտօնին մեծութե-
նէն ու ծանրութենէն. և թէ ինչպէս յան-
կարծակի կը գտնէ Շնորհալոյն ընդհան.
րականը, որուն համար «խնդացի յոյժ,
կ'ըսէ, ուրախութիւն մեծ, և յԱստուծոյ
համարեցայ շնորհեալ ինձ զգանձն զայն».
զոր և կը յդէ բոլոր վիճակները, պա-
տուիրելով որ ամէնքը կարդան զայն ա-
ռանձին, և եկեղեցւոյ մէջ կիւրակէ օրեր:

Այսպիսի թղթոց չեմ հանդիպած նախ
քան զՇնորհալին: Կոմիտաս իւր ընտրու-
թենէն երկու տարի վերջ՝ Պարսկաստանի
եպիսկոպոսաց կու տայ զրով Հայոց դա-

1. Կամակ. 29-210: - 2. Բիւզանդիոն, 1906, սեպ. 16:

ւանութիմը, յորում կ'ըսէ՝ թէ «յաջորդեցայ ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց¹». բայց պատահական յիշատակութիւն մ'էր այդ, և ոչ ուղղուած իւր հօտին: Նոյնպէս Անանիա մոկացին՝ ընտրուած 941ին, 958ին «Յաղագս ապրատամբութեան տանն Աղուանից» զրութեան մէջ կը պատմէ իւր ընտրութեան հանգամանքները², ապացոյց՝ թէ կանխառ այդ մասին խօսած չէր ազգին՝ շրջարերականով մը: Որով շատ հաւանականօրէն Շնորհալոյն հանճարին կը պարտինք ընտրութեան ծանուցազրին առաջնութիւնը:

Բ. Հանգամանք ընտրերոյն: — 1. կաթողիկոսօրհնէից սահմանը՝ եպիսկոպոսաց միջէն ընտրելու հայրապետը³, մեռեալ տառ մեաց: Եւ ինչպէս շարադրողէն յառաջ, նաեւ յետոյ կը շարունակեն ընտրել ըուլոր վիճակներէ: Եպիսկոպոսներէ, ինչպէս Արիստակէս, Վրթանէս, Դանիէլ, Յուսիլի Բ, Արքահամ Ա, Կոմիտաս, Ներսէս Գ, և մեր հայրապետաց մեծազոյն մասը: Երիցներէ, ինչպէս Փառէն, Սուրմակ, Մհարոք⁴, Յովսէփ: Երբեմն ուղղակի աշխարհական դասէն. ինչպէս Լուսաւորիչ:

1. Գր. բղբոց, 218: — 2. Արքարատ, 1897, 129:
— 3. Աստ' 59: — 4. Երէց ձեռնադրուած ս. Առակէն. Հմմա. Կարեւոր. Խնդիրներս, 230:

Յուսիկ Ա., Ներսէս, Զաքարիա Ա.: Յաճախ
վանականներէ. զոր օրինակ Արխտակէս՝
որ անապատէն տարուեցաւ իրը փոխա-
նորդ, և յաջորդեց Լուսաւորչին, Յովհան-
նէս Բ վանական թաթլոյ. Յովհաննէս
սիմական, Քրիստափոր Բ անապատա-
կուն. Առղոմն Հայր Մաքենոցաց, Մաշ-
տոց՝ Անւանայ, Անանիա Ա Վարագայ,
Առազիս Ա Անւանայ, Դիոսկորոս՝ Ան-
նահնի, և այլք: Յաճախապատռամե ալ կը
թոյլատրէ աշխարհէ հրաժարելոց եկեղե-
ցական կարգ առնուլ՝ երբ հարկ լինի:
«Եթէ ի կամաց վերակացուին և ի հա-
սարակաց եղրայրութեանն բռնազատեսցի,
կը բատէ, յեպիսկոպոսութիւն կամ յառաջ-
նորդութիւն այլոց և ի քահանայութիւն,
... հաւանեսցի¹»: Ծանրացայ այս կիտին
վրայ, որովհետեւ եպիսկոպոսօրհնէքը ճիշդ
հակառակը կը զրէ: Հայրապետին բերանը
զնելով. «Ճեսէք քննութեամբ, մի՛ ար-
դիօք խոստացեալ է նախ ի կրօնաւորու-
թիւն անապատական կենօք, կամ յայլ
ինչ ուխտը. զի՞ ծանր յանցանք է ձեռ-
նազրել զայսպիսիս»: Եւ առ ընտրեալը.
«Ճես զի՞ մի՛ լիցիս խոստացեալ ի կրօ-
նաւորութիւն, զի՞ պիղծ է թողուն զխոս-
տումն ըս և զալ յաստիճանս յայս (եպիս-

1. ՅՃԽՊԱ. Վ. Անետիկ, 1838, 212:

Կաթ. Ընտր. և Զեռմ.

կոպոսութեան), և ընդդէմ կարգաց եկեղեցւոյ¹» : Կը համարիմ՝ թէ այս արգելքը ստեղծեց եղիսկոպոսօքնէից շարադրովը՝ Ն. Լամբրոնացին², որ ի բնէ չհանդուրժող մ'էր վանականաց քահանայացման³ . թէ պէտ գործնականին մէջ այդ արգելքը չըշարգուեցաւ երբեք նաեւ զնողին վերջ :

2. Մեր ազգն ի սկզբան իւր առաջին առաքելոյն Լուսաւորչի տոհմին սեպհականնեց հայրապետական աթոռը՝ քրմական կամ զեւտական զրութեամբ, և այսպէս ալ մնաց՝ ցորչափ տեւեց անոր զարմը. և իրարու յաջորդեցին Գրիգոր, Արքատակէս, Վրթանէս, Յուսիկ, Ներսէս ու Ամհակ: Արքատակէս կ'անցնի հօրը տեղ, «որպէս ըստ զրեցելոյն ի զէպ՝ թէ ֆոխանակ հարց եղիցին որդիք կալ իշխան ի վերայ երկրի⁴» : Վրթանէս զեռ աշխարհական, «խնդրէր յԱստուծոյ» . . . զի ի պաղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտօն տեառն⁵ : Յուսիկ ակամայ ամուսնացաւ, որպէս զի իւր զաւակունք «ի սպասաւորութիւն» . . . տեառն Աստուծոյ կացցեն», և յատկապէս ելնէին անոցմէ «հովիւքն զլիսաւորք⁶» : Բայց որդիքն ան-

1. Գրչ. թ. 1141 ևն Ա. Պ. թ. — 2. Աստ' զւ. թ., լւ, 2: — 3. Հմտ. Մեկն. պարգ. Վենետիկ, 1847, 52—53: — 4. Ազաթ. 642: — 5. Փաւ. 10: — 6. Կոյն' 11:

արժան եղան. «Ե այլ ոչ ոք էր՝ որ զառաջնութիւն զլիսաւորութեան քահանաւյագետութեանն. . . յաջորդէր¹», մինչեւ հասաւ իւր թոսնք ներսէս, յորում փութացին Հայր «յայնմ զաւակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւնն²»:

Ամէն անզամ որ Լուսաւորչի զարմը կ'ընդհատէր, անոնց տեղ հայրապետական աթոռը կը գրաւէր սերունդը Մանազկերտի Աղրիանոս եպիսկոպոսին, որ բրմորդի ու սան մ'եղած էր Գրիգորի, անոր առաջին ձեռնադրեալը, անոր տեղապահն՝ երր կը բացակայէր, և ուղեկից առ կոստանդիանոս այցելութեան ժամանակ³: Որով Գրիգորեանց անջրապետներն այս առանձնաշնորհեալ եպիսկոպոսի ցեղէն լեցուցին սովորաբար. Շահակ, Յուսիկ Բ, Զաւէն, Ասպուրակ⁴, և աւելի վերջ Մելիտէ ու Մովսէս⁵: Գուցէ զիալուածի արդիւնք չէր՝ որ Գիւտին ալ յաջորդեց իւր եղբօրորդին Յհ. Մանդակունի⁶:

Եսյն զրութիւնը կար նաեւ եպիսկոպոսութեան մէջ՝ երր հնարաւոր էր, — թէպէտ Բ. Առաքելական կանոնը կ'արգելուին զայն⁷. — և աւելի եւս ամուսնաւոր

1. Փաւ. 35: — 2. Նոյն՝ 68: — 3. Ազաթ. 630, 650: — 4. Փաւ. 45, 226, 263, 264: — 5. Փարպ, 333: — 6. Կոյն՝ 595: — 7. Մւլիք Թանդ. Ա. 185:

քահանայութեան մէջ¹, որոց դիւրագոյն էր
ապահովել ժառանգներ, այնպէս որ 692/ն
Տրուղեան ժողովը կը զատապարտէր՝ որ
«ի Հայոց աշխարհին զայնոսիկ միայն
ընդունին ի կարգ ժառանգաւորաց՝ ոյք են
ի քահանայական ազգէ» (կան. թ), որ
միայնը թիւրիմացութեան արդիւնք էր ան-
շուշտ, սահակեան կանոններէն ալ յայտ-
նի, որ կը վկայեն՝ թէ ազետ ժառանգոր-
դաց իրաւունքն «օտարաց պիտանեաց և
զիտեց» կու տային²:

Ժ զարէն զարձեալ կ'երեւի կաթողիկո-
սութեան ժառանգականութիւնը: Ա Թէո-
դորոսի կը յաջորդէ եղբայրն Եղիշէ Ա³: յետ
Անանիայի կը նստին Վահան ու Ատեփա-
նոս, և ապա Անանիայի քեռորդին Խաչիկ
Ա⁴: յետ Սարգսի՝ Խաչկան եղբայրը (՝⁵)
Պետրոս Գետաղարձ⁶, և ասոր՝ քեռորդին
Խաչիկ Բ⁷: Կրնան այս ընտրութիւնը եւս
դիպուածի վերագրուիլ: Եկաւ Պահլաւու-
նեաց տոհմը, որոց այդ անունն ու ազ-
գակցութիւնը Լուսաւորչի տան հետ՝ ա-
ռեղծուած մը կը մնայ թէ մեզ համար և
թէ Շնորհալւոյն ինքնին⁸: Աակայն և այն-
պէս անոնք իբր այդպիսիք՝ պահանջող

1. Հմատ. Կանոննը Սահակայ, Սոփերք, Բ, 88, 89.
- 2. Անդ, 89, — 3. Ասողիկ՝ 157, — 4. Նոյն՝ 171,
- 5. Զամէ. Բ, 896, — 6. Ուոհ. 152, — 7. Հմատ. Բանք
յափառ, 540.

հանդիսացան հայրապետական աթոռոյն :
 Եախ ընտրուեցաւ ազգէն Գր. Մազիստրոս
 իշխանի որդին վահրամ¹, որ իւր տոհմը
 կապեց աթոռին հետ, և իւր բրոջ թոռ-
 ները սնուցանել տուաւ՝ «լինել ժառանգ
 սրբոյ աթոռոյն, զի մի սմապայազատ մնացի
 ի զարմէ նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի²» :
 Այդու ալ եղաւ, և անոնց երէցը Գրի-
 գորիս ժամանակին «հաստատեցին ի նախ-
 նական իւրեանց տիրական աթոռ, ըստ
 զրեցելումն. Փոխանտկ հարց քոց եղիցին
 որդիք բռ. ոչ յաղագս ըստ մարմնոյ ընտա-
 նութեան միայն, այլ և ի Հոգւոյն ըն-
 տրութենէ նախ ազգեցեալ³» : Եւ այսպէս
 յաջորդաբար կաթողիկոս նստան տոհ-
 մակիցները՝ վահրամ կամ Գր. վկայասէր,
 Բարսեղ, Գրիգորիս, Ներսէս, Գր. Տղայ,
 Ինչպէս տեսանք. և ասոնց ալ յաջորդեցին
 Գր. Քարավիժէծ ու Գր. Ապիրատ նոյն զար-
 մէն : Այս դրութեան գէմ կը բողոքէր Տար-
 սոնի լայնամիտ առաջնորդը, որ տեսաւ
 աղոցմէ հինգը, զրելով այսպէս. «Նախ զհայ-
 րապետութիւնն և ապա զամենայն եկեղե-
 ցիքս զրաւեցաք ընդ ժառանգութեամբ⁴» :

Նոյն սովորոյթը կը տիրէր ժամանակ
 մը նաեւ Աղթամարայ աթոռին վրայ :

1. Առաջ. 36. — 2. Շնորհ. Նամակ. 9. — 3. Առփերք,
 Ժ. 30. — 4. Մեկն. պարգ. 554:

Կղզւոյն տէրը պարոն Ասֆեղնին՝ իսր
որդին Ատեփանոսը կաթողիկոս ձեռնադրել
կու տայ, յետոյ ասոր յաջորդ կ'ընտրեն
եղբօրորդին Զաքարիա.¹ և սա եւս իւր
աթոռին ժառանգ կը ձեռնադրէ իւր եղ-
բօրորդին Գաւիթ²: Նոյն դրութեան կը
հետեւէր երրեմն Աղուանից աթոռն ալ:
1139էն թափուր մնաց այն քսան և հինգ
տարի: «Ապա մանուկ մի յազգի կարու-
ղիկուաց Գազիկ անուն՝ . . . սնուցին և
ուսուցին, և իրրեւ ի չափ հասաւ», ձեռ-
նադրել տուին³: Աւելի ուշ՝ Գ. Ատեփա-
նոսի մահուամբ դարձեալ կ'ընդհատի ա-
նոնց կաթողիկոսութիւնը, և կղերը տես-
նելով՝ որ «ոչ կայ յազգէն յայնմանէ
հափիսկոպոս կամ քահանայ, բայց մանուկ
մի սարկաւագ», զայն քահանայ կը ձեռ-
նադրեն, և կը տանին Գանձակի իշխեցող
Ամիր Օմարի, որպէս զի հրաման տայ
կաթողիկոս ձեռնադրել: Երբ նա դիտեց՝
թէ «Կարի մանուկ է տիովք», պատաս-
խանեցին՝ թէ «Վասն զի սա է յազգէ
կաթուղիկոսաց», և սմա անկ է աթոռն».
և ձեռնադրեցին զայն՝ Յովհաննէս ան-
ուամբ⁴: Լասկած չկայ՝ որ Աղթամար և
Աղուանը հետեւող եղան Պահլաւունեաց
օրինակին:

1. Թով. Արծր. 362, 363, 364, 366. — 2. Կիբակ. 101. — 3. Նոյն՝ 90.

Յ. Այս եկեղեցական օրինաց մէջ ոչ
մէկ որոշում կայ հայրապետութեան հը-
րաւիրելոց հասակին նկատմամբ, ուր գէթ
եպիսկոպոսօրնէքը կը պահանջէ եպիսկո-
պոսէն լինել «իրրեւ յիսնամենից», — թէ-
պէտ կարգիդ շարադրողը Տարսոնի եպիս-
կոպոս ծեռնադրուեցաւ «քսան և երից
ամաց¹». — և Ասոյ 1246ի ժողովը կը սահ-
մանէ եպիսկոպոսին «մի պակաս քան զե-
րեսուն ամս»՝ և երիցուն՝ «քան զքսան-
հինգ ամս²»։ Օրինակներն հակառակ են
կաթողիկոսութեան մասին։ Լուսաւորչի
թոռնը Գրիգորիս «հնգետառանամենից»
կաթողիկոս կարգուեցաւ վրաց ու Աղուա-
նից³։ Ուսկից կրնանք գուշակել՝ թէ ինչ
կ'իմանար Փաւստոս՝ որակելով զՅուսիկ
«մանուկ» կամ «աւուրբք մանուկ» հօր
աթոռն ելած պահուն⁴։ Փոքր վկայասէրը
Գրիգորիս յիսուն երեք տարի հովուապե-
տական ցուալը բռնած⁵, «նստաւի հայրա-
պետական աթոռն՝ մինչ էր ի տղայու-
թեան հասակին, վասն զի չեւ եւս լեալ
էր սկիզբն մօլուացն», կը զրէ Մատթէոս⁶.
և կիլիկեցւոց Տարեգիրբը՝ թէ կաթողի-
կոս զրուեցաւ «ընդ դաստիարակաւ ծերոց,
զի տղայ էր տիօք և ոչ եւս ունէր մօ-

1. Հայապատում, 416. — 2. Կիրակ. 169. — 3.
Փաւս. 10. — 4. Կոյն՝ 29, 30. — 5. Առփերք, ԺԴ, 67.
— 6. Ուսէ. 412.

բուր¹»։ Հ. Ալիշան անոր 18 տարի կու
տայ²։ Խակ հասակի մէջ ընտրուեցաւ նաև
Գրիգոր Քարավէժ, ինչպէս կը զրէ Լամ-
բրոնացին՝ թէ Լեռնէ հրաւիրուեր է «ի
մանուկ կաթողիկոսին ձեռնազրելն», և
կը յիշէ «զմանկանն անհանճարի զիր³»,
որ կիրակոսէ եւս կը կոչուի «Գրիգորիս
տղայն⁴»։ Հասակին վերազրելի է իւր
եղերական վախճանն ալ⁵։ Այս տհաս
ընտրութիւնը բնականապէս աթոռի ժա-
ռանգականութեան պտուղներն էին, ինչ
որ նկատեցինը նաև Աղուանից քով։ Ասոր
հակառակն ալ կայ երրեմն, ալեւորներ՝
որ տարածամ յաթոռ կ'ելնեն։ Այսպիսի
էր Սողոմոն, զոր երբ խրճթէն կը տա-
նէին հայրապետանոց, և ազնուականնե-
րէն ոմանը հարցուցին՝ թէ այդ հասակին
ինչո՞ւ կ'երթար այն ծանր պաշտօնին,
պատասխանեց. «Երթամ՝ զի զեղսփա-
ճոյն նկարողաց ռեւել զիս ընդ այլ հայ-
րապետան տամ յորմ եկեղեցւոյն»։ Արդա-
րեւ յաջորդ տարին կը վախճանի, և «կեն-
դանազրի ի քաւարանի սրբում⁶», հայ-
րապետական եկեղեցւոյն մէջ՝ ուր կը նը-
կարուէին կաթողիկոսունը։

1. Գրչ. թ. 1808 Ա. Պ. — 2. Շնորհ. եւ պրգ. իշր.
Վ. Ենետիկ, 1873, 53, 45. — 3. Գր. Տղայի նմկ. 224,
227. — 4. Կիրակ. 69. — 5. Ասա. 40. — 6. Ցով.
կթղ. 141.

4. Ինչ վիճակէ և ինչ հասակէ ալ ըն-
արուեին լուսաւորչի յաջորդները, Հայք
անոնց մէջ կը փնդուին միշտ բարոյական
արժանաւորութիւնը, այսինքն բարեպաշ-
տութիւն և զիտութիւն աստուածային օրի-
նաց: Առաջինը զրեթէ միշտ անպակաս
եղեր է մեր հայրապետաց վրայ, մինչեւ
այն շրջանը՝ զոր նկատեցինը ցարդ, եր-
կրորդը՝ յաճախ փոքր և մերթ բարձր
չափով փայլեր է անոնց լեզուին ու զրչին
ներքեւ: Երկար կը լինէր՝ մեր հին մա-
տենազրութենէն անոնց շատերու մասին
տրուած զովեստները մի առ մի կոչել հոս,
երբեմն արդար, ու մերթ չափազանցուած:
Բայց անկասկած հրաշալի դէմքեր եղան
ու Գրիգոր և պայտզատները, ընդհանրա-
պէս ընդունած լինելով յունական նուրբ
դաստիարակութիւնը Հայտառանէն զուրս.
բոլորն ալ աստուածարեալ ու զարգացած
մտքեր, մին հիմնող և միւսերն աներկիւղ
ու պայքարող ախոյաններ ու նահատակ-
ներ ըրիստոնէութեան ի Հայս: Անոցմէ
վար չմնացին նաեւ իրենց տոհմակից հա-
մարուած Պահլաւունիք, արեամբ ու մտօք
ազնուական, լաւ կրթուած, հմուտ, կրօ-
նական լայն տեսութեամբ ու բեղնաւոր
զրիչներով մարդիկ: Եղան աղոնց հետ
մրցող ուրիշ հայրապետներ եւս, Գիւտ,

Մանդակունին, Եզր, Ներսէս Շինող, Կոմիտաս, Օձնեցին, Զաքարիա Ա, Կոստանդին Ա, Գր. Անաւարզեցին և այլք, որոց շատերն իրենց համբաւն արդարացնող մատենագրութիւն ալ թողուցին:

Սակայն զարտուղութիւնը եւս պակաս չեն. ինչպէս Զաւէն Ազրիանոսեան, «այր չարաչար՝ խիստ և նախանձոտ», որ աշխարհականացուց հայ կղերը, զինուորական զգեստը հազնելով ինը և զգեցնելով անոր. և որոյ օրինակին հետեւեցան երկու յաջորդներն ալ՝ Շահակ և Ասպուրակ¹: Տիսուր անուն ու զործ մը թողուցին Մովսէս եղիվարզեցին և Արրահամեւս, առաջինը հիմնելով հայկական հերձուածը, և երկրորդն ամրացնելով զայն, բաղկեղոնեան խնդրոյն պատճառաւ, զոր երկուըն ալ՝ զուրկ աստուածարանական հմտութենէ և յունարենի ծանօթութենէն՝ չէին հասկացած. հերձուած՝ որ բարոյական ու բաղաքական վնասուց և աղիտից աղբիւք մ'եղաւ ազգիս՝ մեր ամրողջ անցելոյն մէջ, հակառակ ոմանց անոր վերազրած ցնորական նպատակաց ու բարեաց. և որոյ մասին ընդարձակօրէն խօսած եմ այլուր պատմական անհերթելի փաստերով²:

1. Փաւո. 263-64. — 2. Կարեւոր խնդիրներ, 389-95, 403-16 ևն.

Ծ. Ամեր ազգն իւր ընտրելոց վրայ ներ-
քին արժանաւորութեան հետ կը փնդոէր
ու կ'ախորժէր տեսնել արտաքին վայել-
չութիւնն ալ, ինչ որ յատուկ է զարգա-
ցած ցեղերու։ Եւ պատմութեան մէջ կան
աղոր օրինակները, մեծ մասամբ ազնուա-
կան տոհմէ ու փափկասուն կենցաղէ ըն-
տրեալները, ինչպէս էին Գրիգորեանք
ու Պահլաւունիք։ Այսպէս ո. Յուսիկ կը
նկարազրուի՝ «տիօք առոյզ, և բարձր
հասակաւ, գեղով երեսաց սրանչելի և
չընալ¹»։ Իւր թոռնը Ներսէս՝ հոգեկան
գերազանց յատկութեանց հետ՝ կը փայլէր
նոյնպէս «ցանկալի գեղով իւրով, երկայն
հասակաւ, և չընաղատես հերօք վարսից
իւրոց. . . տենչալի ցանկալի և զարմա-
նալի և ահազին ամենայն նայեցող տե-
սողաց»։ այնպէս որ «ոչ զտանէր ուրեց
նման նմա գեղեցկութեանն ի վերայ երե-
սաց երկրի»։ Եւ երբ հայրապետութեան առ-
թիւ՝ զինք ընտրող ժողովոյն առջև «զհերսն
զանգրագեզս զվայելուչ թագազանզուր
վարսիցն» կը վիրային ըստ պովորութեան,
«առ յոյժ գեղեցկութեանն բազումք յար-
տասուս հարան՝ որք լուանն կամ տեսին»
անոր զիխոյն և անձին այդ անշըացումը²։
Յովհ. Իմաստասէր երբ զնաց ելաւ ա-

միրապետին առջեւ, իւր բնատուքը զեղեցկութեան հետ խառնած արուեստականն ալ՝ զոր ժամանակի քաղաքականութիւնը կը պահանջէր, և արարացյին տեսաւ «զաւարտահասակ» դիտակն իւր՝ եւս առաւել փայլուն և պաղպաջուն զգեստուք պըճնաւորեալ, — որոց ներքեւ սակայն ծածկուած էր մարմինը խայթող խարազր, — և զաղէրեկ ծաղկեալ մօրուսն սոկեփունջ կազմեալ » սոկի փոշւով, «որ իջանէր մինչեւ զգրապանս զգեստունորա», հիացաւ մնաց ու մեծարեց զայն շըով¹:

Հոնի նստող Արդիս կաթողիկոսի մասին կը կարգանք՝ թէ էր նոյնպէս «այր սուրբ և հրաշափառ տեսլեամբ²»: Հրապուրիչ էր Շնորհալոյն եղբայրը Գրիգորիս, «բարձրահասակ և զեղեցկատեսիլ և բարուքն խոնարհ³»: Եւ երբ Լատինաց հրաւիրով յԵրուսաղէմ գնաց անոնց ժողովին, պատկառանք մ'ազդեց անոնց վըրայ, որ «ըստ վայելչազգեաց և պաշշաճագեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և զհոգւոյն զեղեցկութիւն»՝ կ'ըսէ Ամմ. Անեցին⁴: Ուրիշ վեհութիւն մ'ունէր Գրիգոր: Տղայ, «այր սկայածեւ և ահարկու տեսլեամբ, զուարթերես և առատասիրտ,

1. Յ. կթդ. 129-81. — 2. Ուու. 253. — 3. Կոյն. 412. — 4. Շնորհ. և պրդ. 157.

Ու իմաստութեամբ և գիտութեամբ և աս-
տուածային շնորհօք, հանճարեղ և իմաս-
տուն ի խօսս և ի դարձուածս բանից¹» :
1174ի յիշատակազիր մ'ալ կը յիշէ անոր
«զլաւութիւն բարուց և զկորովութիւն
մտաց... մանաւանդ զզեղեցկազունութիւն
կերպարանին բնաւին մարմնոյն» : Եւ անոր
անունն «ընդ ոլորտս տիեզերաց հոչա-
կեալ եղեւ, մինչ զի այլասեռը հեռարը-
նակըն ընթացեալ մեծապարզեւ ընծայիւք
ի տեսիլն չընալ և զարմանալի, որ տե-
սանէրն՝ պշնոյր և երթեալ համբաւէր,
և որ լուէրն՝ բորբոքէր առաւել²» : Անոր
յաջորդը Գր. Քարավէժ՝ իւր մատաղու-
թեան մէջ էր նոյնալէս «հասակաւ զեղեցիկ
և բարիոք տեսանելով» , կ'ըսէ պատմիչը³ :
Եւ բոլոր նկարագրութեանցդ մէջ կը շեշ-
տուի հասակին բարձրութիւնը, որ ան-
տիական կաթողիկոսաց վրայ կը մեղմէր
չափով մը տարիներու թերութեան անա-
խորժ ազգեցութիւնը :

Այդ արտաքին զեղը հաճելի՝ բայց ան-
հրաժեշտ չէր անշուշտ, բարոյական մեծա-
գոյն արժանիքն անտեսել կու տար եր-
բեմն առերեւոյթ անշըռութիւնն իսկ : Առ-
զոմոն ծերութեան հետ նաեւ «յանհնարին

1. Տարեկիրք Կիլիկ. ոկր: — 2. Հառաք. յլտկր: —
3. Կիրակ. 69.

ճգնողական վարուց յոյժ անտւազեալ»
էր՝ երբ հայրապետութեան տարուեցաւ՝
Եւ Շնորհալին իւր երկարակեաց հարա-
զատին հետ՝ — որոյ զեղով ալ թերեւս
զարդարուած էր՝ — տարիներու ծան-
րութեան տակ ընկճուած, հիւծած, և
«ոչինչ նուազ և մեր նովին տկարութեամբ
զգածեալ եմք», կ'ըսէր՝ անոր յաջորդե-
լու պահուն², այնպէս որ հազիւ եօթ տարի
հովուեց ու վախճանեցաւ:

Թ. Մահմետական լծին ներքեւ: — Մու-
րինեանց զահը տապալած է 1375էն ի
վեր, հայ հին ազնուականութիւնը ջըն-
ջուած կամ ցրուած, և հայ ազգն ու եկե-
ղեցին կը գտնուին այլաղենից քմահան
վարչութեան ներքեւ, որ կ'եղծանէ հայ-
րապետական ընտրութեան հին կարգելն
ալ: Մեր թագաւորաց կամ իշխանաց փո-
խան՝ կղերին քով կը նստի հիմայ ժողո-
վուրդը, թէպէտ ոչ միշտ, նշանակելու հայ-
րապետը, և ազոցմէ վերջ եւս՝ ու յաճախա-
զոյն առանց աղոնց ալ՝ օտար բռնաւորներն
են որ կը հաւանին կամ ուղղակի կը կար-
գեն հայ եկեղեցւոյ պետերն՝ առանց որ
և է կանոնի ու սահմանի: Այս պատճա-
ռաւ ստիպուած ենք սոյն շրջանիս յատ-
կացնել առանձին էջ մը:

Աղթամարայ կաթողիկոսութիւնը, որ
իւր հիմնուելէն ի վեր մահմետական իշ-
խանութեան ներբեւ էր, Շնորհալւոյն ըսել
կու տար՝ թէ «ինքնաշարժ ախտիւը և
բռնակալաց աշխարհի հրամանօք՝ զան-
ձինս իւրեանց յայս աստիճան հոգեւոր
բարձրութեան ձգեն, և ոչ ընտրութեամբ
Աստուծոյ և աստուածայնոց արանց (եպսց.
ու վեհրց.) համօրէն ազգիս, որէնն
պահանջէ¹»։ Երյնը կը վկայէր 1342ին
Ասոյ ժողովն ալ Աղթամարայ և Աղուա-
նից կաթողիկոսաց համար, թէ բռնակալ-
ներէ «ընդունին զհաստատութիւն ժամա-
նակաւոր իշխանութեան և ոչ զհոգեւորին,
զի զանին չէ ինչ փոյթ զհոգեւորաց ըրիս-
տոնէիցն²»։ Կաթողիկոսութեան մէկ ճիւ-
զին ընթացըն էր այս Գալով ընին, Լու-
սաւորչի աթոռոյն, անոր ժառանգներն ալ
կը վարակուին նոյն «ախտիւը», և յա-
ճախ հեթանոս իշխեցողներէ կ'ընտրուին,
և անձամբ կ'ընտրեն իրենց յաջորդներն
ալ, առանց առնելու ազգին հաւանութիւնը։
1409ին Յակոբ Գ. Կիլիկիոյ ամիրային հը-
րամանաւ կը ստանայ աթոռին տիրութիւ-
նը, և յետոյ իրեն որսալով Կիլիկիոյ եպիս-
կոպոսներէն զոմանս, որ պարզ ձեւակեր-
պութեան համար էր, կաթողիկոս կը նստի³։

1. Կամակ. 133. — 2. Mansi, XXV, 1258. —
3. Զամէ. Գ, 455.

Բայց մայր աթոռիդ ուրիշ վախճան մը
 պահուած էր։ 1441ին՝ մինչ տակաւին կը
 գտնուէր Ասոյ մէջ, արեւելեայք խորհե-
 ցան փոխազրել զայն յլջմիածին՝ ուր
 եղած էր ժամանակաւ։ Պատճառները՝ զորս
 կը թուէ անոնց պարագլուխը թուվմա-
 մեծոփեցին, զանազան են և մէկ մասը
 կեղակարծ։ Հոդ զմեզ հետաքրքրողն է
 այդ որոշումը տուող ու զկիբակոս վիրա-
 պեցին ընտրող ժողովը, որ հիներէն՝ տար-
 բեր ու նոր ձեւ մ'ունէր, կազմուելով
 բազմաթիւ եղիսկոպոսներէ, վարդապետ-
 ներէ, քահանաներէ, վանականներէ, և
 անոնց հետ նաեւ «ազատք և որդիք ա-
 զատաց, ձեսնաւորք և տանուտերք, և ան-
 րիւ և անհամար բազմուրիւն ժողովրդեան
 արտեց և կահանց», որոնք այս առաջին
 անգամ կը մասնակցէին ընտրական ժո-
 ղովի մը, որ միանգամայն նպատակ ու-
 նէր աթոռոյն փոխազրութիւնը։ Հոս ու-
 րեմն և այս նշանաւոր թուականէս կը
 սկսի հայ ժողովուրդը՝ – և պիտի շարու-
 նակէ երբ իրեն թոյլ տրուի՝ – խառնել
 իւր ձայնը հայրապետական ընտրութեանց
 մէջ։ Իսկ այդ գումարման համար յլջմի-
 ածնի մէջ՝ կանխաւ խնդրեցին Երեւանի
 Աղուպ բեկ բռնակալէն, և «հրաման եղեւ
 ի բռնաւորէն օրհնել կաթողիկոս՝ առանց

հակառակութեան¹» : Այլազգիդ կ'երեւի
թէ նոր ընտրութեան չի խառնուիր, այլ
միայն կը թոյլատրէ ժողովն իւր իշխա-
նութեան մէջ, և բարեկարգութիւն կը
պահանջէ ընտրողներէն :

Անոնք շուտով ձանձրացան կիրակոսէ,
և քառասուն եպիսկոպոսը ու քահանայք
միարանած՝ աթոռքնելէց ըրբն զայն, որոյ
մասին պիտի խօսինք յետոյ : Եւ յիշեալ
ըեկէն խնդրեցին, և նա անոր տեղ «հրա-
ման տայ ձեռնադրել զեպիսկոպոս ջլոյն
թաղէսոփ» Գրիգոր մակուացին, և «Ճո-
ղովն անիրաւ մտեալ ի սուրբ Էջմիածին,
և սկսան պատարագել զՔրիստոս, և ու-
րախութեամբ և ոտնահարութեամբ ձայ-
նեցին Հայոց տեառն Գրիգորի», կը գրէ
նոյն Մեծոփեցին² :

Մակուացիդ և իւր աթոռակալն Արիս-
տակէս կը կռուին իրարու հետ : Էջմիածնի
վարզապետներէն Սարգիս կ'օգտուի առ-
թէն, 1461ին Լուսաւորչի աջը կը գող-
նայ և կ'երթայ Զահանշահ ամիրայէն
խնդրելու կաթողիկոսութիւնը : Բան զինքն
արթուն կը փրթի Աղթամարայ կաթողի-
կոսը Զաքարիա, կը կանխէ քան զմըր-
ցակիցը և հարուստ պարզեւներով կը շահի

1. Այրու. 2. Ամեշ. 215-16. — 2. Գրչ. թ. 489,
1539 ևն Ա. Պատ.

Կաթ. Ընտր. և Զիոն.

բռնաւորին սիրտը, որ կը հրամայէ՝ որ
նախ Զաքարիա նստի Եղմիածնի աթոռը,
և ապա անոր յաջորդէ Սարգիս, ինչողէս
եղաւ իսկ¹:

Ստեփանոս Ետաղտկացած այլազգեաց
բռնութիւններէն, 1547ին իւր տեղ կա-
թողիկոս կը ձեռնադրէ զՄիքայէլ, և ինք
կը սկսի թափառիլ ի Պոլիս, Հռոմ և
այլուր: Ի դարձին կ'ընդունուի տեղապա-
հէն պատուով՝ իրրեւ նախազահ կաթողի-
կոս, և վախճանելով՝ աթոռը կը մնայ
Միքայէլի²: Թաղէոս Բահոննելին յառաջ
իւր տեղ 1575ին կաթողիկոս կը զնէ իւր
փոխանորդն Առաքել: Սա եւս չկարենա-
լով հանդուրժել արտաքին բռնութեանց,
1579ին իւր տեղ կը ձեռնադրէ զԴաւիթ
Ետ, և ինք կ'առանձնանայ ու կը վախ-
ճանի մենաստանի մը մէջ³: Եւ այդ բոլոր
ընտրութեանց մէջ որ և է բաժին չունի
հայ ազգը:

Նոյն Դաւիթ 1593ին «ձեռնադրեաց
ինքն միւս եւս կաթողիկոս» զՄելքիսէթ,
ըստ ոմանց իրր օգնական, ըստ այլոց՝
բռնազատուած այլազգի իշխանէն՝ զոր
կաշառեր էր Մելքիսէթ: Երկուքն ալ յե-
տոյ ճնշուած անօրինաց հարկապահան-

1. Զամէ. Գ, 503—4, 506. Առ. Դաւիթմեցի, Վարչպատ. 1884, 337. — 2. Զամէ. Գ, 518—19. — 3. Նոյն՝ 533.

Հութեան ներբեւ, կը հրաւիրեն Տիգրա-
նակերտի եպիսկոպոսը Արագիոն՝ գալու
հատուցանելու աթոռին պարտքերը, խոս-
տանալով անոր թողուլ հայրապետութիւ-
նը։ Արագիոն կ'երթայ, բայց վէճ ու շը-
փոթութիւն կը ծագի իրենց մէջ։ Երկու
կաթողիկոսունք խոյս կու տան Տաթեւու
վանքը, և ջուղայեցիք և արեւելեայք «ժո-
ղովեալ զամենայն ժողովուրդ երկրին զե-
կեղեցականս և զաշխարհականս, և եղեալ
սիւնհոգոս մեծ, և այնպիսի մեծախումբ
հանդիսիւ ձեռնադրեցին զվարդապետն
Արագիոն կաթողիկոս ամենայն Հայոց»
1603ին, անունը Գրիգոր գնելով։ Սա յե-
տոյ միւս կաթողիկոսաց թելազրութեամբ՝
Շահաբասի ագահ սուրհանդակներէն խեղ-
զուած ու տանջուած, ձգեց փախաւ իւր
նախկին աթոռը, ուր և վախճանեցաւ յա-
ջորդ տարին¹։

Դաւիթ վերջապէս հրաժարեցաւ իշխա-
նութենէն², և Մելքիսէթ միայն մնացած,
1624ին բարեկամաց խորհրդով իւր Սա-
հակ եղբօրորդին կաթողիկոս օրէնքց, և
կոնդակով ծանոյց ազգին՝ թէ ծերութեան
պատճառաւ կը հրաժարի աթոռէն ու Սա-
հակայ կը թողու. և թղթով խնդրեց շա-
հէն՝ «զի սմա շնորհեսցես զկաթողիկո-

1. Դաւիթի 2-3, 4, 7, 19-20. — 2. Կոյն 165.

սութիւնն» : Այդ թղթով ու պարզեւերով
Սահակ գնաց շահին դռուը՝ «առ ի սեպ-
հականացուցանել ի վերայ ինքեան զկա-
թողիկոսութիւնն», ինչպէս որ եղաւ ալ¹ :
Մելքիսէթ յետոյ փախուստ տուաւ յիլով,
ուր և վախճանեցաւ² : Իսկ ջուզայեցիք
չուզեցին ճանաչել զՍահակ, որ ապա
զաղանապէս Օսմանցոց սահմաններն ա-
պաւինեցաւ³ : Եւ Հայք ինդրեցին Պարսից
Շահսէֆի թագաւորէն «հրաման կաթողի-
կոսութեան» Մովսէս վարդապետին հա-
մար, «և շահն ետ հրաման և զթուղթ
կաթուղիկութեան : ... Ապա ամենայն ազգն
Հայոց որք յարեւելս և յարեւմուտս կա-
յին, միաբանեցան թղթով և բանիւ, և
արարին զՄովսէս վարդապետն կաթու-
ղիկոս⁴» 1629ին, այսինքն ընդունեցան
շահին ընտրածը :

Անոր վախճանելու պահուն «ժողովե-
ցան առ նա եպիսկոպոսը և վարդապետը
և երեւելի արք», ու ինդրեցին՝ որ ինքն
իսկ նշանակէ իւր յաջորդը, որուն նախ
ընդղիմացաւ, և ապա զիջանելով՝ ցոյց
տուաւ զՓիլիպպոս, որուն Հայք հաւա-
նեցան առանց ժողովի, այլ «յիւրաքան-
չիւր տեղեաց առաքեցին զթուղթս վկա-

1. Պաւրիժ. 172-73, 175-76. — 2. Կոյն. 174. —
3. Կոյն. 176-77, 180. — 4. Կոյն. 182.

յականս», և 1633ին ձեռնադրեցին զայն¹: Խոկ 1655ին «ժողովեալ վարդապետքն և հոգիակոպոսունք»՝ որ Փիլիպպոսի մահուան առթիւ հաւաքուած էին, մնացին Եջմիածնի մէջ մինչեւ մօտաւոր ծաղկագարդին օրը, և «ի նմին տօնին օրհնեցին զիտակովր (Պ) վարդապետն կաթողիկոս²»:

Ազոր օրով ու զէմ Եղիազար վրդ, անթաղցի խորհեցաւ հիմնել օսմանցի հպատակ Հայոց զատ կաթողիկոսութիւն մը: Համաձայնեցաւ Սսոյ Խաչատուր կաթողիկոսին հետ, առատ պարզեւաց փոխարէն եպարքոսէն ստացաւ առանձին կաթողիկոսութեան հրովարտակ մը, և հակառակ խորհրդոց ազգին երեւելեաց, որ չէին ուզեր աթոռոյ նոր բաժանում մը, Խաչատրէն ձեռնադրուեցաւ չորրորդ կաթողիկոս ու գնաց նստաւ Երուսաղեմի մէջ: Խոկ յետ Յակոբայ մահուան՝ 1682ին անցաւ գրաւեց անոր աթոռը, հրաւիրուելով Եջմիածնի միարանութենէն³:

Այսողէս ուրեմն մեր այս պատմական վերջին շրջանին հայրապետական ընտրութիւնը խաղալիկ մ'էր դարձած քմահաճայից: Զայն կատարողները յաճախ օտար բոնաւորներ են. մերթ կաթողիկոսունք

1. Պատրիա. 242. — 2. Կոյն. 266. — 3. Զամէ. Պ, 677-700, 719-20.

«ինքնաշարժ ախտիւք» կ'ընտրեն իրենք զիրենք և իրենց յաջորդները, կամ նոր աթոռներ կը հիմնեն. ու կաշառը մեծ զեր կը խաղայ: Խսկ ազգը բիշ անզամ կարող է ի գործ զնել իւր պատմական իրաւունքը՝ ժողովրդեան ձեռքով, որ հոս իրեն առաջին անզամ կը սկսի ներկայացուցիչ հանդիսանալ, և ժողովման զըժուարութեան ժամանակ երբեմն թղթերով կը յայտնէ իւր հաճութիւնն ընտրելոյն:

Ժ. Արուրնեցարին: — Լուսաւորչի աթոռին վրայ բազմողները թէպէտե սահմանուած մնալու հոն ցմահ, սակայն կը հարկադրուէին երբեմն պէսպէս պատճառներով նաեւ իշնել անտի ակամայ կամ կամաւ, և ուրիշի թողուլ զայն: Այս հրաժեշտն ալ ունէր իւր օրինական ձեւակերպութիւնքը, իւր յատուկ և ողբերգական ու մերթ սրտաշարժ կամ խորշելի տեսաբանները, զորս կ'անցնինք նկատել՝ ի լրումն մեր ներկայ ուսումնասիրութեան:

1. Մեծն Ներսէս գժտելով Արշակայ հետ, երեսը պահեց անորմէ, առանց այլ եւս տեսնուելու ոստանին և արքունեաց մէջ: Թագաւորն առաւ պարզապէս կաթողիկոս զրաւ «փոխանակ Ներսիսի ըզգունակ», և այդ գործով իսկ Ներսէս

հրաժարեցուցուած համարուեցաւ¹. թէպէտ
Զունակ իսկապէս հակառակաթոռ մ'էր, և
Եերսէս յետոյ Պատպայ օրով վերստին ձեռք
առաւ հովուապետական ցուպը : Աահակ
երբ չհաւանեցաւ Արտաշիսի գահընկեցու-
թեան, վուամ հրամայեց «զտունն կաթու-
ղիկոսական ի սրբոյն Աահակայ յարբու-
նիս ունել²» : Յետոյ նախարարը զղջացած՝
խնդրեցին որ վերստին դառնայ աթոռը.
բայց նա մերժեց³ : Եթէ կարելի է հաւա-
տալ խորենացւոյն, Պարսից արքայն սըր-
բոյն յաջորդին Շմուելի կը յանձնէ աշ-
խարհական գործեր, և Աահակայ կալուած
կը թողու զիւղեր, որպէս զի հոն բնակի,
«միայն իշխանութիւն ունելով վարդապե-
տութեան սովորական կրօնիցն, և ձեռ-
նադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շմուէլն
յանձն առնուցու⁴» : Տեսանք նաեւ Գիւտի
հրաժարեցումը Պերոզէ՝ ուրացութիւնը մեր-
ժելուն պատճառաւ⁵ : Այս երեք օրինակաց
մէջ հրաժարեցնողը թագաւորներ են ինքն-
իշխան կամօք :

Աահակայ առաջին յաջորդին Առւրմա-
կայ «ընդդիմացեալ ոմանց ի զօրավար
իշխանացն Հայոց, մերժեալ ընկեցին զնա-

1. Փաւս. 123. — 2. Աստ. 23. — 3. Փարպ. 75—78.
— 4. Խորեն. Գ, կը. — 5. Աստ. 25.

յիշխանութենէ կաթողիկոսութեան»։ Անոր յաջորդը Բրբիշոյ ասորին և իւր ազգակից պաշտօնեայք եկած էին ու կ'ապրէին «տանատիկնօք» ըստ իրենց աշխարհի սովորութեան։ որուն չնանգուրժելով մերոնք, նոյնպէս «խոտեալ մերժեցին զիրբիշոյն ի քահանայապետութենէն Հայոց», իմացընելով նաեւ Վոամայ, որոյ կողմանէ զրկուած էր¹։ Հոս զործողք իշխաններն են։

Քրիստոփոր Բ «դիպաւ այր հաղարտ և ամրարտաւան, որոյ լեզու իւր էր իրրեւ զսուր սուսեր»։ այնպէս որ խոռվութեանց պատճառ եղաւ։ Ժողովը որ կազմուեցաւ զինք դատելու², լսեց «ի նորին ընտանեաց» երկու հոգւոյ ամրաստանութիւնը։ Յետոյ քանի մ'եպիսկոպոսներ զնացին անոր տունը, և «ասին ի նմանէ զիւկեղն (որ է քօղ) պատուոյ քահանայապետութեան, և ընկեցին զնա ի կարգէն և հալածեցին զնա անարգանոօք»։ Եպիսկոպոսներ են՝ որ ժամանակի մեր բարուց յատուկ այդ բիրտ եղանակն ի զործ կը դնեն հայրապետին վրայ։

2. Հրաժարեցումը միշտ յաջողութեամբ չէր պսակուեր, և զրկելոյն կամքի ուժէն կախուած էր։ Յիշեցինք վահանկան ա-

1. Փարզ. 72-73. — 2. Աստ. 29. — 3. Աւբէնս. 158.

թոռընկեցութիւնը¹, որուն սակայն չհամակերպեցաւ նա. «Ե յերկոցունց կողմանց նզովիւք լցին զաշխարհս Հայոց»: Ատեփանոս վրդ, երկու ընկերներով վասպուրական գնաց՝ «ի յանդիմանութիւն վահանայ և Ասուսահնի» թագաւորին՝ անորսպաշտապանին, և բանտ դրուեցաւ: Ու իրուսովութիւնը տեւեց երկու կաթողիկոսաց մէջ, մինչեւ որ երկուքն ալ մեռան մի և նոյն տարին²:

Եռագ վրդովիչ չեղաւ նաեւ Պետրոս Գետապարձի դէպը: Յովհաննէս արքայ և ազատանին անկանոն կեանք մը կը վարէին, ականջնին խցած հայրապետին խրատուց դէմ, որ տաղտկացած՝ փախաւ տուանձնացաւ չորս տարի վասպուրականի Զորոյ վանքը: Անոնք ի վերջոյ համոզեցին ու դարձուցին զայն, որ հազիւ յԱնի մտաւ, բռնեցին բանտեցին, և անոր տեղ Աանահնի հայրը Դէոսկորոս «նստուցին կաթողիկոս»: Պետրոսի աթոռնկեցութեան պարզագոյն ձեւն էր այս: Հայեպիսկոպոսունք զառնացած այդ խայտառակութեան դէմ, ոչ միայն ձեռնպահ մընացին Աանահնեցւոյն ընտրութենէն, այլ և «նզովիւք փակեցին զթագաւորն և զամենայն նախարարքն» , որոնք սարսափած՝

1. Աստ' 34: — 2. Ասողիկ' 168-69.

միջնորդներ զբին համոզելու Գետաղարձը՝
դառնալ իւր աթոռը։ Դումարուեցաւ Անոյ
մեծ ժողովը, որոնք «սուզ մեծ հասուցա-
նէին Դէռսկորոսի, և յոյժ պարտաւորեցին
զնա, և մերժեցին ի պատուոյ և ընկեցին
յաթոռոյ հայրապետութեանն»¹։ Ուրիշ
կերպով մ'ալ կը պատմուի անկումդ։ Ան-
ոյ ուսմիկ բազմութիւնն երբ տեսաւ ըզ-
Փետրոս հանուած բանտէն, «ընթացեալ
յանդգնութեամբ ի վերայ Դիռսկորոսի,
պատառեցին զքօղ երեսաց նորա յաւուր
յայտնութեան տեառն, մինչդեռ օրհնէին
զջուրն. . . և հանին զնա անարգանօք ի
բազարէն, և կացուցին զՊետրոս յաթոռ
իւր»։ իսկ Անահնեցին զնաց տրտում իւր
մենաստանը²։

Գր. Վկայասէր իւր տեղապահ Դէռզը³
մերժելու համար³, մարդիկ յղեց և «ընկէց
զտէր Գէորգ յաթոռոյ հայրապետութեանն,
և առեալ զքօղն ի զլխոյ նորա. և Գէորգ
զնաց վիրաւորեալ ի Տարսոն քազաք և
մեռաւ»⁴ սրտին ցաւէն։ Նոյնպէս Բարսեղ
Ա. մեծարուած Պարսից սուլտանէն, և
«արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր»,
զնաց ի Զահան, «յարեաւ ի վերայ տեառն
Թէռդորոսի»⁵ որ հակառակաթոռ մ'էր՝

1. Ուռչ. 87-90. — 2. Կիրակ. 51. — 3. Աստ. 36.
- 4. Ուռչ. 247.

յաջորդած Ասրգսի¹, և «ընկենոյը յաթուոյն զտէր թէողորոս, և առեալ ի նմանէ զքօղն և զզաւազանն և զսուրբ նշանն տեառն Պետրոսի, և արար միահեծան զհայրապետութիւնն իւլ²»:

Յ. Աթոռքնկեցութեան պահուն արեւելեան կողմի Հայոց ցոյց տուած տգեղ բարքերը կը մարբուխն՝ — ազգեցութեամբ եւրոպացւց զրացութեան՝ — Եփլիկիոյ մէջ, ուր նոյն գործը կը կատարուի հաւաքական քննութեամբ ու վայելուչ կերպերով։ Երնորհիւ նորոգութեանդ՝ սրտառուչ երեւութով մը կը ներկայանայ Բ. կոստանդնի հրաժարեցումը։ Հեթում Բ. «նախանձ հակառակութեան բերեալ ի սրտին» անորդէմ, եսլիսկոպոսաց և իշխանաց ժողով մը կը կազմէ Ասոյ մէջ, ուր կու զան ամբաստանիչներ «և զնեն բարուրս բազում» զրադատ բանից ի վերայ հայրապետին՝ անարժան և անպատշաճ լսողաց։ որպէս թէ պատարագէն յառաջ շարբաթ կը խմէր, Հռոմիլայի լկուանոցներէն հարկ կ'առնուր և այլն, «և այսպէս զրադարտեալ զկաթողիկոսն, զորոյ զիրաւն և զճշմարիտն Աստուած միայն զիտէ»։ կոստանդին խոնարհական հեղութեամբ կը պատասխանէր՝ թէ ստոյգ էին ըսուածները,

1. Աչում՝ 38. Ուսւ. 259. — 2. Կոյն՝ 290-91.

ևթէ անոնց գիտցածէն աւելի յանցանքներ ալ ունէր ի ծածուկ, որով անարժան կը խոստովանէր զինքն ունեցած աստիճանին։ Թագաւորն ու ժողովն ըստին։ «Ի բաց հան ի քէն զկաթողիկոսութիւնդ և տուր ցմեզ»։ Եւ նա հոն անոնց ներկայութեան զգեցաւ հայրապետական հանգերձը, որ էին բազմախաչ նափորաը, հինգկրկին եմիփորոնը, պատուական թագը, և դրաւ մեծազին մատանին։ Ճեռքն առաւ Լուսաւորչի աջը և օրհնեց Հայոց թագաւորութիւնն ու բոլոր աշխարհը, գոհնութիւն մատոյց Աստուծոյ, խնդրելով որ ազգին տայ բարի և ընտիր առաջնորդ մը, և զինք զատողաց դատաստանն Աստուծոյ թողլով։ Յետոյ վերստին հանեց զգեստը, ծալեց դրաւ արծաթեայ սեղանին վրայ, և յանձնեց՝ բսելով։ «Ահա զոր խնդրէքդ»։ Անցաւ գնաց հայրապետանոցը. մազեղէն հանգերձ մ'ու կնկուղ մ'առաւ վրան, ողջունեց զամէնքը, և դուրս ելաւ «միայն և լոփիկ»։ Հակառակորդները խորհելով՝ որ կրնար Հայաստան երթալ և իրը կաթողիկոս ընդունուիլ, բռնեցին ու փակեցին զինքը Լամբրոն բերդին մէջ, ուր մեաց չորս տարի¹, և ուսկից յետոյ կեսարիոյ արքեապիսկոպոս ընտրուեցաւ։ իսկ 1307ի

ժողովը զայն կրկին դարձուց հայրապետական աթոռին վրայ¹ :

Եւսն Դ. «ընկէց» զՅակոբ Բ., որովհետեւ յանդիմանուած էր անկից²։ Պէտք է հասկանալ միշտ ժողովով՝ ըստ կիլիկեան սովորութեան։ զոր նախայիշեալ օրինակէղ զատ՝ նկարագրուած կը զըտնենք նաեւ Ասոյ 1342ի ժողովէն՝ այսպէս։ «Զկարէ թագաւորն հրաժարեցուցանել կամ պատժել իրաւամբը զկաթողիկոսն։ այլ եթէ չար ինչ զործեսցէ հակառակ կանոնաց, վասն այնը դատաստանաւ ընկենուն զնա կանոնք և պատժեն։ Յայնժամ արքայ ժողովէ զեպիսկոպոսունըն որ ընտրեցին զայն կաթողիկոս, և ընկենու զնա և պատժէ³» :

4. Ռուրինեանց զահուն անկմանէն վերջուրիշ հանգամանաց ներքեւ կը ներկայանայ հրաժարեցումը։ Յայտուն դէմք մ'էր այդ շրջանին Գրիգոր տաթեւացին, եռանգնոտ, բուռն ու տարօրինակ մտայնութեան տէր մարդ մը, որ օգտուելով հայրապետական աթոռին հեռաւորութենէն, Հայաստանի մէջ տեսակ մը կաթողիկոսական դիրք և իշխանութիւն տուած էր ինքն իրեն։ Նամակ մ'ունի առ Յակոբ

1. Զամէ. Գ. 311. — 2. Ասոյ 44. — 3. Mansi, XXV, 1258.

Գ կաթողիկոս, յորում կ'ըսէ՛ թէ առանց
պաշտօն մ'ունենալու հայրապետէն, այլ՝
ինչպէս ինք կը կարծէր՝ «ի յազգմանէ
Հոգոյն եկաք ի կողմանս վասպուրական
ծովու» , տապալելու համար Աղթամա-
րայ աթոռը . «և ամենայն կարգաւորք և
աշխարհականք կամակից եղեն անկրան
կաթողիկոսի, և նոցին կամօքն ընկեցաք
և լուծաք զնա ի կարգէն և յաթոռույն
(ինչպէս զրողդ կը կարծէր): Եւ զրեցաք
յերկուս թուղթս՝ առաջին և երկրորդ՝
յամենայն քաղաքս նոցա և ի գեղս, այլ
և յամենայն աշխարհի չորս կողմունս, ի
յարեւելք՝ ի յաթոռն Գրիգորիսի, ի հա-
րաւ՝ մինչ ի Պարսկաստան, ի հիւսիս՝ մինչ
ի Վրաց տուն, ի յարեւմուտք՝ մինչ ի
յաթոռդ սուրբ, և զթղթերդ առ ձեզ ա-
ռաքեցաք» : Միանգամայն խորհուրդ կո-
տայ հայրապետին՝ անոնց եպիսկոպոս մը
ձեռնազրել, մեռն և օրհնութեան թուղթ
յղել¹ : Զուր ջանքեր էին, և ապստամբ
աթոռը մնաց միշտ :

Կիրակոս վիրապեցին իւր հակառա-
կորդներն ունէր, որոնք կրկնակի կ'ամ-
րաստանէին զինքը, «մին՝ զի ի կողմանէ
Աղթամարայ է, (լինելով Քաջքերունեաց
գաւառէն), որ ի բազում ժամանակաց հետէ

բանազրեալք են, (և զորս արձակեց նոյն
կաթողիկոսը¹), և միւս եւս՝ զի պարտ է
ի կաթողիկոսաց եպիսկոպոս լինել, և
ապա յեպիսկոպոսաց կաթողիկոս ձեռնա-
դրիլ», ուր կիրակոս զինք կաթողիկոս
ձեռնադրողներէն ստացած էր եպիսկոպո-
սական կարգն ալ, և ոչ Հայոց հայրա-
պեաէն՝ ըստ սովորութեան։ Քմածին յան-
ցանքներ երկուքն ալ։ Եւ քառասնի չափ
եպիսկոպոսներ ու քահանայք միասին հա-
ւաքուած, որոց զլուխ էր Յովհաննէս կօ-
ւոտիկ վարդապետ, որ անոր ընտրութեան
զլիստորներէն եղած էր երկու տարի յա-
ռաջ, «Եկեալ մտին ի սուրբ տաճարն
ԱՄիածնին՝ բարկութեամբ և սրտմտու-
թեամբ լցեալ»։ որոց աղմէնն կիրակոս
փութաց փախչիլ քրիստոնէի մը տունը,
«և զողայր յահէ» յարձակողաց։ Անոնք
զտան զինքը, բոնեցին ու տարին Աղուազ
բեկ բոնաւորին առջեւ, ամբաստանելով՝
թէ մկրտուած ու քրիստոնեայ չէ, և հեր-
ձուածող է, զի հիւանդաց օծման կարգը
բերել տուած էր կոստանդնուպոլսէն։ Այլ-
ազգին անոնց ամբաստանութիւններէն ա-
ւելի՝ ընդունած կաշառքէն համոզուած կա-
թողիկոսին յանցաւորութեան, հը աման
տուաւ և անոնք վտարեցին զայն աթոռէն։

1. Գրչ. թ. 1434 Ա. Ղզր. ունի անոր արձակման
բուղթը. ահս և Զամէ. Գ, 488.

Մեծոփեցին՝ որ կը պատմէ զայս, մեզաղրանօք կ'ըսէ կօլոտկին՝ թէ «զզաւազանն ի ձեռաց նորա յափշտակեցեր և զմատանին ի մատանցն առեր, իրը զդատապարտեալ ծառայ առաջի անօրինաց անարգեցեր¹»։ Քաղաքակիրթ արեւմտըէն անջատուած մեր արեւելեայց յատուկ բարքերն են՝ որ կ'իշխեն զեռ հոդ։ Հեթանոս վռամն ու Պերոզ աւելի փափկութիւն ցոյց տուին ս. Աահակայ և Գիւտի, երբ հրաժարեցուցին զանոնք։

Չէ յիշուած՝ թէ ի՞նչ կերպով կը վարուէին մեր այն կաթողիկոսունք, որ կամովին կը հրաժարէին, և կ'ընարէին ու կը ձեռնաղրէին իրենց յաջորդները հաւանութեամբ հասարակաց։ Բայց մեր բաւական համարինք՝ ինչ որ տեսանք հոս աթոռընկեցութեան մասին։

ԺԱՂԱԿՅՈՒ մը։ — Զննեցինք մեր հայրապետական ընտրութեան ամբողջական պատկերը՝ իւր ձեւերու յաջորդական այլազանութեանց մէջ։ Թուրի պիտի մեար մեր նկարագիրը, եթէ չհամեմատէինք զայն վայրկեան մը միւս եկեղեցեաց սովորութեանց հետ եւս, ինչպէս խոստացայ ի սկզբան, և չկազմէինք ընդհանուր տեսութիւն մը ինդըռյն վրայ։

1. Գրչ. թ. 1589, 499 և Ա. Դ. Դ.

Մեր բրիստոնէութեան առաջին շրջաւնին, զոր Արշակունիաց կոչեցինք, մինչ բոլոր միւս եկեղեցիք իրենց ընտրութիւնները կը կատարէին գործակցութեամբ կղերին ու ժողովրդեան, ինչպէս նկատեցինք¹, Հայք իրենց կաթողիկոսաց ընտրութիւնը սկսան ու շարունակեցին՝ սոսկ թագաւորին ու բարձր ազատանուոյն ձեռքով, և յետ Արշակունիաց սպառման՝ իշխանաց կողմանէ, զոր տեսանք նոյնպէս². զուտ աշխարհական ընտրութիւն մը՝ ազգին մեծաշուրջ ներկայացուցչաց ձայնով, և որ եզական ու հետաքրքրական երեւոյթ մը կը մնայ ընտրութեանց պատմութեան մէջ, չունենալով իւր նմանն ուրիշ ազգերուրով։ Կրնանք զայս իրաւամբ կոչել՝ հայկական դրուրիւն, մեր սեպհական ընտրելակերպ։ Եթէ ըստ հոգւոյ և օրինաց Եկեղեցւոյ չէր այս ոճը, և միշտ օգտակար արդիւնքներ չտուաւ, սակայն կը ցուցնէ մեր ազգի նկարագրին անկախութիւնն այս խնդրոյն մէջ՝ ընդհանրական Եկեղեցւոյ հետ իւր միութեան միջոցին անզամ։

Անտիոքեան ու լաւողիկեան կանոնները, որ թուի թէ հայացեր են Զ-Ե գարերուն, և ապացոյց ունիմ՝ որ ծանօթ էին Յհ. Խմաստասիրին, միանալով նիկիականաց

1. Առաջ 8-12. — 2. Առաջ 15-19, 25 ևն.

Կաթ. Ընտր. և Զիոն.

հետ¹, որ վազուց երեւցած էին ի Հայու²,
շատ հաւանօքէն կարեւոր զեր մը կը կա-
տարեն խնդրոյս մէջ, և հետ զհետէ կը
համոզեն մեր ազգը՝ ճանաչել կղերին կա-
նոնական իրաւունքը մասնակցելու ըն-
տրութեանց: Արով է զարէն մեր իշխանք
իրենց զործակից կ'առնուն նաեւ եպիս-
կոպոսաց զաօր³: Գուցէ արեւմտեայց օրի-
նակին անազան ազգեցութիւնն ալ բաժին
մ'ունեցաւ այդ նորոգութեան մէջ: Գիտենք՝
զոր օրինակ՝ որ նոյն է զարուն Հռոմայ
հայրապետաց ընտրութեան կը շարունա-
կէին ըստ հնոյն մասնակցիլ կղերը, ազ-
նուականք՝ որ էին բիւզանզական կայ-
սերութեան պաշտօնեայք ի Հռոմ, և ժո-
ղովուրդը: Առվորաբար կղերն և աւագանին
կը նշանակէին ու կ'առաջարկէին ընտրե-
լին, և ժողովուրդը հաւաքուած եկեղեցւոյ
մէջ, ցնծութեան աղաղակներով կը յայտ-
նէր իւր հաւանութիւնը: Ապա կը փնդրէին՝
ժամանակ մը կայսեր հաճութիւնն ի լուս-
տանդնուալովիս, և աւելի վերջ՝ մերձաւոր
Հռոմաննայի փոխարքայինը: Այս ընտրա-
կան եղանակը, որ կայսերութեան մէջ միայն
ի Հռոմ չէր իշխեր, մնաց զեռ և զարուն
և յետոյ եւս, արքայական հաւանութիւնն

1. Աստ' 12-13: — 2. Ազաթ. 657. Կորիւն, 21.
— 3. Աստ' 28-30, 32-33.

անցնելով տէրութենէ ի տէրութիւն¹: Իսկ
մեր ընտրութեանց մէջ՝ եպիսկոպոսաց
ձայնին հետ վերստին եկաւ միացաւ՝ Բագ-
րատունեաց և Առուրինեանց օրով՝ արքունի
հաւանութեան հին իրաւունքն ալ, մինչ
տղատանին հետ զհետէ կը բաշուէր զոր-
ծէն²: Հոս եւս մեր նոր ձեւը մասամբ մը
նման, և մասամբ մ'ալ դեռ աննման էր
այլոց:

Մեր թագաւորութեանց ընդհատման
պահերուն և յետ ի սպառ ջնջման, երբ
Հայաստան կը հեծէր այլակրօնից լծին
ներբեւ, այն է Պարսից, Արարաց և Թուր-
քաց, թէպէտ ժամանակ մը՝ երբ աթոռը
տեսակ մ'անկախութիւն կը վայելէր՝ հայ-
րապետական ընտրութիւնը ձեռք առին
եպիսկոպոսունք միայն³, բայց սովորա-
բար օաարք կը զործէին, յաճախ իրը
ինքնիշխան ընտրող, ու մերթ հաւանող
ընտրութեան⁴, ըստ որում կաթողիկոսը
միանգամայն ազգիս քաղաքական պետ կը
նկատուէր անոցմէ: Ոչ մէկ կանոն և օրէնք
կը մնար կամ կը յարգուէր հոգ, ու կը
տիրէր մեծ անկարգութիւն մը, զեղծա-
նելով իրենք ու զեղծուցանելով աթոռին

1. Հմմ. Cabrol, IV, 2629, 2631 - 36: — 2.
Ա.սմ. 32-44, 60: — 3. Ա.սմ. 39: — 4. Ա.սմ. 22-24,
30-31, 79-82, 83-84, 85:

թեկնածուներն ալ : Բնչաքաղց հեթանոսաց
միջամտութիւնն այս հոգեւոր զործին՝ ա-
ւելի գեղեցիկ պատուղներ՝ չէր կրնար տալ
անշուշտ : Ու մեք՝ մեր ճակատազրական
յատուկ պայմանաց պատճառաւ՝ հոս եւս
կը հեռանանք արեւմտեան տշխարհներէն,
որոնք հեթանոսաց տիրապետութենէն ու
ստեղծած զեղծումներէն զերծ մնացին, թէ-
պէտեւ ինքնահնար անկանոնութիւնը ու-
րեք ուրեք երեւցան երբեմն անոնց մէջ եւս :

Մեր այդ խառնակութեան վերջին շրբ-
ջանին զոյացաւ՝ կղերին հետ գործակցելու
զրութիւնը հայ ժողովրդեան, որ մինչդեռ
լուսաւորչէն սկսեալ՝ տասներկու զար
քնաւ ձայն չունէր ընտրութեանց մէջ, ի
հեճուկս իրեն ձայն տալու անյաջող փորձի
մը ԺԲ դարէն¹, 1441ին արեւելեան նա-
խանձայոյզ կղերին կողմէն հրաւիրուած,
օգնեց հայրապետական աթոռին փոխա-
զրութեան յէջմիածին, — ուսկից աթոռին
պառակտումն ալ ծնաւ, — և հիմ զրաւ
իւր մասնակցութեան ընտրութեանց՝ յան-
ձին կիրակոս վիրապեցւոյ : Եւ այնուհետեւ
շարունակեց գործակցիլ՝ երբ բռնաւորք
կամ թեկնածուք թոյլատրեցին իրեն²,
բռնելով մեր ջնջուած ազնուական դասին
տեղը կղերին քով : Այսպէս այն՝ որ միւս

1. Աստ 58-59. — 2. Աստ 80, 83, 84.

եկեղեցեաց մէջ նախնականն էր, մեր քով
վերջնականն եղաւ ու մնաց:

Զառամած կամ մահամերձ կամ ծան-
րաբեռն եպիսկոպոսաց արտօնակցի կամ
եպիսկոպոսակցի կամ դործակցի ընտրու-
թիւնն ալ կար, որ սովորաբար լինելով
միանգամայն անոնց յաջորդը, արեւմը-
տեայց քով կը կատարուէր այն ձեւով՝
որով բռն հովուապետը կ'ընտրուէր, այն
է ժողովով։ 426ին ս. Օգոստինոս եպս.
Հիոլովոնի՝ իւր ծերութեան պատճառաւ
հաւաքեց քահանայքն ու ժողովուրդը, ա-
ռաջարկեց իրեն օգնական ընտրել զՀե-
րակղիոս, և անոնք հաւանեցան։ Մեր
սովորոյթը հոս ալ մերթ նման ու մերթ
աննման է այլոց։ Տրդատ միայնակ ըն-
տրեց զՅիրիստակէս եպիսկոպոսակից լու-
սաւորչին², և միայնակ իրենց գործակից
կարգեցին՝ Ատեփանոս Գ զԽաչիկ Ա, սա՝
զԱրգիս Ա, վերջինս՝ զՊետ. Գետաղարձ,
աս՝ զԽաչիկ Բ, և Գաւիթ Գ զՄելրիսէթ³,
ուր իրենցմէ ոմանք յետոյ կաթողիկոս
նստան ժողովով⁴։ Մերթ նոյնպէս ժողովով
կ'ընտրուին աթոռակիցներն ալ. ինչպէս
Բարսղի՝ Գրիգորիս, և ասոր՝ Ներսէս⁵, որոց
օրով ժողովական զրութիւնը զօրաւոր էր⁶:

1. Patr. Latina, XXXIII, 966. — 2. Աստ' 16. —
3. Աստ' 46, 82. — 4. Աստ' 35. — 5. Աստ' 48. —
6. Հմմա. աստ' 39.

Աթոռակցի մէկ տեսակն էին տեղապահք,
որոնք ի բացակայութեան կամ հեռաւու-
րութեան հայրապետին, և կամ յետ մա-
հուան՝ ցընտրութիւն յաջորդին, կաթո-
ղիկոսին տեղը կը բռնէին. նախկին զա-
րերուն՝ հայրապետական իշխանութեամբ
ամրող վիճակին վրայ, այլ ոչ և ձեռ-
նազրութեամբ։ Այսպիսիք էին Խաղ, զոր
ո. Ներսէս Յունաց երկիրն երթալու ժա-
մանակ՝ Բագրատունեաց եպս. ձեռնազրեց,
և ինքն խոկ «Եթող իւր փոխանակ ետե-
զապահ»¹, և ո. Յովսէփ երէց՝ տեղապահ
յետ մահուան Մեսրոբայ՝ ընտրութեամբ
իշխանաց²։ Խոկ սկսեալ խառնափնդոր
միջին զարէն՝ կ'իշխէին հայրապետական
վիճակին մէկ կամ միւս մասին վրայ, և
աւելի վերջ նաեւ միասին իրր աթոռակցից,
կաթողիկոսական ձեռնազրութեամբ և առ-
տիճանով հանգերձ, ունենալով նախաթոռ
հայրապետին ինքնայօծար կամ բռնա-
զատեալ հաւանութիւնն ալ։ Աղոցմէ էին
Գէորգ, Սարգիս ու Բարսեղ՝ կենդանի
Վկայասիրին փոխանորդները, ընտրուած
ժողովով³։ Բայց զարձեալ միայնակ ըն-
տրեցին՝ նոյն Վկայասէրն Եղիսլոտոսի իւր
տեղապահը Գրիգորիս, Ստեփանոս Ե՛ ի-

1. Փաւա. 105. — 2. Ասու. 25. — 3. Ասու. 36-37.

ըմնը ԱՄԻՐԱՋԵԼ, ԹՎԱՂԷՌՈՍ Բ՝ զԱՌԱՐԵԼ, և
աս՝ զԴԱՒԻԹ¹:

Տեսանք յաջորդի ընտրութիւնն ալ՝
ժահուան մօտ կամ հրաժարմամբ նախոր-
դին, և անոր առաջարկութեամբ իսկ, որ
դատապարտուեցաւ՝ ըսինք՝ ԱՆՏԻՈՔԱՅ ժո-
ղովէն²: Բայց ասոր օրինակներ զեռ կան
արեւմտեայց քով, թէպէտ ցանցառ, և ոչ
հաճութեամբ նկատուած: 465ին Նունդի-
նարիոս եպս. Բարկելոնայի վախճանե-
լով, տեսնուեցաւ՝ որ կտակին մէջ իրեն
յաջորդ նշանակած էր զիրենէոս, — մեր
Գրիգորիոսի ու Շնորհալւոյն ըրածին պէս³,
— և որոց կամքը յարգել ուզեցին վիճա-
կակից եպիսկոպոսունք, կղերն ու քաղա-
քի աւագանին, մինչ Հիւարիոս պապը
լոելով զայդ, ընդհանուր կերպով դատա-
պարտեց այդ ընտրելակերպը⁴: Աակայն
իւր ձայնը տկար մնաց. և իւր իսկ յաջորդ-
ներէն փելիքս Դ 530ին հիւանդութեանը
մէջ իրեն յաջորդ կարգեց Բոնիփակիոս
սարկաւազը, որոյ զէմ այս անգամ ալ
բողոքեց Հոռմայ ծերակոյտը⁵: Նոյն դա-
րուն՝ ո. Գոմնալ Ամասի, Բերտրանդ
Բորգոյի և ո. Փելիքս Նանտի եպիսկոպո-

1. Ա. 47, 82. — 2. Ա. 45. Հմմ. և Cabrol,
IV, 2623. — 3. Ա. 49. — 4. Cabrol, IV, 2623.
— 5. Կ. 2626.

սունք ջանացին ընդունելի ընել իրենց
ընտրած յաջորդները¹: Բայց պէտք է զի-
տել՝ թէ ոչ մէկ եկեղեցւոյ մէջ այնքան
ընդարձակ ու երկարատեւ եղաւ այս զը-
րութիւնն՝ ինչպէս մեր քով, որ Եղարէն
մինչեւ Ժէ ասոր զանազան օրինակներն
ունինք², սովորաբար ընդունելով ազգին
հաւանութիւնն ալ, ինչպէս եղաւ Վահա-
նայ, Ա Ստեփանոսի, Թէոդորոսի, Գր.
Տղայի և Փիլիպոսի³, մինչ Մելքիսէթ
ինքնազլուխ ընտրեց իւր յաջորդը Աահակ
Դ⁴ ժամանակի պղտորութեան երեսէն:

Նոյնչափ յաճախեալ էր մեր մէջ նաեւ
աթոռոյն տոհմային ժառանգականուրինը⁵,
ընդհանրապէս ունենալով ազգիս ընտրող
մարմնոյն հաճութիւնն ալ: Այս սովորու-
թեան հազիւ երբեք կը պատահինք ա-
րեւմտեայց քով: Այսպէս կ դարուն կլեր-
մոնտի եպիսկոպոսը ու Աւատոս՝ իւր աթոռը
թողուց հարազատին՝ ու Բոնետոսի, կա-
մակցութեամբ թագաւորին ու կղերին⁶:
Բնդ հակառակն թէ Բ Առաքելական կա-
նոնաց արգելը և թէ Տրուղեան ժողովին
բողոքը մեր ոճին դէմ⁷ կը համոզեն՝ թէ
Յունաց ընտանի չէր այն: Եւ Լամբրոնա-

1. Cabrol, 2628: — 2. Աստ' 45—50, 82: — 3. Աստ'
46, 47, 49, 84: — 4. Աստ' 83: — 5. Աստ' 66—70:
— 6. Cabrol, 2628: — 7. Աստ' 67—68.

ցին 1177ին դեռ կը վկայէր անոնց ու
Լատինաց մասին՝ թէ «նոքա վիճակաւ
ընտրութեանն կարգին¹»։ Որով այս մասին
մէջ եւս բացառիկ դիրք մ'ունէր մեր ազգը,
որոյ սովորութիւնը կ'ամրացնէր Դունի
719ի ժողովն ալ սահմանելով՝ «ըստ
կարգի զեւտացւոցն ազգաւ սեպհականել
զեկեղեցւոյ շնորհ» (կան. ը)։

Արսուրնեկեցուրիւնն ալ կար ու սովորա-
կան էր Եկեղեցւոյ մէջ՝ անարժան կամ
յանցապարտ վիճակաւորաց՝ որ և է աս-
տիճանէ, հաստատուած եկեղեցական կա-
նոններով ու բազմաթիւ օրինակներով։
Աւելի հետաքրքրական է այս գործին ե-
զանակը։ Տոլետոնի 633ի ժողովոյն ին
կանոնէն կ'իմանանք, որ յետ վճռելու
զահընկեցութիւնը ժողովով, հրաժարելոյն
վրայէն կը հանէին տատիճանին յատուկ
նշանները։ Այսպէս 541ին Գաղայի ժո-
ղովը տապալելով Անտիոքայ Պօղոս պա-
տրիարքը, մերկացուցին անոր պատմու-
ծանը։ 685ին Օտիւնի Լեզէր եպիսկոպոսը
զրադարտութեամբ ձգուելով աթոռէն, իւր
դատաւորները պատոեցին անոր հանդերձը։
857ին Կոստանդնուպոլսի պատրիարքը ս.
իգնատիոս՝ Փոտեանց կողմանէ անիրաւա-
րար պաշտօնանկ լինելու պահուն՝ ուրարն

1. Մեկն. պարգ. 554. — 2. Օճն. Մատեն. 25.

ու բոլոր սրբազան զգեստները հանեցին
անոր անձէն¹: Այս ընդհանուր սովորու-
թեան կը հետեւէին մերոնք ալ, երբ ան-
կելոյն զլխէն կ'առնուին՝ աւելի կամ
նուազ խիստ կերպով (խոկ խուժանը պատ-
ռելով) հայրապետական քօղը, ձեռքէն կը
խլէին գաւազանը, մատանին, և հանել կու-
տային բոլոր սրբազան հանդերձն ու զար-
դերը²:

Բայց մեք փակենք պատմութեան այս
վերջին սնախորժ տեսարանը, և դառնանք
ու դարձնենք մեր աչքերը դէպ ի վախ-
ճան հայրապետական ընտրութեան, նկա-
տելու անոր հոգեզուարճ վերջաբանը,
նորընտիր կաթողիկոսին ամբարձումն յա-
թոռ՝ եկեղեցական մեծաշուր հանդիսիւ:

1. Հմատ. Vacant, IV, 456. — 2. Աստ. 88, 90-92,
96.

Բ

ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԼԵՏԻ կայ ըսելու՝ թէ կ'անցնինք հոս
մեր ուսումնասիրութեան աւելի նուիրա-
կան, որով և աւելի հրապուրիչ մասին
հետազոտութեան։ Այս եւս բարդ է ըն-
որութեան պէս, և կը պահանջէ՝ որ անոր
նման բաժնենք զինքն այլ և այլ յօդուա-
ծոց, նկատելով սովորութիւնը նախ միւս
եկեղեցեաց մէջ, ապա որոնենք անոր ծա-
զումը մեր քով, զննենք անոր իսկութիւնը,
արարողութիւնը, օծումը, համեմատու-
թիւնն այլոց հետ. և հուսկ՝ որոնենք սըր-
բազան արարողութեանս ընծայուած և
ընծայելի բարոյական արդիւնքը։

Ա. Միւս ազգերու մէջ: — Քրիստոնէա-
կան Եկեղեցին առաքելոց օրերէն քահա-
նայութեան երեք աստիճաններ միայն կը
ճանաչէր, սարկաւագութիւն, երիցութիւն

և եպիսկոպոսութիւն, և կ'աւանդէր զանոնք՝ ձեռք զնելով ընծայելոյն վրայ: Առաջեալք՝ առաջին եօթն արքիառագաց «Եղին ի վերայ նոցա զձեռու¹»: Պօղոս ու Բառնաբաս շրջելով յԱնտիոք և ուրիշ կողմեր, «ձեռնազրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցունես²»: Կը յիշուին եպիսկոպոս – երիցուներ ալ³, որ կը կարգուին «բաղաբաց» մէջ⁴, և որոցմէ են նաև Տիմոթէոս ու Տիառոս, զորս Պօղոս կը նշանակէ Եփեսոսի ու Կրետէի հովուութեան⁵, անոնց կը խօսի եպիսկոպոսական յատկութեանց մասին⁶, ի խրատ անոնց ընտրելի եպիսկոպոսաց⁷, որով աւելի կը համոզուինք՝ թէ իրենք ալ ունէին նոյն աստիճանը, և զոր Տիմոթէոս ընդունած էր «ձեռնազրութեամբ» նոյն ինքն Պօղոսէ⁸, և սա՝ Բառնաբասի հետ՝ ուրիշներէ⁹:

Եպիսկոպոսութենէն վեր աստիճան չըկար հին Եկեղեցւոյ մէջ, ինչպէս չկայ մինչեւ ցայսօր: Աակայն ժամանակն եպիսկոպոսական բարձրագոյն աթոռոց ժառանց գործաց համար ստեղծեց առանձին արա-

1. Գրք. 9, 6: — 2. Անդ՝ Ժ. 22: — 3. Ա. Տիմ. Գ, 1-2. Տիմ. Ա, 7: — 4. Տիմ. Ա, 5: — 5. Ա. Տիմ. Ա, 3. Տիմ. Ա, 5: — 6. Ա. Տիմ. Գ, 1-7. Տիմ. Ա, 7-9: — 7. Տիմ. Ա, 5-7: — 8. Բ. Տիմ. Ա, 6: — 9. Գրք. Ժ. 3.

ըողութիւն, անոնց ընտրութեան աւելի
պերճութիւն մը, և իշխանութեան՝ ար-
տաքին մեծագոյն նշանակ մը տալու նպա-
տակաւ։ Քննելով յունական հին մաշտո-
ցը, զոր ընդարձակօրէն հրատարակեց
Դոյար, անոր մէջ չզատայ պատրիարքի
օրհնութիւն։ Ծնդ հակառակն այդ արա-
րողութիւնն ունին Աղեքսանդրիոյ և Ա-
սորոց Յակոբիկեանը, Նեստորականը ու
Մարոնեանը, որոց կարգերն ամփոփեցին
Ոնողօս և այլք, ու լաւ ես Դենզինգէր¹,
հաւաքուած զանազան միջնադարեան աղ-
րիւրներէ։ Հոռմայ հայրապետը ալ կ'օրհ-
նուին, և այդ օրհնութեան կարգը կ'երեւի
1311, 1274 և մինչեւ 1192 տարիներու
յատուկ աղբերաց մէջ²։ Թէ Երբ հաստա-
տուած է արարողութիւնդ՝ աշխարհով ու
ծիսով մեզ աւելի մերձաւոր յիշեալ ա-
րեւելեայց մէջ, ազոր ճշգումը կապ ունի
հայ ձեռնադրութեան ծագմանը հետ, որով
նախ զայս կը մնայ ինձ քննել, և ապա
որոնել այլոց հաստատման հաւանական
ժամանակն և իսկութիւնը։

Բ. Երբեմն անզոյ մեր քով։ — Բարձր
հնութեան մը յարգը չունի հայ ձեռնա-

1. Denzinger, *Ritus Orientalium*. Wercebburgi,
1864. — 2. *Հմատ. Patr. Lat. չո. 78, էջ 1122. Ci-
vilità Cattolica*, 1903, 388.

զբութիւնը։ Ակսելով մեր առաջին հայրապետին՝ Լուսաւորչէն, Ագաթանգեղոս կը պատմէ՝ թէ կեսարիոյ մէջ անոր աւանդեցին երկու աստիճաններ միայն. «զատափիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեան Աստուծոյ՝ ըզպատիւ մեծ¹»։ Եպիսկոպոսութիւնն է ուրեմն հոգ բարձրագոյն պատիւը, և անկից զատ ձեռնազրութիւն կամ օրհնութիւն չկայ։ Նոյն ու Գրիգոր իրեն օգնական եպիսկոպոս կը ձեռնազրէ զԱրիստակէս որդին², որ «յետ նորա կարաց զտեղի հայրենեացի³», առանց երթալու ի կեսարիա ձեռնազրութեան, ինչպէս զնացին նախորդն ու յաջորդները։ Նոյնպէս և վրթանէս կամնիւաւ եպիսկոպոս ձեռնազրուած հօրէն⁴ կամ եղրօրէն, «եղեւ բանայացափեա յաթուն հօրն»։ առանց երկրորդ ձեռնազրութեան⁵, ինչպէս յայտնի է պատմը չաց լուռթենէն երկու հարազետական ձեռնազրութիւն կամ օրհնութիւն մը չկայ հոգ։

Փաւստոս արդարե կ'ըսէ՛ թէ ցետոյ «ետուն ի կարողիկուուրիւն զՅուսիկն ձեռնադրել», կամ զՓաւէն «ձեռնադրեցին ի

1. Ագաթ. 604. — 2. Աստ. 16. — 3. Ագաթ. 643. — 4. Կաղանկ. Մոսկուա, 1860, 28. — 5. Փաւո. 6.

կարողիկոսուրիւն Հայոց մեծաց » , կամ « ձեռնադրեցին զՇահակն ի կարողիկոսուրիւն » , կամ « ձեռնադրեցին զՋոնակն ի կարողիկոսուրիւն Հայոց¹ » , որոնք սակայն զատ ձեռնադրութիւն մը չեն ցուցներ , այլ եպիսկոպոսականն իսկ՝ կաթողիկոսական պատուով հանգերձ , ինչպէս նոյն պատմիչը կը զզացնէ յայտնապէս ալ ո . Երբախի հայրապետութեան առթիւ՝ թէ « ձեռնադրեցին զնոտ և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսուրեաննէ² » : Այս պատճառաւ նաև Պատ՝ Յուսիկ Բի , որ արգէն « եպիսկոպոս » էր , « ետ հրաման ունել զտեղի հայրապետացն » , և Ասպուրակ պարզապէս « եկաց զլուխ եպիսկոպոսաց³ » , առանց ուրիշ ձեռնադրութեան մը , որ թէ լինէր , անվրէով պիտի յիշէր պատմիչը , ինչպէս կը յիշէ այլոց վրայ :

Կը ըննենք յաջորդ հայրապետաց ընտրութեան յիշատակարաններն ալ և ոչինչ կը զանենք ի նպաստ կաթողիկոսական ձեռնադրութեան : Ա . Յովսէփ պատուով կաթողիկոս , ժամանակի քաղաքական զժուարութեանց պատճառաւ եպիսկոպոսական կարգէն անգամ զուրկ մնաց⁴ ; ինչ որ արգելք մը չեղաւ անոր լինելու « զլուխ

1. Փաւա . 30, 44, 45, 123 . — 2. Նոյն՝ 73 . — 3. Նոյն՝ 226, 264 . — 4. Կարենոր Խնդիրներ , 280-32 .

ամենայն Հայոց քահանայութեանց», ինչ-
պէս կը վկայէր Ղեռնդ, Աշտունեաց ե-
սիսկոպոսին համար ևս ըսելով՝ թէ «սա
զկարգ օծման ըստ ճշմարիտ և արդարե
քրիստոսատուր ձեռնազրութեան մերոյ
օրինաց զկատարեալն ունի¹», քան զոր
վերազոյն ձեռնազրութիւն չկար ուրեմն:
Եւ երբ Պարսից արքայն կը սպառնար
Գիւտի առնուլ կաթողիկոսութիւնը, կը
պատասխանէր՝ թէ կընար զինք պաշտօ-
նազուրկ ընել. «իսկ յազագս ևպիսկոպո-
տական ձեռնազրութեան», — որ միակ
ունեցածն էր, — «չ ոք՝ կ'ըսէր՝ կարող է
առնուլ ինձմէ²: Այս է ձեռնազրութեան
վիճակը Դ-Ե զարերուն, ակներե ու հեռի
ամէն կասկածէ:

Կը հասնինք մինչև ի դար, ուր Աերէսս
կը պատմէ՝ թէ 607ին «նոտուցին (ոչ թէ
ձեռնազրեցին) զԱրքահամ զՄշտունեաց ե-
սիսկոպոսն յաթոռ հայրապետութեան»³:
Նաեւ Ամբատ վրկան մարզպան և իշ-
խանք Հայոց, որ այդ հանդիսին ընթե-
րակայ էին, կը զըեն՝ թէ Արքահամ պար-
զապէս «հայրապետ կարգեցաւ»⁴, իրենք
ալ լոելով վերստին ձեռնազրութիւնը:
Ծնդ հակառակն մայրազոմեցին Յովհան-

1. Փարպ. 235: — 2. Կոյն. 348: — 3. Աստ. 26: — 4. Գր. բարոց, 169.

նէս, ժամանակակից Արքահամու երրորդ
յաջորդին՝ Եզրի, առ Դաւիթ Մեծկողմանց
եպիսկոպոս թղթին մէջ, զոր կաղանկա-
տուացւոյն շարունակողը յառաջ կը բերէ,
կ'ըսէ՝ թէ «նստուցին զԱրքահամ ճշմա-
րիտ և ընտիր այր, որ զժողովն Քաղկե-
զոնի նախ երարձ նզովիւք, և ապա ձեռ-
նադրեցաւ¹»։ Բայց ըստ իս տարօրինակ
և անտեղի է պայմանական կաթողիկո-
սութիւնով, անյիշատակ նոյն դարու պատ-
միչ Արքոսի բով², և բուն ժամանակա-
կից միւս յիշատակարանաց մէջ ևս՝ զորս
կը պահէ թողրոց զիրբը։ Կարելի է՝ թէ հոգ
մատը կայ աղուան կոչողին, յայտնի հա-
կառակորդ մը Քաղկեզոնի ժողովոյն, որ
կը զբէր յետ 869ին՝ երբ կաթողիկոսական
ձեռնադրութիւնն արգէն կար. և որ Արքա-
համու առ կիւրիոն թղթէն աւ կոչում
կ'ընէ՝ յայտնապէս խարդախելով բնագի-
րը՝ նոյնպէս քաղկեզոնեան խնդրոյն մէջ³։
Խակ եթէ անարատ լինի Մայրազոմեցւոյն
վկայութիւնը, հարկ է հետեցնել՝ թէ սա
չէ յիշած, որով անշուշտ կ' անզիտանար
Արքահամու կանխաւ եպիսկոպոս լինելը,
և անոր ձեռնադրութիւնը՝ կ'իմանար ե-
պիսկոպոսականը, իբր ընդունուած հայ-

1. Կաղանկ. 213. — 2. Աստ' 26. — 3. Հմմա.
Կաղանկ. 214, և Գր. բղբոց' 194.

բապետութեան հետ։ Անկասկած այս տես-
ղեկութենէն խարուեցաւ Ուխտանէս, որ
կը զրէր Ժ դարու վերջերը, ըսելով՝ թէ
զԱքրահամ կաթողիկոս «ձեռնադրեն զկնի
սրբոյ զատկին՝ յաւուր կիւրակէի», նոյն-
պէս չյիշելով՝ թէ արդէն եպիսկոպոս էր¹։
Այս պատմչին յեցած՝ նոյն տեղեկութիւնն
երկրորդեց Օրմանեան եւս, ընդունելով
հանդերձ զԱքրահամ կանխաւ եպիսկո-
պոս, և կրկին ձեռնադրութիւն վերագրե-
լով անոր²։ Իսկ Ն. Վ. Մելիք Թանգեան
հիմնուելով Աղուանից պատմչին վրայ,
հայրապետական ձեռնադրութեան սկըզ-
բնաւորութիւնը դրաւ նոյն կաթողիկոսէն,
կապելով անոր առասպելական պատրիար-
քութեան հետ³, զոր հերքած եմ այլուր⁴։

Իրարու փոխանցուած սխալ մ'էր այդ,
զոր կը ջրէ նոյն ինքն Աքրահամու յա-
ջորդը կոմիտաս եւս, եպիսկոպոս Մամի-
կոնէից, վկայելով տակաւին իւր անձին

1. Ուխտանէս. Բ, 61. — 2. Ազգագիր. Կ. առլիս, 1912, 616-17. Հաշուի չեմ առնուր իւր միւս ըսածը ո.
Սահակայ մասին, թէ Աքահանայ ըլլաւը սասյդ է, և
եպիսկոպոսութիւնն ալ հաւանական. իսկ կաթողիկոսու-
թիւնը առած պիտի ըլլայ հայ եպիսկոպոսներէն» (անդ՝
262), որ կրնայ իմացուիլ թէ ընտրութեամբ և թէ ժեռ-
նազրութեամբ, և երկութիւն ալ հակառակ պատմութեան
(աստ՝ 18-19 հն.)։ — 3. Հայոց եկեղ. իրաւ. Շուշի,
1905, Բ, 116-18. — 4. Կարեւոր խնդիրներս, 238.

համար՝ թէ 615ին «յաջորդեցայ ի կաթուզիկոսութիւն Հայոց մեծաց¹», և Աերէոս՝ թէ «յաջորդէ զաթոռ հայրապետութեանն կոմիտաս Տարօնոյ եպիսկոպոսն²»։ Այսպէս նաեւ Եերսէս Շինող, եպիսկոպոս Տայոց, 641ին «յաջորդեցա» կամ «կոչեցա» յաթոռ կաթողիկոսութեան», կ'ըսէ նոյն Աերէոս³։ Իսկ յաջորդել՝ կը նշանակէ նախորդին տեղը նստիլ, և իւր բնական իմաստին մէջ չի պահանջեր նաեւ ձեռնադրութիւն նստելու համար, զոր միայն լայնօրէն կամ անյատուկ կերպով պիտի կարենար նշանակել։ Գրիչներուդ ծանօթէր նաեւ ճենապահութեամբ տրուէր։ Եւ արդէն առանց ձեռնադրութեան յաթոռ ելնելը բացատրելու համար՝ յաջորդիլ, կոչիլ, կարգիլ կամ նատուցանելէն տարբեր բառեր չէին կրնար զործածել։ այնպէս որ Ազուանից պատմիչն ալ «նատուցին... և ապա ճենապահուցա»⁴, ըստ Արքահամու համար⁴, չկարենալով վերջինը տեսնել առաջնոյն մէջ։ Նոյնպէս և Օրմանեանի երեւակայութիւնը՝ կոմիտասի «յաջորդեցայն» մեկնեց՝ «ըն-

1. Գր. բգրոց, 218. — 2. Աերէոս՝ 123. — 3. Կոյն՝ 172, 220. — 4. Ասու՝ 113.

տրեալ կաթողիկոս», և յարեց՝ թէ «ազ-
գային ընտրութենէ և պետական հաստա-
տութենէ ետքը նուիրական արարողութեան
կամ օծման ալ պետք ուներ, որպէս զի
կանոնաւորապէս կաթողիկոս ըսուէր»։
Այս պէտքը կամ պայմանն արդի խոր-
հողի պատրանք մ'էր, ինչպէս կը տես-
նենք յետոյ։ Ոչ, այդ շրջանին զեռ աւե-
լորդ է ձեռնազրութիւն փնդուել ի Հայու։

Այնուհետեւ ցթ՝ դար մեր հայրապետաց
ձեռնազրութեանց մասին ժամանակակից
հաւաստի տեղեկութիւնք կը պակսին։
Յովհաննէս պատմիչ, որ կը շարազրէր
իբր 923ին, կը յիշէ Յովհ։ Ովայեցւոյ
ձեռնազրութիւնն 833ին։ «յետ սկզբան
ձեսնադրութեան նորա» , որոյ տեսակը յայ-
տնի չէ՝ ոչ իրեն և ոչ մեզ։ Նոյն հան-
գամանաց մէջ է և Զաքարիա, զոր 855ին
աշխարհական վիճակէն «ձեռնադրեն ի հայ-
րապետութիւն»։ Ոչինչ կրնանք հետեւցնել
այս երկու սեղմ տեղեկութիւններէն՝ ի
նպաստ հայրապետական ձեռնազրութեան
գոյութեանն այդ կաթողիկոսաց օրերուն,
թէպէտ հնարաւոր ու հաւանական իսկ է։

Գ. Անոր հաստատութիւնը։ — Արդարեւ
քիչ յետոյ՝ նոյն թ՝ դարուն մէջ՝ արդէն
լոյսը կը ծագի մեր զիմաց, ու կը սկսի

երեւիլ ուրոյն կաթողիկոսօքհնէք մը։ Առ
զուանից աթոռն ընդհանրապէս հպատակ
եղեր է հայկականին, և հետեւող մեր սո-
վորութեանց, լեզուին ու կարգաց։ 877ին
անոնց Յովսէփի կաթողիկոսը կը վախճա-
նի, և նոյն վիճակէն «Մեծկողմանց եպիս-
կոպոսն Սամուէլ» ինքնազլխաբար կը նըս-
տի անոր տեղը, խամայէլ անուն եպիսկո-
պոս մը կը ձեռնադրէ, և «զանկատարն
առնու զնեսնադրութիւն յիւրմէ եպիսկոպո-
սէն», կը զրէ անոնց պատմչին շարու-
նակողը։ Աղուանից իշխանք, որ այդ պա-
հուն պատերազմով զբաղած էին, լսելով
այդ լուրը՝ կը վրդովին ու կը բողոքեն
մեր Գէորգ Բ հայրապետին, որ կը հան-
գարաեցնէ զանոնք, և ըստ եղեալ կար-
գազրութեան՝ անոնց առաջնորդն ի Դուին
կ'երթայ, և «զերկրորդն առնու ձեռնա-
դրութիւն անձնահաճն Սամուէլ ի Գէոր-
գայ Հայոց կաթողիկոսէ¹»։

Նոյն Գէորգ 893ին զերի գնաց Տաճ-
կաց, և այդ պահուն վախճանեցու Աղուա-
նից յիշեալ կաթողիկոսը։ Անոնք զՅով-
նան, որ մեր հայրապետական «դրան
եպիսկոպոս» էր, կը հրաւիրեն, «և անդէն
ձեռնադրի առանց կամաց տեառն Գէոր-
գայ²», կամ ըստ Անանիա մոկացւոյն

1. Կաղանկ. 268. — 2. Նոյն՝ 277.

թերի բացատրութեան՝ «կարգեցին իւրեանց
կաթողիկոս¹»։ Աղուանից արքայն Համամ
մեծ փրկանք տալով՝ ազատեց մեր հայ-
րապետը, որ բարկացած իւր եպիսկոպո-
սին ինքնազլուխ զործէն, «լուծանէ զնա-
ի պատուոյն²»։ Յետոյ զիջանելով ար-
քային խնդրանաց, «առ հարկի՝ իրբեւ
մեծ իմն երախտիս համարեալ՝ կրկին զօն-
նանն ձեսնադրեր», կը զրէ նոյն Մոկացին³։

Ի՞նչ էին այդ ձեռնազրութիւնք՝ տրուած
արդէն եպիսկոպոսաց՝ անզամ մ՝ Աղուա-
նից եպիսկոպոսներէն, և երկրորդ անզամ
Հայոց հայրապետէն, որոցմով անոնք իւր-
առողիկոս կը կարգուին Աղուանից, ըստ
վկայութեան երկու մերձաւոր զրիչներու-
եթէ ոչ՝ կաթողիկոսական ձեռնազրութիւնն
իսկ, զատ եպիսկոպոսականէն, որ ուրեմն
արդէն կայ հոդ։ Եւ եթէ մերս Գէորգ է՝
որ կու տայ զայն երկրորդ անզամ, կը
հետեւի՝ որ Հայոց և իրեն ընտանի էր այն,
անոր կանոնը կար հայրապետանոցին մէջ՝
իրբեւ առաջնորդ արարողութեան, և շատ
քնականօրէն ինքն ալ ստացեր և ունէր
նոյն ձեռնազրութիւնը։ Անանիա չի հաճիր
Յովնանու երկրորդ ձեռնազրութեան, իր-
բեւ «արտաքոյ սուրբ զրոց», և կը վե-

1. Արարտա, 1897, 138. — 2. Կաղանկ. 269, 277.
— 3. Արտ. 138-39.

րազրէ մեր հայրապետին «կարեաց վախ-
կոսութեան»։ Զէր զիտեր՝ թէ նա նոյն
սխալը զործած էր նաեւ Ամամուելի վրայ,
և ձեռնաղբութեան կրկնութիւն անոր վրէժ-
ինդրութեան պահանջն էր, ոչ թէ այլոց,
և ոչ արդիւնք երկիւղի։ Եթէ ուզէր՝ կը ը-
նար վերահաստատել զանոնք՝ առանց կը ը-
կին օրհնելու։

Նոյն Առկացւոյն օրով, նստած 941ին,
այնքան սովորական էր մեզ հայրապետա-
կան ձեռնաղբութիւնը, որ իւր ու Խոսրով
անձեւացւոյ մէջ անոր մասին վէճ ծագե-
ցաւ, և որուն սիրտի անդրադառնանք ա-
պա։ Յետ Անանիայի՝ մեր կաթողիկոսունք
կը շարունակեն միշտ առանձին ձեռնաղբու-
թիւն ստանալ։ Խաչիկ Ա, կանխաւ եպիս-
կոպոս Արշարունեաց, իւր նախորդը Ստե-
փանոս 970ին զայն «ձեռնաղրեաց յաթոռ
իւր»։ Կ'ըսէ Մատ, ուսհայեցին 1136ին¹։
Արիստակէս լաստիվերտցին կը վկայէ ԺԱ
զարու կիսուն՝ թէ Պետրոս Գետադարձ իւր
տեղը կը զնէ զխաչիկ Բ, «որ զձեռնա-
ղրուրիւն հայրապետուրեանն վաղնջուց ըն-
կալեալ էր» 1035ին²։ ԶԳրիգոր վկայա-
սէր մեծն՝ «արժանաւոր ձեռնաղրուրեամբ
և հոգեւոր օծմամբ նստուցանեն յաթոռ
կաթողիկոսութեան»։ Նոյն ինքն յետոյ

1. Աւաճ. 49. — 2. Լաստ. 60. — 3. Առփերք,
ԺԴ, 18.

զԳէորգ վարդապետ «ձեւնադրեաց կարու-
ղիկոս» փոխանակ իւր¹: Բարսեղ Ա. նախ
ձեռնադրուած նոյն վկայասիրէն արքեպս.
Անւոյ, Ազուանից կաթողիկոսն ու եպիս-
կոպոսունք զայն կրկին անգամ «ձեւնա-
դրեցին կարուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգո-
րի²»: Շնորհալոյն եղրօր համար կը կար-
դանք՝ թէ նախ «ձեռնադրեցին զԳրիգո-
րիս եպիսկոպոս ի վերայ ամենայն տանն
Հայոց. և ի նմին աւուր տան (նաեւ)
զձեւնադրուրիւն կարսդիկոսուրեանն ի վե-
րայ աթոռոյ սրբոյն Գրիգորի³». կամ
ըստ ուրիշ վկայի մը՝ Բարսեղ կթղ, ինք-
նին անոր վրայ «կատարէր զկարգ եպիս-
կոպոսուրեան և հովուապետուրեան⁴». այն
է յաջորդաբար երկու կարգեր: Անոր
հարազատն ու յաջորդը Ներսէս՝ նախ
եպիսկոպոս օրհնուած եղրօրէն⁵, յետոյ
նոյն Գրիգորիս կրկին «ձեւնադրեաց զնա-
յաթոռ կաթողիկոսութեան ազգիս Հայ-
կայ⁶», որուն կը վկայէ ձեռնադրեալն
եւս⁷: Եւ Ն. Լամբրոնացին ասոր յաջորդ
Գր. Տղայի մասին կը պատմէ՝ թէ յառաջ
«եպիսկոպոս» կ'օրհնուի Գրիգորիսէ ու
Ներսէս, և ապա եպիսկոպոսաց ժողովով

1. Ուսէ. 230. — 2. Ասոյ. 37. — 3. Ուսէ. 412.
- 4. Սովերք, ԺԴ, 32. — 5. Անդ. 34. — 6. Անդ.
66. — 7. Նամակ. 32.

«կարողիկոս զընտրեալն օծեալ¹» : Այսպէս
սովորութիւնս կը մնայ ու կը յարատեւէ
անընդհատ հետազայ դարերու մէջ եւս²,
ու մինչեւ ցայսօր՝ թէ յէջմիածին և թէ
կիլիկիոյ զոյգ աթոռներուն վրայ :

Դ. Անանիայի վեճը : — Ակնարկեցինք
վերեւ Ան. Մոկացւոյն ու Խոս. Անձեւա-
ցւոյ պայքարին այս խնդրոյս շուրջ, որոյ
մասին նոյն հայրապետը թողուց ուշագրաւ
գրուած մը, Պատմաս յաղազս զխուրով
եզովերոյն, հրատարակուած արդէն³: Նա-
րեկացի խօսնակին զիտնական հայրը,
զաղանի բաղկեզնիկ կարծուած⁴ և յու-
նամէտ, ընդդիմութիւն մ'ունէր կաթողի-
կոսական ձեռնազրութեան տրուած նշա-
նակութեան դէմ, և իւր զանազան տեսու-
թեանց մէջ կ'ըսէր եւս՝ թէ ձեռնազրու-
թիւնդ ուրիշ բան չէր իւր օրով՝ բայց
եսլիսկոպոսականին կրկնութիւնը. «Զեռ-
նազրութիւն ոչ է կարգեալ որիշ հայրա-
պետութեան, այլ նոյնն (այսինքն եպիս-
կոպոսականն) երկրորդի» . ուր «ձեռնա-
զրութիւն» բաելով՝ կ'իմանայ ոչ ամբողջ
եսլիսկոպոսական կանոնը, այլ ձեռք դնե-
լու գործողութիւնն իսկ՝ յարակից բանա-

1. Գովեստ ի Ն. Շնորհալին. զբչթ. Վենետիկոյ : —
2. Հմմա. աստ. 43—44, 81, 83: — 3. Այսաբառ. 1897,
275: — 4. Ատ. Արք. 202.

ձեւով, ինչպէս յետոյ կը ճշդէ աւելի յըստակ բացատրութեամբս. «Երջումն ձեռնազրութեան չկայ յեպիսկոպոսուրենէ ի հայրապետուրիւն» իբրև ուրոյն կարգ. որ է ծանօթ բանաձեւը, «Աստուածային և երկնաւոր շնորհք . . . կոչեն» և այլն, որ զրեթէ նոյն էր ու կը կրկնուի՝ հին ժամանակ ինչպէս այժմ՝ բոլոր սուրբ աստիճանաց տուչութեան մէջ, աստիճանը ցուցնող բառերու փոփոխութեամբ։ թէ լոկ աղոր մասին էր վէճը, երրորդ անգամ և յայտնազոյն եւս կը շեշտէ Մոկացին հակառակորդին բերանէն. «Գրեալ է, կոչեն զայս ոք ի զպրութենէ յաստիճան սարկաւագութեան, և զայն ոք կոչեն ի սարկաւագութենէ յաստիճան բահանայութեան, . . . և զի այս ոք, ասէ, կոչեն ի բահանայութենէ յաթոռ եպիսկոպոսութեան, . . . և զայն ոք կոչեն յեպիսկոպոսուրենէ յարսու հայրապետուրեան», և ոչ «ի հայրապետութիւն»։ Այդ վերջին շեղազրածս իսկ զբաւեր էր Անձեւացւոյն ուշազրութիւնը, որ կը յանգէր այն եղակացութեան՝ թէ «միապէս ունին զանուն եպիսկոպոսութեան հայրապետն (և եպիսկոպոսն), նոյնզունակ և զպատիւն¹»։ այսինքն թէ կրկին ձեռնադրութեամբ՝ եւ

1. Արարտա՝ 1897, 278, 276, 277.

պիսկոպոսականէն վեր աստիճանն մը չէր
ստանար կաթողիկոսը, այլ կը բարձրա-
նար արքուով կամ իշխանութեամբ միայն :
Եւ հուսկ՝ թէ հայրապետական ծեռնա-
զրութեան «ոչ լինել յայլ ազգս» այն
եւս կը տկարացնէր անոր նշանակութիւնը
մեր քով :

Անանիա, որ աւելի ջղերով կը տրա-
մարանէր քան ուղեղով, և չէր կրնար
մարսել մրցակցին պատճառաբանութիւնը,
կը պատասխանէր՝ թէ նախնեաց անծա-
նօթ էր «այսպիսի թարմատար և շամ-
րուշ կարծիք», որ «զառաքելոցն զնախա-
կարգեալ՝ հաստատութեամբ երկնից՝ զա-
թոռ երիցս երանեալ լուսաւորչին, և
նորին զօրացեալ Հոգւով յաջորդողացն
թուակցութիւնն յիսնաքանակ երրիւք հան-
զերձ աստուածաջոկ երամս զրապարտեալ
նախատանօք, և (ի) վայր իջուցանել ջա-
նայցէ» : Ինը զոհ էր եպիսկոպոսական
բանաձեւին կրկնութեամբ, «բաւական
համարեալ զնոյն կոչումն, զի կրկինն այն
հոգի զօրանայ ի վերայ՝ որպէս յԵղիայէ
յԵղիսէէ» :

Պատասխանելով Խոսրովու միւս ընդ-
դիմազրութեան՝ թէ ուրիշ եկեղեցիք չու-
նէին մեր արարողութիւնը, կ'ըսէր՝ թէ

« յայլ ազգաց ոչ կարես ցուցանել զչի-
նելն . իսկ ի մերումս բազում ինչ ի կա-
րեւորացն ոչ զտանի թարգմանեալ¹ » : վեր-
ջինս փախստեան ճանապարհ մ'էր : իսկ
միւս ազգերու մէջ իւր տեսածն էր հե-
տեւեալը . « Զինչ խմանաս, կ'ըսէր, զիոր-
հըրդածութեանն ժամն, զոր թագաւորն
(Թէոդոս) հրամայէր ի վերայ Պրոկղի (Է.
պոլսի պատրիարքին), յորժամ յեպիս-
կոպոսութենէ ի հայրապետութիւն կոչէին՝
ըստ շարածութեանն Առկրատայ² » : Կ'ակ-
նարկէր տեղեկութեան փոքր Առկրատայ³ ,
որ միջնադարեան հայ խմբազրութիւն մ'է,
և մեծին մէջ կը պակսի տեղեկութիւնդ⁴ :
ինչպէս կը տեսնենք, Անանիա կ'ապաւի-
նի այդ անվաւեր ազրիւրին, հակառակոր-
դին հետ համոզելով զմեզ՝ թէ արեւելեան
միւս եկեղեցեաց հայրապետական օրհնու-
թեան սովորոյթն ու կարգեր, որոց ակ-
նարկեցի կանխաւ⁵ , տակաւին զոյութիւն
չունէին այդ դարուն, որպէս զի զա-
նոնք փաստ առնուր Առկացին . — ինք
որ քննող ու տեղեակ էր նաեւ եպիսկո-
պոսի, քահանայի ու սարկաւազի թաղման
կարգերուն հայկականներէն զանազանու-

1. Արք. 278. — 2. Անդ. 279. — 3. Տպ. Վղրշպ. 1897, 167. — 4. Արք. 279, Ճ. — 5. Առա. 109.

թեանց «յայլ ազգս»¹ : — Այլ յետոյ հնաբուժեցան, շատ հաւանօրէն հայ սովորութեան ազդեցութեան ներքեւ, նկատելով հայ եկեղեցւոյ զրից կարեւորութիւնն ու մերձաւորութիւնն անոնց : Անշուշտ նախմին ընդօրինակեց մերը, և միւսերը հետեւեցան անոր :

Ե. Զեռնադրութեան կանոնը : — 1. Մոկացւոյն տեղեկութեամբ՝ կաթողիկոսը կը ձեռնազրուէր եպիսկոպոսական կանոնի բանաձեւին կրկնութեամբ : Սակայն ասկից չի հետեւիր՝ թէ հայրապետական ձեռնազրութեան զատ կանոն մը չկար դեռ անոր օրով, ինչպէս արդարեւ չունէին միւս եկեղեցիք : Զի անբնական պիտի լինէր՝ որ թուղարու մեր նախանձայոյզը հայրապետական ձեռնազրութիւնը հաստատելու ժամանակ՝ չխորհէին նաեւ անոր նշանակութիւնը յերեւան հանող յատուկ կարգ մը յօրինել, և նիւթապէս կրկնէին եպիսկոպոսականը, որ զիրենը հեռի պիտի պահէր իրենց նպատակէն : Եւ յիրաւի նոյն Անանիա յայտնապէս կը վկայէ կաթողիկոսական ուրոյն կանոնի մը գոյութեան եւս՝ հետեւեալ բառերով . «Բատ նմին և հայրապետականն կարգ ձեռնադրութեան մեացեալ՝ բաւական համարեալ զնոյն կո-

լումն» եպիսկոպոսականին¹: Այսինքն թէ
հայրապետական զատ կարդը կար, բայց
եպիսկոպոսականին կոչմամբ. և թէ նոյն
կարգն ի վաղուց մեացեալ էր, ձեռնազրու-
թեան հաստատութեան օրէն իսկ, ինչպէս
ըսի: Բայց այսօր դժբախտաբար մեռած
է, — եթէ ոչ դեռ ծածկուած մատենա-
դարանի մ'անկիւնը, — և վիճակած ուրիշ
շատ արարողութեանց բախտին, որոց
հնագոյն ու հարազատ ձեւերը մոռացու-
թեան ու կորստեան մատնուած են, իրենց
տեղերը թողլով յետամուտ շարադրու-
թեանց:

2. Ունինը սակայն հայրապետական
ձեռնազրութեան երկրորդ կանոնը; որ ծա-
նօթ է ու կը հանգչի ազգային զրչազրա-
տանց մէջ. և որոյ պատճէնը կը պահեն
նաեւ Ա. Ղազարու երեք զրչազրեր՝ 1345
ու 1365 ամաց, և մի նոտրագիր²: Օրի-
նակներ ունի կ. պոլսի ազգային մատե-
նադարանն ալ, որոց հնագոյնը, յոյժ
սխալազիր, լոյս տեսաւ Արեւելեան մամրոյ
մէջ³. և որ ըստ կըկին յիշատակարանաց
հանուեր է «կոստանդնի կաթողիկոսի»
կամ «կոստանդնի լամբրոնացւոյ» օրի-
նակէն: Մեր նոտրագիր օրինակին ծայրն

1. Արք. 276. — 2. Թ. 1173, 960, 1141. — 3.
1903, էջ 289.

ունինք նոյն հայրապետի յիշատակարանն
խել՝ թէ «Եռաւաստա կոստանդին կաթո-
ղիկոս զտայ հայրապետացն Հայոց (մաշ-
տոցը) զրեալ ձեռամբ սուրբ հօրն մե-
րոյ Ներսեսի արքեպիսկոպոսի Տարսոնի,
և ետու զրել աստ, որ է այս»։ Կը հետեւի՝
որ այս մեր օրինակն անմիջական ու հաւ-
ատարիմ ընդօրինակութիւնն է՝ յիշատա-
կարանով հանդերձ՝ կոստանդնի գաղա-
փարել տուածէն։ Եւ կը բովանդակէ չորս
մեծ ու հանդիսաւորագոյն կանոնները.
օրհնութիւն միւռոնի, ձեռնազրութիւնք ե-
պիսկոպոսի ու կաթողիկոսի, և օրհնու-
թիւն թագաւորի։

Ենչ կը նշանակէ աղոնց Լամբրոնացիէն
զրեալը, ընդօրինակութիւն թէ շարադրու-
թիւն։ Զանանք ճշգել։ Գիտենք՝ որ կար-
գերէզ վերջինը՝ թագաւորականը՝ անոր
թարգմանութիւնն էր՝ յարմարութեամբ¹։
Խակ իւր կենսազիրը կը վկայէ՝ թէ նաեւ
«զարդարեաց զաստուածային պատարազին
և զնեսեադրութեանցն և զամենայն խորհըր-
դական գործառնութեանցն եկեղեցւոյ կա-
տարմուեն, և զրեյին ելից թարգմանու-
թէամբ²»։ Լամբրոնեան օրինակիս եպիս-
կոպոսօրհնէրը կիլիկեան ձեւն է, որ շարաթ
երեկոյին քննութեան կը նստեցնէ հայրա-

1. Հայապատռում Հ. Ամեշանի, 481. — 2. Անդ՝ 422.

պետն եկեղեցւոյ մէջ, «զզեցեալ հանդերձ
անգօտի, և ուրար և փորիբաց շուրջառ,
զաւազան ի ձեռն և միրի ի զլուխն»։ Եւ
որովհետեւ միթքը մտաւ ի Հայս 1185ին՝
Գր. Տղայի և Լամբրոնացւոյն օրով՝ վերջ-
նոյս վկայութեամբ իսկ, և փորիբաց շուր-
ջառն ալ աւելի հին չէր¹, ուրեմն եպիս-
կոպոսօրհնէից մէջ եւս անկասկած կայ
Տարսոնի առաջնորդին ձեռնադրուրեանց
դարդարող մատը։ Յետոյ՝ կաթողիկոսօրհ-
նէցն ալ կապուած է նոյն կարգին հետ,
զրելով՝ թէ ընտրելոյն վարուց և հաւատոց
քննութիւնը կը կատարուի՝ «որպէս և կայ
զրեալ ի ձեռնազրութիւն եպիսկոպոսին»։
և մեծ է կազմական նմանութիւնն եւս
երկուքին մէջ։ Որով հոս ալ կ'երեւի
եպիսկոպոսականը յարդարող ձեռքը։ Արդ՝
եթէ կոստանդնի տեսած չորս կարգերուդ
զրիչը Լամբրոնացին էր, յայտնի է՝ թէ
կաթողիկոսական կարգին դարդարիչն ալ
ինցն եղաւ, մեր այդ արեամբ, մտօք,
հոգւով և աստիճանով ազնուականը և հայ
փառքերէն մին։ Զարդարիչ կ'ըսեմ, ոչ
ստեղծող. որովհետեւ եթէ ուշազրութեամբ
նայինը իւր բովանդակութեան, անոր ա-
զօթից մէջ պիտի նշմարենը հայերէն լե-

1. Հմատ. Պատմ. հայ արք. Վենետիկ, 1924, 402,
369.

զուի հնագոյն դրոշմ մը քան զլամբրունացին, և կ'ելնէ՝ ինչպէս ըսի՝ ցթ դար:

Հետեւարար հեռի էր իրականութենէ Հորոյի հնթաղրութիւնը, որ առաջին անգամ վերեւ յիշուած Ա. Բարսղի վրայ կատարուած կարծեց կաթողիկոսական ձեռնադրութիւնը¹, և հաւանական համարեցաւ՝ «որ ճիշդ այդ առթիւ զաղափար յզացուած ըլլայ նաեւ կաթողիկոսական ձեռնադրութեան յատուկ կարգ մ'ալ սահմանելու»²: Յատուկ կարգերէն մին կանուի էր քան զԲարսեղ, և միւսը՝ յետ Բարսղի:

Զ. Արարողուրիւնը: — Չափազանց պարզ է լամբրոնեան կարգը հրահանգաց կողմանէ, որով չենք կարող տեղեկանալ արարողութեան մանրամասնութեանց: Եափս կը զնէ հայրապետին ընտրութեան կերպը՝ մասնակցութեամբ բոլոր ազգին, ամենայն ժառանգաւորաց և երկոտասան եպիսկոպոսաց³: Իսկ ձեռնադրութեան նախորդ երեկոյին, կ'ըսէ, հսկումն կը լինի. — Ինչպէս Աղուանից Եղիազար կաթողիկոսին ընտրութեան առթիւ ալ կը յիշուի ցայդապաշտօնը⁴. ապացոյց՝ թէ սովորութիւնդ ընդարձակ էր: — Առաւոտուն՝ պա-

1. Հմմտ. աստ' 37: — 2. Բիշզանդիոն, 1915, փետ. 16: — 3. Աստ' 58: — 4. Կաղանկ. 170.

տարագէն յառաջ հարցաքննութիւն ընտրելոյն վարուց ու դաւանութեան։ « Ապա ելանեն ի խորանն », և կը սկսին սաղմոս մը, քարոզ մը՝ « Ազաշեսցուք զմարդասէրն Աստուած », և քառասուն « Տէր ողորմեա » , որուն կը յաջորդէ՝ մայրաքաղաքացի եպիսկոպոսէն՝ կոչման սովորական բանաձեւը, յարմարած այս հանդիսին, որ է այսպէս.

« Աստուածային և երկնաւոր շնորհք, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչեն զայս անուն յեպիսկոպոսուրենէ ի կարողիկոսուրին, (բարեփոխութեամբ նախկին ձեւին), տանն թօրգոմայ ի վերակացութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն և յառաջնորդութիւն, ըստ վկայութեան անձին իւրոյ և ժողովրդեանն։ Ես գնեմ ձեռս ի վերայ, ամենեքեան աղօթս արարէք, զի արժանաւոր լիցի զիշխանութիւն առաքելական աթոռոյ անարատ պաշտել առաջի սեղանոյ Աստուծոյ» :

կը յաջորդէ երկար աղօթք մը՝ « Գոհանամք զբէն Աստուած մշտնջենաւոր », դարձեալ սաղմոս մը, զանազան ընթերցուածք հին ու նոր կտակարանէն, աւետարան, և « Աստուած մեծ սքանչելազործ զօրութիւն » եղանակաւոր քարոզը՝ մի կամ

երկու եսլիսկոսպոսէ։ Յետ որոյ երկար
աղօթք մը, «Տէր Աստուած արարիչ ամե-
նայն արարածոց», զոր կը պաշտէ «առա-
ջին կաթողիկոսն»։ բացատրութիւն՝ որ
ուղղագրական սխալ մը կը թուի, կըրկ-
նուած և յետոյ։

Հոս «զգեցուցանեն» ընտրելոյն հայրա-
պետական տարագը, որոյ մասունքը կը
թուէ մի առ մի, զորս ընթերցողը պիտի
տեսնեն կանոնին մէջ, և որոց մանը նկա-
րագիրը տուած եմ Տարագի պատմութեան
մէջ, ու հոս չեմ կրկներ։ Անոցմէ պատ-
մականօրէն ամենէն ուշագրաւն է «քող
երկտակի ի զլուխն», որ յաճախ կը յի-
շուի մեր քով՝ սկսեալ ի դարէն¹, և հայ-
րապետական իշխանութեան գլխաւոր
նշանակը նկատուած է²։ Նոյնն ի զործա-
ծութեան էր նաեւ նեստորական Ասորւոց
քով, և պատրիարքի ձեռնազրութեան պա-
հուն՝ հանդիսապետը «զիցէ քող ի զլուխ
ընտրելոյն», կ'ըսէ իրենց կարգը³։ Մեր
կաթողիկոսօրէնէքը կը յաւելու. «Եւ ապա
նստուցանեն յաթոռ, և առ հասարակ ա-
մեներեան, քահանայքն և ժողովուրդն
համբուրեն զաջն»։ զանազան պատշաճ
շարականներ պաշտելով։ կը յաջորդէ

1. Աստ. 88. — 2. Պատմ. հայ տրդ. 393-94. —
3. Denzin. II, 245.

պատարազը հայրապետէն, և եպիսկոպոսը
ու բոլոր կղերը սեղանոյն յաջ ու ձախ
կողմը կը կանգնին զգեստաւոր՝ «ի սպա-
սու հայրապետին սրբոյ»։ Աւարտելուն՝
դարձեալ սաղմոս, ընթերցուած մը Փօղոսէ
և աւետարան։ «Եւ սկսանի առաջին կա-
թողիկոսն շարական՝ Այսօր ուրախացեալ
ցնձան, և երթան մինչ ի տեղի կերա-
կրոյն»։ Այսօրան է լամբրոնեան կարզը,
որոյ հիմնական մասունքը, որ են զոյզ
աղօթքներն ու երգով քարոզը, կը տար-
բերին եպիսկոպոսական կարգի ունեցած-
ներէն։

Ակնարկ մը ծանօթ արեւելեան ձեռնա-
զրովեանց վրայ¹ ինձ ցոյց տուաւ՝ որ
մերն անոնց հետ եւս կազմախօսական
սերտ կապ մը չունի, ոչ հրահանգաց և
ոչ աղօթից մէջ։ Աւելի ճոխ են անոնք
հրահանգօք ու շարժումներով քան զմերը։
Աղեքսանդրեանը մերթ ներկայ բոլոր եպիս-
կոպոսաց, մերթ զլիսաւորին, կամ զլիսա-
ւորին ու երկրորդին ձեռք դնել կու տայ
ընտրելոյն վրայ²։ Մարոնեանց քով ըն-
տրութիւնը կը կատարեն երկոտասան ա-
ւելի կամ պակաս եպիսկոպոսունք, և
ձեռնազրողը մէկ հոգի է³։ Հոռմայ հայ-

1. Ասա 109. — 2. Dénzin. II, 35, 56. — 3. Անդ 207, 218.

բապետք յառաջազոյն և այժմ ալ կ'օրհնուին միայն՝ առանց ձեռնաղբութեան, եթէ արդին եպիսկոպոս են: Դալով ընտրելոյն աստիճանին, աղեքսանդրեան բանաձեւը կը կոչէ զայն «ի բանայական կարգէ յարքեպիսկոպոսութիւն մեծի քաղաքին Աղեքսանդրիոյ¹»: Անտիոքացի և երուսաղեմացի նեստորական Ասորիք, եթէ ընտրեալն եպիսկոպոս էր, կրկին անգամ կը ձեռնաղբէին զայն Հայոց պէս, մինչ Յակոբիկեանք այդ պարագային նոր ձեռնաղբութիւն չէին տար, այլ սիւնհողական թղթով կը կարգէին զայն մետրոպոլիտ, կաթողիկոս կամ պատրիարք²:

Դառնանք մեր ուշաղբութիւնը կեղբունացնել հայ արարազութեան քանի մը կարեւոր կիտերուն վրայ, լրացնելու համար լամբրոնեան կարգի թերին:

1. Առաջինն է ձեռնաղբութեան մասնակցող եպիսկոպոսաց թիւը: Եթէ եպիսկոպոսին ձեռնաղբէ պիտի լինէին երեք վիճակակիցներ՝ ըստ նիկիական սահմանին, զոր յետոյ պիտի տեսնենք, այդ թիւն ընդ հակառակն կը բազմանայ արքապիսկոպոսաց վրայ՝ թէ հայ և թէ միւս եկեղեցեաց մէջ, առանց որոշ չափի մը: Ոկուլով ՚ի զարէն, կը կարգանք՝ որ կե-

1. Denzin. 56. — 2. Անդ' 77, 253, 254.

սարիոյ մէջ ո. Գրիգորի «Եղին ի վերայ
զձեռս ժողովք եպիսկոպոսացն սրբոց¹»։ Նոյն
քաղաքի արքեպիսկոպոսն Եւսեբի՝ «ըստ
կանոնաց օրինակի ժողովէր առ ինքն...
զբազմութիւն եպիսկոպոսացն սրբոցն ըստ ա-
ռաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն
զսուբրն Ներսէս²»։ Արշակ ուզելով փո-
խել զՆերսէս, հրամայեց «կոչել զամե-
նայն եպիսկոպոս Հայոց աշխարհին, զի
եկեսցեն ձեռնադրեսցեն զԶունակն ի կա-
թողիկոսութեան Հայոց»։ և երբ անոնք
յանձն չառին այդ անիրաւութիւնը, Աղձ-
նեաց ու կորդուաց երկու հլուամիտ ու
ստրուկ եպիսկոպոսաց միայն ձեռնադրել
տուաւ³։ Յառաջ կ'երթանք ու կը հաս-
նինք 850 թուականը, ուր «ժողով եպիս-
կոպոսաց լեալ ի քաղաքագիւղն Երազգա-
ւորս, ձեռնադրեն ի հայրապետութիւն
զԶաքարիա⁴»։ Բնդ հակառակն Մատթէոս
կը պատմէ Պետրոսի հակառակաթոռ Դի-
ոսկորոսի համար՝ թէ «ի ձեռնադրութիւն
նորա ոչ ժողովեցան եպիսկոպոսը և քա-
հանայք և հայրապետք⁵», ինչ որ քնական
էր. Զունակի զիալուածին կը կնութիւնը։
1076ին և 1113ին նոյնպէս «Եղեւ ժողով
եպիսկոպոսաց... և ձեռնադրեցին» զԱր-

1. Ազաթ. 604. — 2. Փաւ. 72. — 3. Նոյն 128.
— 4. Ց. Կթ. 161. — 5. Ուսէ. 88.

զիս ու զԳրիգորիս¹: Շնորհալին իւր ատենարանութեան մէջ կ'ըսէր. «Առ ձեզ են բանք իմ, դասք սրբազնից քահաճայապետացք և այլն, որ ժողովեցաք «ի հրամանէ զլխոյս եկեղեցւոյ, որպէս զի նովառ և շեղ եմին» ձեռնազրէք զիս²: Վերջապէս Ասոյ 1342ի ժողովը կը վկայէ՝ թէ Հայոց հայրապետը կը ձեռնազրուէր տակաւին «գործակցութեամբ եպիսկոպոսաց կամ արքեպիսկոպոսաց³»: Եւ այս բոլոր վկայութեանց մէջ յիշուած ձեռնազրութիւնը կ'իմացուի ընտրութեամբ հանգերծ, որոնք անբաժան էին իրարմէ, և որոց երկուըին ալ կը մասնակցէին եպիսկոպոսները:

Միջին դարուն ջանք մը կը տեսնուի սահմանաւորելու ձեռնազրիչ եպիսկոպոսաց թիւը: Կիրակոս կը պատմէ՝ թէ 1139-ին Գրիգորիս կաթողիկոս ուզելով Աղուանից հովուապետ մը տալ, երկու եպիսկոպոս կը յդէ անոնց, որոնք հոն նախ «ձեռնազրեն այլ եւս եպիսկոպոսս երկոտասան» ըստ օրինի հրամանաց զրոց, և ապա ձեռնազրեն զԳագիկ կաթողիկոս⁴: Եթէ ըստոյգ է տեղեկութիւնդ, հոդ արդէն ճշդուած թիւ մ'է առաքելազումար երկոտասանը, որոյ հետ անկասկած կապ ունի լամբրո-

1. Աւազ. 253, 412: — 2. Կամակ. 5: — 3. Mansi, XXV, 1261: — 4. Կիրակ. 110.

նեան կանոնին նշանակած հայրապետական ընտրութիւնն ալ «երկոտասան եպիսկոպոսօք¹». և ուսկից անկախ չէ անշուշտ Մարոնեանց համանման ընտրութիւնն եւս։ ԺԴ դարուն շատ տիրապետող է արդէն այդ թիւը, որ Գանձակեցւոյն կը թելազրէ «ըստ օրինի հրամանաց զրոց» բացատրութիւնը։ Եւ ԺԵ դարուն թովմամեծոփեցին կրնար այլ եւս ըսել՝ թէ «Հաւանութեամբ ամենայն ազգին՝ երեք եպիսկոպոսը եպիսկոպոս ձեռնազրեն» ընտրեալը, եթէ զեռ չունի այդ աստիճանը, և ապա «ԺԲ եպիսկոպոսը կաթողիկոս օծանեն ըստ Հայոց»։ և թէ կիրակոս վիրապեցին եւս «երկոտասան եպիսկոպոսը և երկոտասան վարդապետօք ի բահանայապետութեան աստիճան հասաւ²»։

2. Մեր յիշած բոլոր վկայութեանց մէջ այնպէս կը կարգանք՝ թէ ներկայ ամբողջ եպիսկոպոսունք միասին ձեռք կը զնէին ընծայելոյն վրայ։ Եթէ ըստ տառին առնուինք բացատրութիւնը, նիւթապէս կարելի չպիտի լինէր այդ միշտ, նկատելով որ շատ բազմութեան պարագային հնարաւոր չէր բոլորին միանգամայն մերձենալ ձեռնազրելոյն։ Ուստի կարելի է նաեւ որոշ թիւ միմանալ, զուցէ դարձեալ

1. Աստ. 58. — 2. Գրչ. թ. 489, 975 Ա. Ղ. Կ.

երկոտասան, և ձեռնաղբութիւնը լայնօրէն
վերագրուած ամենուն վասն զի երկոտա-
սանին ստոյգ չըշանին ալ, յորում կը զրէր
լիւնեաց պատմիչը, իրենց վահան եպիս-
կոպոսին համար կը զործածէ անորոշ թիւը,
ըսելով՝ թէ 968ին «զնեն ձեռն ի վերայ
բազմուրիւն եպիսկոպոսացն, և օծանեն զնա
կաթողիկոս Հայոց¹», փոխանակ զրելու
երկոտասան եպիսկոպոսունք, և զոր յայտ-
նագլէս փոխ առած է Փաւատոսի բացա-
տրութենէն Ներսեսի մասին², Նմանապէս
կաթողիկոսօրհնէրը զրելով՝ թէ «մայրա-
քաղաքացի եպիսկոպոսն ասէ» ձեռնաղբու-
թեան բանաձեւը, չի ճշդեր՝ ձեռք զնողն
ալ ինքն էր միայն, Մարոնեանց պէս³, թէ
միւսերուն հետ միասին, ինչ որ աւելի
հաւանական է:

Վերջապէս բոլոր վկաներէն կ'ուսա-
նինք՝ որ նոյն ինքն եպիսկոպոսութենէ
կոչուած հայրապետաց վրայ եւս ի զործ
կը զրուէր առաքելական ձեսնադրիւնն
իսկ, որ յատուկ էր՝ ըսինք՝ ս. կարգի
երեք աստիճանաւորաց։ Ռւբեմն հասարակ
օրհնութենէ վեր բան մ'էր արարողու-
թիւնդ ըստ արտաքին եղանակին, թէեւ
զայն հաստատողաց ստոյգ զիտաւորու-
թիւնը չենք զիտեր։

1. Ատեփ. Աին. 211. – 2. Աստ' 134. – 3. Աստ' 132.

Յ. Ասոր մէջ կը մտնէր Աւետարանի գործածութիւնն ալ: Աահմանազրութիւնը առաքելոց կը զրեն՝ թէ «սարկաւագունքն զաւետարանն բաց՝ կալցին ի վերայ զլիսոյ որում ձեռնազրին¹»: Այս սովորոյթը մնաց ու կը մնայ տակաւին արեւելեան և արեւմտեան եկեղեցեաց մէջ: Մեր վերոյիշեալ արեւելեան ծիսարաններէն² յայտնապէս կը յիշուի այն. նոյնպէս և մեր քով: Շնորհալին կը ձեռնազրէ կարուց խաչատուր եպիսկոպոսը՝ «կենսակիր խաչիւս և աստուածախօս աւետարանառ և ս. Լուսաւորչին աջովս³», մին կարեւոր և միւսերը կամաւոր: Լամբրոնացին նոյնպէս կը յիշէ՝ թէ «զաւետարանն զնեն ի վերայ պարանոցին» եպիսկոպոսի⁴: Նոյնը կը զըրուէր նաև մեր հայրապետաց վրայ՝ ցորչափ անոնք կը ստանային լոկ եպիսկոպոսական աստիճանը. այսպէս Լուսաւորիչ կը ձեռնազրուի «սրբով աւետարանառն»: Բնական է՝ որ նոյնպէս մնացած լինի նաեւ նորակազմ կաթողիկոսօրհնէից մէջ, թէեւ չյիշուի համառօտութեան կամ մոռացութեան պատճառաւ:

4. Պարագայ մը կը պատմէ Սոյ 1342ի ժողովը: «Յաւուր ձեռնազրութեան անդ

1. Գիրք Ը, զւ. Դ: — 2. Աստ. 109: — 3. Կամակ. 213: — 4. Մեկ. պարգ. 205: — 5. Աղաթ. 604:

(կաթողիկոսին), կըսէ, թագաւորն ինք-նին ի ծունք իջեալ զնէ զմտտանին ի մատն նորին, համբուրելով զաջն, և դառնայ ի տեղի իւր. և յայնժամ առնուն զնա առաջնորդըն և ձեռնազրեն ըստ օրինի կաթողիկոսութեանն¹» : Յայտնի է որ հոգ թագաւորն անոր խորհրդաբար կը յանձնէր հայրապետական իշխանութիւնը՝ զայն ընտրող ազգին կողմանէ զոր ինք կը ներկայացնէր: Կաթողիկոսօրհնէրը չէ յիշած մատանւոյն տուչութիւնն այդ առթիւ, և կիլիկեան զիւտ լինելու է: Երբ Գր. Անաւարզեցին կը ծեռնազրուէր 1293ին, կանչոյ իշխանն Օշին եւս անոր մատանի մը կը յղէ, ինքն իսկ տալով անոր իմաստն ալ. «Մատանիս այս շնորհաւոր՝ քեզ հըրաւէր հասցէ ի Տէր, — ի զուշակ այս պետութեան լինել Հայոց հովիւ և տէր. — Ոսկիզ՝ որ ման առեալ, ըզմողովուրդ ըոցուցանէր, — Եւ ակնըդ պատուական ըզմաբրութիւնդ արտայայտէր²» :

Է. Օծումն: — 1. Մինչեւ հոս հասանք՝ առանց հանդիպելու զրական յիշատակութեանց հայրապետական օծման իւղով. որ եթէ ծեռնազրութենէն զատ արարողութիւն մը չէ, բայց անոր ցայտուն և գէթ ըստ երեւութիւն ու շատերու աւանդական հա-

1. Mansi, XXV, 1258. — 2. Զամէ. Գ, 289:

մողման մէջ ամենէն կարեւոր կէտն է, և
ասոր համար ալ արժանի մեր առանձին
ուշադրութեան :

Ինչու չի տեսնուիր ուրեմն մեռոնի զոր-
ծածութիւնը : Չի զոյութիւն չէ ունեցեր
այդ ամբողջ շրջանին, ոչ միայն կաթո-
ղիկոսին, այլ երկար զարեր նաեւ եպիս-
կոպոսին ու քահանային վրայ : Առ հա-
սարակ արեւելեան եկեղեցւոյ մէջ անծա-
նօթ էր ու կը մնայ տակաւին կարգաւորաց
օծումը : Արեւմտեան եկեղեցին միայն ու-
նէր զայն, ուսկից փոխ առին նաեւ կի-
լիկիա և ապա արեւելեան Հայք՝ մեր քա-
հանայից ու եպիսկոպոսաց վրայ : Առաջին
անգամ Դուկիոս Գ պատն եղաւ, որ իմա-
նալով անոր պակասը մեր քով, 1185ին
թելազրեց զայն, զրելով առ Գրիգոր Տղայ .
«Օծէք . . . և զձեռնազրեալ քահանայիցն
զձեռս և զեպիսկոպոսացն զզլուխս, որով
զօրանան յիւրաքանչիւր պաշտօնն» : Ել
կարծեմ՝ որ նոյն ժամանակ իսկ Լամբրո-
նացին խառնեց զայն իւր վերակազմած
եպիսկոպոսօրհնէից² մէջ, ինչպէս կ'երեւի
կոստանդնի օրինակին գաղափարէն . «Ինչ
հայրապետն զօծումն ի գլուխ նորին խա-
չանման», յարակից բանաձեւով :

Բայց ծիսական նորութիւնը դիւրաւ

1. Զամէ. Գ, 144. — 2. Աստ. 127-28.

չէին կրնար ընդհանրանալ, և երկար ժամանակի կը կարօտէին: Որով ոչ միայն վանացս երիցագոյն մաշտոցը ԺԱ. դարու (թ. 457), որ կանուխ էր բան զփոխառութիւնդ, այլ աւելի կրտսերագոյնը ալ, ինչպէս մերը՝ 1216ին (թ. 199), Երուսաղեմին՝ 1266 ին (թ. 2027) և այլք, տակաւին չունին զայն բահանայական ձեռնադրութեան մէջ՝ զոր միայն կը բռվանդակեն: Այսկայն Ասոյ 1342ի ժողովը կը վկայէ արդէն անոր ընդհանրացման՝ հայիսկոպոսաց ու բահանայից վրայ, անոր սկզբնաւորութիւնը մինչեւ Շնորհալւոյն օրերը հանելով¹, ինչ որ հեռի է հաւանականութենէ, և որուն հաւատացին Զամշեան ու Հ. Ալիշան եւս, վերջինը հաստատելով հանդերձ՝ թէ իրապէս չէր նըշմարուեր անոր հետքը նոյն կաթողիկոսին ժամանակ²: Այսպիսի նորոյթ մը՝ Շնորհալին, որ բարեկարգասէր հոգւոյն հետ պահպանողական ալ էր, չէր կրնար ընդունիլ՝ առանց արտաքին ազդեցութեան. և իւր հայրապետութեան կարճ շրջանին՝ Հոռմայ հետ կցորդութիւնը չէ յիշուած, որպէս զի կը էր անոր ազդեցութիւնը: Ոծումն որոնելու չենք 1185էն յառաջ:

1. Mansi, XXV, 1241-42. — 2. Զամշ. Գ, 84.
Ենորէ. եւ պրզ. իւր, 184, 452.

իսկ Գր. Տաթեւացին՝ 1397ին և 1407ին,
յորս կը շաբագրէր իւր գործերը, կը վր-
կայէ քահանայական օծման գործադրու-
թեանը նաեւ մեծ Հայաստանի մէջ իւր
օրով՝ իրրեւ սովորական բան մը¹:

Արդ՝ յետամուտ քահանայականէդ ու
եպիսկոպոսականէն յառաջ չէր կրնար
լինել հայրապետական օծումը մեր քով:
Արդարեւ ի հնուց և շատ յաճախ գոր-
ծածուեր են մեր մէջ օծանել և օծումն բա-
ռերն եկեղեցականաց վրայ. բայց առնուած
անկասկած անունէն օծերյէ² Քրիստոսի,
«զոր օծն Աստուած Հոգւով սրբով³», և
եղաւ քահանայ կամ քահանայապետ յաւի-
տենից⁴. և ինքն իսկ օծ իւր պաշտօնեայքը
նոյն Հոգւով⁵, և մասնակից ըրաւ զանոնք
իւր քահանայուրիամ⁶, ըստ առաքելական
բացատրութեանց, ինչպէս կ'իմանայ ու
կը կրկնէ մեր Յաճախապատումն ալ ան-
արատից մասին, թէ «նոքա են արժանի
Հոգւոյն սրբոյ օծման և քահանայանալ Աս-
տուծոյ⁷»:

Սոյն իմաստով ուրեմն հասկնալու ենք
Փաւստոսի «զհայրապետսն օծանել», զոր

1. Հարցմանց գիրք. Կ.պոլիս, 1729, 672. Քարդ.
ամբ. Կ.պոլիս, 1741, 172. — 2. Պատկ. Բ, 11. —
3. Գրծք. Ճ, 38. — 4. Երր. Ե, 15. Զ, 20. — 5.
Բ կոր. Ա, 21. — 6. Ա.Պետք. Բ, 5, 9. — 7. Յէլոյ.
38.

յետոյ կը մեկնէ՝ «զի ձեռնադրեսցեն, ձեռնադրել, ձեռնադրեցին» զեւքաէս¹, Փարպեցւոյն «զկարգ օծման»². Կաղանկաւուացւոյն խօսքը՝ թէ Լուսաւորիչ «օծաներ փոխարէն իւր զորդին զվրթանէս»³. Այսարոր երիցուն փաւստուեան յարասութիւնը՝ «զհայրապետութեանն»⁴. Լամբրոնացւոյն «զընտրեալն օծեալ»⁵, զոր կը պարզէ՝ ըսելով առ Շնորհալին, «Ուրախացիր Հոգով օծեալ, (ապա ոչ իւղով), — Կաթողիկոս կը նայոց բազմեալ»⁶, եւ զոր կը կրկնէ անոր կենսագիրն ալ մեծ վկայասիրին համար՝ թէ «հոգեւոր օծմամբ» կաթողիկոս կը նստեցնեն⁷: Այլարանական է տակաւին 1265ին վարդանայ ըսածը՝ թէ Արքիս «օծեալ էր» զՊետրոս կաթողիկոս⁸, — փոխանակ Լաստիվերտցոյն ձեռնադրերոյն⁹. — 1299ին Ատ. Օքքելեանի բացատրութիւնը վահանայ մասին՝ թէ «օծանեն զնա կաթողիկոս»¹⁰. Կամ Բ կոստանդնի համար՝ թէ 1286ին «օծին զնա պատրիարք

1. Փաւս. 71, 72, 73. — 2. Աստ. 112. — 3. Կաղանկ. 28. — 4. Ասփերք. 9, 24. — 5. Ուսէ. 764. — 6. Աստ. 121. — 7. Գովհեսա ի Շնորհալին. — 8. Աստ. 119. — 9. Վարդան. 93. — 10. Աստ. 46. — 11. Աստ. 137.

Հայոց¹ » : Օծանելլի՝ միշտ այլարանօրէն՝
այնչափ սովորական էր նախնեաց, որ
զործածուեր է նաեւ եպիսկոպոսաց ու
քահանայից համար, ասոնց վրայ իւղն
ընդունուելէն յառաջ, և մինչեւ սարկա-
ւագաց մասին, որոնք երբեք իւղ չեն տե-
սեր: Այսպէս Ան. Մոկացին կ'ըսէ՝ թէ
«սարկաւագն բեմական է օծմամբ և ձեռ-
նադրութեամբ² » . և Լամբըոնացին՝ «թէ
սարկաւագ օծաւ, առնու եպիսկոպոսն զու-
րաբն³ » և այլն. մինչ հին ծիսարաններէն
զատ՝ Տաթեւացիէն ալ զիտենք՝ թէ «սար-
կաւագին ձեռն ոչ մեռնեի⁴ » : Մեր նախ-
նիք նոյն բառը զործածեր են նաեւ Ան-
կիւրիոյ ժողովոյն կանոնաց թարգմանու-
թեան մէջ, հեռանալով բնագրէն. ինչպէս,
«վասն սարկաւագաց՝ թէ յորժամ տանիւ-
ցին յօծումն» (յն. կարգեսցին), և «երիցունս
կամ սարկաւագունս օծանել» (յն. ձեռնա-
դրել):⁵

Ծիշեալ հայրապետական օծմանց մէջ
անկարելի է նկատել իւղը նաեւ հետեւեալ
պատճառներով: ա. Զի. բոլոր արեւելեայք
չունէին՝ ըսինք, և չկայ իսկապէս իմ յի-
շած⁶ պատրիարքական ձեռնադրութեանց

1. Ստեփ. Արք. 350. — 2. Արք. 1897, 279. — 3.
Աւել. պար. 206. — 4. Քարզ. ամբ. 172. — 5. Pitra,
I, 445. Մելքը Թանգ. Ա, 267, 268. — 6. Աստ. 109.

մէջ եւս : թ. Արեւմտեայց քով ալ անսու-
վոր է այն Զ դարէն յառաջ, յորում Գա-
ղիոյ, Ապանիոյ և Ափրիկէի եկեղեցիք
սկսան զայն, և թի դարուն ալ ընդունե-
ցաւ Հռոմայ եկեղեցին¹, մինչ մեր օծա-
նելլ վաղուց ի գործածութեան էր : դ.
Այն շրջանին՝ ուր մեր կաթողիկոսունք
եպիսկոպոսական ձեռնազրութիւն միայն
ունէին, չէին կրնար հայրապետական օ-
ծումը ստանալ, ոչ ալ եպիսկոպոսականը՝
որ գեռ չկար : դ. Տակաւին աներեւոյթ է
օծումը Խամբընեան կաթողիկոսօրհնէից
մէջ եւս, ըստ մեր երեք ու կոստանդնու-
պոլսի անթուական օրինակաց², որոց վեր-
ջինները մատանանշեց Հորոյ, ժխտելով
ինքն ալ օծման հնութիւնը, և Փաւստոսի
կամ այլոց օծանելոյն մէջ զբչագրական
սխալներ նշմարելով³, ինչ որ աւելորդ
էր, ու հերքումն իմ տուած օրինակաց
բազմութեան և անփոփխելութեան մէջ է:
Մեսրոր ինքնին իւր օծմամբ կը հաստատէ՝
թէ Փաւստոսի քով, ուսկից առեր է զայդ,
աշճանել կարդացած է և ոչ ածել, ինչպէս
Հորոյ պահանջեց, թէպէտ միանգամայն
վարանելով Փաւստոսի օծման առջեւ, և

1. Armellini, *Lezioni di archeol. crist.* Roma, 1898, 367. — 2. Աստ 126. — 3. Բիզանդիոն, 1915, յնք. 26, գետք. 16.

տառական իմաստին հնարաւորութիւնն ալ
նշմարելով անոր մէջ¹։

Օրմանեան Ղազարայ օծումն անկառ-
կած իւղով հասկացաւ²։ Ուզեց՝ որ Աբրա-
համ եւս «Նոր կիրակիին օծուած ըլլայ»
կաթողիկոս³, այդ բառը փոխանակելով
Ուխտանիսի ձեռնադրելոյն⁴. և նոյն օծումն
իսկական իմաստով՝ — որով անշուշտ կ'ի-
մանար և հոդ՝ — ընդհանրացուց նաեւ կո-
միտասայ ու մեր բոլոր հայրապետաց, ձեռ-
նադրութեան հետ հին կարծելով զայն⁵։
Ներսէս վ. Մելիք Թանգեան, կասկա-
ծանօք նայելով հանդերձ Օրբելեանի վե-
րոյիշեալ վկայութեան՝ վահանայ օծման
իմաստի մասին, ուզելով «մի քիչ ազատ
ենթադրութիւն անել», ըստ՝ թէ «Հայոց
կաթուղիկոսների օծումն սկսուել է Բա-
գրատունեաց թագաւորների օծման հետ
միասին⁶»։ Խակ Հորոյ չընդունելով վա-
հանայ օծումը, Բ կոստանդնի վրայ զայդ
ըստ տառին իմացաւ, և անորմով ալ ըս-
կըսած կարծեց⁷։ Աակայն երեք տեսու-
թիւնքդ ալ կապ չունին իրականութեան
հետ։ Եւ Սոյ 1342ի ժողովը, որ յայտ-
նապէս կը յիշէր ու կը նկարագրէր քա-

1. Բիշզանդիսն, մբա. 2. — 2. Ազգագ. 387. — 3.
Անդ՝ 617. — 4. Աստ՝ 114. — 5. Աստ՝ 116. — 6.
Հայոց եկեղ. իրաւ. Բ, 119. — 7. Բիշզ. մբա. 2.

հանայի և եպիսկոպոսի օծումը, հայրապետականին վրայէն լոռութեամբ անցաւ, շատանալով յիշել անոր ձեռնազրութեան ուրիշ հանգամանքները¹, և համոզելով զմեզ՝ թէ հոդ եւս զեռ չկար կաթողիկոսական օծումը: Նոյն ժողովին consecratio և consecrare բառերը մեր հայրապետաց մասին, որ կը նշանակէ նուիրազործել կամ ձեռնազրել, Զամչեան թարգմանեց օծումն և օծանել², յայտնի չէ ինչ իմաստով. և զոր կրկնեցին Օրմանեան ու Հորոյ եւս³, երկուքն ալ ըստ տառին իմանալով զագոնք վրիպակաւ:

Յառաջ կը տանինք մեր խուզարկութիւնը, և կը հասնինք կիրակոս վիրապեցւոյ ընտրութեան՝ 1441ին, զոր երկարօրէն կը նկարազրէ թովվ. Մեծոփեցին⁴, և բուն ձեռնազրութիւնը կը յիշէ համառատիւս, «ոկիզրն արարաք ձեռնադրութեան», նոյնպէս և անոր մասնակցութիւնն երկոտասան եպիսկոպոսաց ու նոյնքան վարդապետաց⁵: Խակ օծումը դարձեալ կը մընայ լոռութեան ներքեւ: Մեծ քայլ մ'ալ կ'ընենք հոս, և կը հասնինք Առաքել դաւրիֆեցւոյն, որ կը զրէր 1666ին, և որ

1. Աստ' 135, 138: — 2. Զամչ. Ա, 732: — 3. Ազգագ. 1895. Բիշզամդիսէ, մրտ. 2: — 4. Գրչզթ. Բ. 489, 1539 և Ա. Պազարու: — 5. Աստ' 136.

պատմելով զանազան կաթողիկոսաց ձեռնադրութիւնքը, օծման դեռ անտեղեակ կը հանդիսանայ: Այսպէս՝ 1593ին Դաւիթ կթղ. իրեն օգնական «կաթուղիկոս ձեռնադրեաց», կ'ըսէ, զՄելքեսէթ: 1603ին «ձեռնադրեցին» զՄրապիոն կաթողիկոս: Մելքիսէթ 1624ին «օրհնեալ էր կաթուղիկոս» զՄահակ¹: Եւ աւելի ուշագրաւը, 1629ին Մովսէս «օծմամբ ամենատարր Հոգոյն (ապա ոչ իւղոյ) օծաց հայրապետ ամենայն ազինս Հայոց». և 1633ին ալ զՓիլիպպոս «օրհնեցին կաթուղիկոս (նոյն պէս) օծմամբ Հոգոյն սրբոյ²», որ հին այլաբանութեան կրկնումն է, և անոր պէս նաեւ ժխտումն մեռնին: Վասն զի սուրբ իւղոյն այնպիսի մեծարանոց կը նայէին մեր նախնիք, որ ամէն անզամ երբ ուղեր են յիշել զայն, կամ անոր զործածութիւնը պաշտամանց մէջ, իւր իսկութեամբ ու սեպհական անուամբ ալ կոչեր ու պանծացուցեր են, սկսեալ Ազաթանզեղոսէն՝ Հայոց մկրտութեան առթիւ, թէ «իւղն օծուրեան՝ զոր արկանէր Գրիգորիոսի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկաւն խաղայր³», և կորիւնէն՝ թէ ծերունին ս. Մահակ «ի

1. Աստ. 82–83. — 2. Դաւիթ. 239, 242. — 3. Աղաբ. 621.

պաշտաման տեսչանոտ իւղոյն... ի Քրիս-
տոս աւանդեալ¹», մինչեւ Նարեկացին՝
որ «սրբարոյս իւղոյն միտոնի» ներբռողը
հիւսեց աղօթիցը մէջ, թուելով անոր այլ
և այլ կիրարեկութիւնքը², Լամբրոնացին՝
որ անոր չըեղ օրհնութիւնը շարադրեց³,
և ուրիշներ։ Որով չէր կարող Առաքել
ծածկել ու մեք նշմարել իւղը «Հոգւոյն
սրբոյ օծման» ներքեւ, որ՝ կը կրկնեմ՝
հին մատենազրաց քով կը նշանակէր իւ-
ղոյն բացակայութիւնը, և Դաւրիժեցւոյն,
որ անոցմէ առաւ բացատրութիւնդ, չէր
կարելի անզիտանալ զայդ, ու հակառակ
իմաստով երկրորդել նոյնը։

2. Ի նպաստ տեսութեանս կայ ուրիշ
զօրաւորագոյն ու զբական փաստ մ'ալ։
Հորոյ տեսաւ Անտոննեանց զրատան մէջ ի
Պոլիս՝ 1619ին զրուած մաշտոց մը⁴, որ
յաւելուած մ'ունի զատ մելանով, և զոր
յետոյ կ'ընզօրինակեն անոր տեսած ուրիշ
զրչագիր մաշտոցներ եւս։ Յաւելուածդ՝
զոր համառօտելով հրատարակեց նա⁵, —
և զոր ես բնազրէն իսկ հանել տալով ամ-
բողջութեամբ, կը զետեղեմ աշխատու-
թեանս վերջը, — ջատագովութիւն մ'է

1. Կորիս՝ 25. — 2. Աղօթք Դ.Գ. — 3. Առա՝ 127.
— 4. Այժմ Զմառի վանքին մէջ։ — 5. Բիշզանդիոն,
մրտ. 28։

կաթողիկոսական օծման, առ որ կը կոչէ հիներէն այլաբանական օծումն յիշատակող վկայութիւններ, զոր ինքն ալ իւզով իմացաւ վրիպակաւ, և որոց մէջ յառաջ կը բերէ նաեւ Մեծոփեցւոյն խօսքը. «Թովմա պատմազիրն զրէ՝ թէ ԺԲ եպիսկոպոսք օծանեն կաթողիկոս Հայոց»։ Կանխաւ մեր տեսածն է¹, որմէ աւելի բան մը չի տար նոյն վարդապետէն. ապացոյց՝ թէ նա օծման մասին ուրիշ բան զրած չէր։ Եւ նոյն անծանօթ ջատագովն իւր կողմանէ կը յարէ Մեծոփեցւոյն ըսածին. «Եւ եթէ ոչ գտանի (ԺԲ եպիսկոպոս), վեց կամ երեք օծանեն զգագաթն խաչանման մեռոնաւն սուրբ»։ Այս տեղ մանրամասնութիւններ կու տայ օծանելի մասանց նկատմամբ, իւրաքանչիւր օծման հետ դնելով սահմանեալ բանաձեւը։ Ապա կը յաւելու՝ թէ տան «եպիսկոպոսունցն ի ձեռն բոլորազրուի զաւագան»², և ասեն զնորա աղօթքն. և տան զկնիքն՝ որ (է) մատանին կաթողիկոսութեան, զնելով ի մատն միջին, և ասեն զնորա աղօթքն. և տան զաւետարանն, և ասեն զնորա աղօթքն», աղօթքները յանձնաբարելով կարդալ եպիսկոպոսական կարգէն։ Արդ՝ ի՞նչ կը նշանակէ այդ ջատագովութիւնը. եթէ ոչ՝

որ այդ անծանօթին օրով կաթողիկոսական օծումը զեռ ընդունուած ու հաստատուած չէր ազգիս մէջ։ Ի՞նչ կը նշանակէ օծման մանրամասն նկարազրութիւնը. եթէ ոչ որ այդ արարողութիւնը տակաւին ընտանի չէր Հայոց, և չէր մտած սովորական կաթողիկոսօրհնէից մէջ. վասն զի ընտանի և մաշտոցին մէջ խառնուած սովորոյթ մը պաշտպանութեան ու բացատրութեանց չպիտի կարօտէր։ Վերջապէս ի՞նչ կը նշանակէ օծման տեղիքն ու բանաձեւերն եպիսկոպոսական կանոնէն փոխառնուլը. բայց այս՝ որ կաթողիկոսական յատուկ օծում մը չկար տակաւին։

Ով ալ լինի աղոր հեղինակը, Մեծութեցիէն վերջ էր միշտ։ Եւ եթէ առաջին անգամ շարադրած լինի 1619ի մաշտոցին մէջ, կամ թէ աւելի կանուխ զրած և ապա ընդօրինակուած հոդ, յայտնի է միշտ՝ որ նոր բան մ'էր, որով պէտք զզացեր են 1619ին և յետոյ եւս բազմացնելու անոր օրինակները, որպէս զի ընտելացնէին ազգիս։ Եւ իրաւունք ունինք խորհելու՝ թէ մինչեւ Դաւրիթեցւոյն զրութեան 1666 թուականն ալ, — որ է 1619էն 47 տարի վերջ, ինչ որ երկարժամանակ մը չէ, — զեռ անյայտ լինելու է օծումը, և աղով կը մեկնուի պատմչիդ

լոռւթիւնը։ Միանգամայն ոչ մէկ բան
կ'արգելու հետեւցնել՝ թէ Առաքելի զրե-
լէն վերջ իսկ կատարուած լինի 1619ի
մաշտոցին մէջ յաւելուածը՝ բնազրէն տար-
բեր մելանովը։ — Ես մինչեւ հոս հասուցի
խնդիրը, կը կարծեմ թէ և ապահով քայ-
լերով։ Կը մաղթեմ՝ որ նորագոյն աղբիւր-
ներ ճշդեն օծման հաստատութեան բուն
ժամանակն ու հեղինակն ալ։

Բ. Արդիւնքը։ — Վերջին և ոչ նուազ
կարեւոր խնդիրն է՝ որ կ'ելնէ հոս մեր
առջեւ։ Բնչ կրնար լինել հայրապետա-
կան ձեռնաղբութեան և օծման վախճանը
կամ բարոյական արդիւնքը՝ նկատմամբ
օծելոյն անձին և իշխանութեան կամ ի-
րաւանց։

1. Անծանօթ է մեզ, ըսի կանխաւ,
այդ ձեռնաղբութիւնը սահմանողաց նպա-
տակը։ Բայց վերջապէս պարզ օրհնու-
թեան մը ձեւը չէր արարողութիւնդ՝ նոյն
ինքն ի սկզբան ալ։ և վախճանը՝ բնական
է խորհիլ՝ թէ մեր հայրապետին ապահովել
էր բացառիկ դիրք մ'իրեն հպատակ եպիս-
կոպոսական դասին մէջ։ Այդ ձեռնարկը
կը կատարուի Թողարու մօտերը։ և իւր նը-
պատակին հաւանական ժառանգ ու թարգ-
ման մը կրնանք համարիլ զԱնանիա մո-
կացին, որ մեծ գաղափար ունէր անոր

մասին, զոր և համեմատեց Եղիայի կրկին
հոգւոյ իջման Եղիաէի վրայ¹: Ըստ իրեն՝
կաթողիկոսն «է ամենապետ իրրեւ զԱռ-
տուած»: Եւ նայելով իւր աստիճանին
«աստուածային բարձրութեան», կը պան-
ծացնէր «զանձառ բարձրութիւնն զաթոռն
ըրբստոսանման և զմեծ բահանայապետու-
թիւնն», հակառակ Անձեւացեաց առաջ-
նորդին խորովու, որ զարգացած ու լայ-
նախոհ միտք, ըմբոստացաւ անոր կամ
ժամանակակցաց չափազանց տեսութեանց
դէմ: Եոյն անձին ակնարկելով կաթողի-
կոսը՝ կ'ըսէր. «Ոմանք արդենազիւտ նո-
րածայնութեամբ բառնան զերիցութիւն
սուրբ աթոռոյն, համապատիւ զեպիսկո-
պոսունս և զհայրապետն ասելով»: Եթէ
խոսրովու ճշգրիտ համոզումը դիւրին չէ
տեսնել հակառակորդիդ խօսքերուն մէջ,
սակայն կրնանք գուշակել Մոկացւոյն ա-
նոր ընծայած հետեւեալ զաղափարներէն,
«թէ զանազան անուանք՝ մետրոպօլիտք
և արքեպիսկոպոսք և պատրիարք՝ մար-
մեական անուանազրութիւնք են²». և թէ
«երիս միայն կարգս աւես յեկեղեցուց,
և այլ ոչ եւս»: և «զարձեալ՝ այսու-
զհայրապետն համապատիւ (եպիսկոպո-

սին) ասելով, թէ եպիսկոպոսն ձեռնազրէ զնա¹» :

Յայտնի է տողերէդ՝ որ Անձեւացին համապատուութիւնը կը դնէր կարդի մէջ, ոչ թէ իշխանութեան², զորս Մոկացին չէր կարող զանազանել իրարմէ, և այս պատճառաւ ալ չէր հասկանար զիսուրով, որոյ տեսութիւնը նորութիւն մը չէր՝ ոչ ընդհանրական Եկեղեցւոյ և ոչ հայկականին մէջ։ Այո, նոյն ինքն հայ եկեղեցին՝ իւր կրօնապէս ու մտաւորապէս լուսաւուրագոյն շրջանին, ինչպէս Եղարն էր, Խոսրովէն տարբեր չէր խորհեր, իւր հովուապետաց մէջ՝ կարողիկոս, հայրապետ, քահանայապետ, եպիսկոպոսապետ կամ արքեպիսկոպոս տիտղոսներուն ներքեւ տեսնելով եպիսկոպոսական կարգն իսկ, և յաճախ որակելով զանոնք այդ անուամբ ինքնին. «զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս³».

— «սրբոյ եպիսկոպոսին» կամ «եպիսկոպոսին Սահակայ⁴».

— «Յովսեփու եպիսկոպոսի»⁵,

կամ «Յովսէփի եպիսկոպոս Այրարատոյ»⁶։ Եւ նոյն ինքն հայրապետը իրենց պաշտօնական թղթոց մէջ կը գրէին՝ «Ահակ Հայոց եպիսկոպոս» կամ «Սահակ

1. Արքա՝ 286, 278. — 2. Տես և ասա՝ 122. — 3. Ազաթ. 605. — 4. Կորիմ, 11, 18. — 5. Եղեշ, Վենետ. 1893, 77, 49.

եպիսկոպոս Հայոց¹», — «Յովսէփի եպիսկոպոս», կամ «Յովսէփի եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք²», ինը զինքը միւսերուն աստիճանին վրայ դնելով ըստ կարգի:

Աակայն Եռ Ժ դարերու հայ եկեղեցեաց մէջ հոգերանական լայն անջրապետ մը բացուած էր: Եւ եթէ մեր բանասիրական անաչառ ու քննադատ դարուն անզամ՝ իրենք զիրենք լուսաւորեալ անուանողներէն շատեր, — որ չեմ զիտեր՝ ինչ կ'իմանան այդ բառով, — չեն հանզուրժեր տեսնել մեր եկեղեցական անցելոյն իրական դէմքը, կը վրդովին անոր քօղազերծման դէմ, և կը մեծարեն կեղծիրն ու կեղծարարները, զարմանք չէ՝ որ նուազ լայնախոհ շրջանի մը մէջ, ինչպէս Ժ դարն էր, Անանիա չկարենար մարսել Խոսրովու զասական համոզումը:

2. Կաթողիկոսն աւելի յառաջ գնաց, միայնակ եպիսկոպոս ձեռնազրելու իրաւունքն ալ վերազրելով իրեն, հակառակ նիկիական սահմանին, և զոր Անձեւացեաց առաջնորդը նոյնպէս անհամաձայն կը զտնէր օրինաց: «Առանց երկու կամ երեք եպիսկոպոսաց, կ'ըսէր, ... անհնարին է ումեր ձեռնազրել եպիսկոպոս. վասն զի

1. Խորեն. Գ, ծէ: — 2. Եղիշէ, 50, 181.

ոչինչ աւելի բերելով հայրապետին քան
այլ եպիսկոպոսաց (իրը իրաւունք կարգի),
կարի յոյժ գտանի սխալեալ ի մտաց սըր-
բազան տառից», միայնակ ձեռնադրելով:
Որուն կը պատասխանէր Անանիա՝ թէ
ձեռնադրողաց բազմաւորութիւնը կարևոր
էր եպիսկոպոսականէն վեր աստիճան տա-
լու համար միայն: Առ այս կը յիշեցնէր
նոր կտակարանէն Պօղոսի, Բառնաբայ և
Ղուկասու ձեռնադրութիւն ի բազմաց¹, ա-
նոնց մէջ նշմարելով «զկոչումն կատա-
րեալ պատրիարքութեան, և ոչ եթէ այլ
ինչ հաւասարութիւն կարգի»: Նոյնպէս նա-
եւ ուրիշ հայրապետաց ձեռնադրութեանց
մասին, ինչպէս Շմաւոնի կղէոպեանց Ե-
րուսաղեմի մէջ, և Փարիանոսին ի Հռոմ,
զորս կը կոչէր Եւսեբիոսէ²: Իսկ պարզ
եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը՝ միայնակ
կատարուած կամ կատարելի կը յիշուին,
կ'ըսէր, Յովհաննէս առաքեալէն³, Պօղոսէ
ու Տիտոսէ⁴. և Ղուսաւորիչ նոյնպէս մի-
այնակ «ձեռնադրեաց» զԱրիստակէս և
միւս եպիսկոպոսները⁵:

Ինչպէս կը տեսնենք, բաւական հըմ-
տութեամբ կը խօսի հոդ Անանիա⁶, բայց

1. Գրծք. ԺԳ, 3. Բ Կոր. Ը, 19. — 2. Աստ. 10.
- 3. Եւսեբ. Գ, իշ. — 4. Բ Տեմ, Ա, 6. Տեմ. Ա,
- 5-7. — 5. Ագաթ. 642, 630. — 6. Արտ. 282-84.

առանց իրաւունք ունենալու։ Քմայական
էր իւր բաժանումը նոր կտակարանի ձեռ-
նադրութեանց միջեւ, ուր առ հասարակ
բազմութեամբ՝ կը կատարուին անոնք, ըս-
կըսեալ եօթն սարկաւագներէն, որոց ձեռ-
նադրութեան կը մասնակցին բոլոր առա-
բեալը¹, և որոնք «պատրիարքութեան»
չեին բարձրանար, այլ սպասաւորութեան
կը կարգուէին, մինչեւ Պօղոսի ու Բառ-
նարայ ընդունած ձեռնադրութիւնը², — և
այդ շրջուն բարոգչաց վրայ ապագայ
նահանգապետ պատրիարքութեան զաղա-
փարը փնդուելն անտեղի էր, — անոնց միա-
սին տուածները բազմաթիւ «երիցանց»³,
և Դուկասու ընդունածը⁴։ Այդ արարու-
դութեան մէջ ինչպէս այժմ, անշուշտ հին
ժամանակ ալ ձեռնադրիչներէն մին զըլ-
խաւոր և խսկական ձեռնադրիչը կը լինէր,
և միւսերն օգնական, որով Պօղոս կրնար
նաեւ զրել Ծիմոթէոսի, «զշնորհսն Աս-
տուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնադրութենէ
իմմե»։ Կամ «ձեռս վաղվաղակի յուրուք
վերայ մի՛ ղեիցես»⁵։ Կամ ս. Գրիգոր
«ձեռնադրեաց» և այլն. — թէպէտ վերջինս
կրնայ և միայնակ ձեռնադրած լինել գէթ

1. Գրճ. 9, 6. — 2. Անդ. ԺԴ, 3. — 3. Անդ.
ԺԴ, 22. — 4. Բ Կոր. Ը, 19. — 5. Բ Տեմ. Ա, 6.
Ա. Տեմ. Ե, 22.

առաջին անգամ, երբ ի Հայս ուրիշ եպիսկոպոս չկար: — Եւ Նիկիոյ ժողովը 325ին սահմանելով եպիսկոպոսի ընտրողաց գէլք երեք թիւը¹, նոր օրէնք մը չէր դներ, այլ կ'ամրապնդէր՝ մեղմելով՝ հինը, և հաստատելով՝ թէ ընտրողաց բազմաւորութիւնը կարեւոր է հաւասարապէս եպիսկոպոսաց և արքեպիսկոպոսաց համար: Խակ «ընտրութեանդ» մէջ կ'իմանար ձեռնազրութիւնն ալ, որ անոր կից ու լրացուցիչ մասն էր, ինչպէս քիչ յիշոյ 341ին կը շեշտէր Անտիոքայ ժողովն եւս, — որոյ կանոնները նիկիականաց հետ ընդունած էր հայ եկեղեցին իւր կանոնազրոց մէջ², — վճռելով այսպէս. «Եպիսկոպոս մի՛ ձեռնայրեսցի առանց ժողովոյ և ընթերակացութեան մետրոպոլտի զաւարին»: և եթէ բոլոր եպիսկոպոսները չկարենան, կ'ըսէ, հաւաքուիլ, «մեծի մասին ի նոցանէ արժան է զալ» (կան. Ժ. 12): Դիտելի է՝ որ Պետրոսի յաջորդներն անգամ մինչև ցայսօր եպիսկոպոսաց ձեռնազրութիւնը կը կատարեն միշտ երկու զործակիցներով: Եւ առ հասարակ արեւմտեան եկեղեցւոյ մէջ երեք ձեռնազրիչները միանգամայն ձեռք կը դնեն նուիրելոյն գլխին, թէպէտ էականն անոցմէ մին միայն դաւանին:

1. Ասու՝ 12: — 2. Ասու՝ 97: — 3. Pitra, I, 462-63. Մելիք Թանդ. Ա, 288.

Դաւով մեզ, կասկած չկայ՝ որ Առկացին միայնակ ձեռնադրելու իրաւունքը պաշտպանելու ժամանակ՝ ինքն ալ նոյն պէս կը վարուէր։ Բայց իւրմէ զատ ուրիշ դրական ապացուցի կամ օրինակի չեմ հանդիպած միայնակ ձեռնադրութեան։ Բարսեղ կթղ, կարմիր վանաց այցելութեան երթալով, տեղւոյն Ատեփանոս վարդապետն «արար եպիսկոպոս»։ սակայն իւր հետ տարած էր նաև «վարդապետականութակոպոս»¹։ Եւ ինչպէս հոս, նոյնպէս ուրիշ յիշատակութեանց մէջ ալ եղակի բայն ապացոյց մը չէ ի նպաստ Անանիայի տեսութեան։ Ինդ հակառակն ադրբ դէմ կան՝ մեր ըով իսկ՝ յայտնի փաստեր իւրմէ յառաջ և յետոյ։ Զ զարուն Ներսէս աշտարակեցին առ ուղղափառ Ասորիս ընծայականին մէջ կ'իմացնէր՝ թէ «ձեռնադրեցաք զայրդ ընտրեալ զԱրդիսոյ ի մեծագաւառ աստիճան քահանայապետութեան»²։ ամենայն եպիսկոպոսօք աշխարհիս³։ Շնորհալին եղրօրէն եպիսկոպոս կը ձեռնադրուի նոյնպէս «բազում եպիսկոպոսաց և սուրբ արանց ժողովով»⁴։ Լամ-

1. Հյուտմ. 378։ — 2. Խմա եպիսկոպոսութեան, ըստ որում Արդիսոյ պարզ եպիսկոպոս էր ու կը կոչուի միշտ։ Գր. բղոց, 55, 59, 62, 73, 78, 81։ — 3. Անդ՝ 57-58։ — 4. Առփերք, ԺԴ, 33։

բրոնեան եպիսկոպոսօրհնէից մէջ հայրապետին հետ արարողակից կը նշանակուին « եպիսկոպոսունք » կամ « քահանայապետք », թէպէտ չի ըսուփր՝ թէ անոր հետ նաեւ ձեռք կը դնեն, այլ սոսկ՝ թէ « դնէ հայրապետն զծեռն ի վերայ զլխոյ նուփրելոյն », և կ'ըսէ աղօթքն ու բանաձեւը : Ասոյ 1342ի ժողովը դեռ կը հաստատէր՝ թէ Հայոց հայրապետն իւր եպիսկոպոսները կը ձեռնազրէ « գործակցութեամբ եպիսկոպոսաց կամ արքեպիսկոպոսաց¹ » : Եւ գործակցութիւնդ ընթերակացութիւն կը թուի՝ գէթ միջին դարուն, մասնակցութեամբ ինչ ինչ աղօթից կամ ընթերցուածոց, և ոչ նիւթական ձեռնազրութիւն ըստ հնոյն² : Յամենայն դէպս՝ խորով ըստ օրինաց կը խօսէր, մեր եպիսկոպոսապետին զլանալով միայնակ ձեռնազրելու իրաւունքը :

Յ. Մեր կաթողիկոսին վերապահուած էր մեռոնի օրհնութիւնն ալ: Բայց յինքեան եպիսկոպոսական իշխանութեան սեպահական գործ մ'էր այդ, ինչպէս կը տեսնենք տիեզերական եկեղեցւոյ մէջ հին ժամանակ, և դեռ այժմ ալ յարեւմուտուն կը թուի՝ թէ մեր քով վերապահութիւնը ծագեր է Երուսաղեմի եկեղեցւոյն

1. Mansi, XXV, 1261. — 2. Հմատ. աստ' 136.

սովորութենէն, և ազդեցութեամբ նոյն քա-
ղաքի Արկարիոս արքեալիսկոպոսին առ
մերս ։ Վրթանէս թղթոյն, — որ մեր
Եկեղեցական կանոնաց մէջ անցաւ, — յո-
րում կը զրէք՝ թէ «զիւղ սրբութեանն եպիս-
կոպոսապետն օրհնեսցէ, և վասն հեռա-
ւորութեան և կարեւոր պիտոյից՝ հրամա-
նաւ արքեալիսկոպոսին երկու և երեք միա-
բանեալ եպիսկոպոսը և սարկաւագունք
սպասաւորք սրբութեանն», կրնան օրհնել¹:
Այսակեան կանոնը նոյնը կը կրկնեն.
«ոչ է իշխանութիւնդ այդ քահանայից,
այլ եպիսկոպոսապետաց»։ վասն զի՝ կը
յարեն, նաեւ քահանայք կ'օրհնէին երբեմն
«ի տգիտութենէ»²։ Կրնանը ուրեմն հե-
տեւցնել՝ թէ մեծագոյն իրաւամբ նոյնը
կ'ընէին մեր եպիսկոպոսներն ալ, որոց նոյն
կանոնը չի համարձակիր արգելք զնել:
Եւ ազոր շարունակութիւնն էր՝ զոր 719ին
թհ. Խմաստասիրի ժողովը վաւերացուց,
կանոնելով այսպէս. «Պարտ և արժան է
զսուրբ միւռոնն, այսինքն զեւղն անուշա-
հոտութեան հայրապետին օրհնել, և իւ-
րաքանչիւր եպիսկոպոսացն մի անգամ ի
զատկին հինգշաբաթին օր, որպէս և հրա-
մայեալն է» (կան. թ)³: Այսայն քիչ յե-

1. Գր. բարոց, 410. — 2. Սոֆերք. Բ, 92. — 3.
Օճնեցւոյ Առաքեն. Վենետիկ, 1833, 26.

տոյ 771ին Պարտաւայ կամ Ախոնի ժողովը պէտք տեսաւ խափանել եպիսկոպոսաց վայելած ազատութիւնը, գրելով. «Եպիսկոպոսունը մի՛ իշխեցեն (ուրեմն մինչ այդ ժամանակ կ'իշխէին) միւռոն օրհնել, կամ յաւելուած առնել (հայրապետին օրհնածին վրայ) և տալ բահանայից. այլ ամ յամէ ի հայրապետանոցէն առցեն՝ ըստ կանոնական հրամանի սուրբ հարցն» (կան. ե)¹:

Այդ կարգադրութիւնն երթալով զօրացաւ և տիրող դարձաւ, որոյ ապացոյցները շատ են: Մոկացին կը պատմէ՝ թէ Ախւնեաց Յակոբ եպիսկոպոսն ապստամբած հայրապետական աթոռէն, «յԱղուանից կաթողիկոսէ իւղ բերել» կու տար, չհամարձակելով ինքն օրհնել. և իւր յաջորդը վահան հաշտուելով Անանիայի հետ, յանձն առաւ անորմէ «ամի ամի առնուլ զեօղ լուսաւորութեան, որպէս հրաման է սուրբ կանոնաց²»: Մաշտոցի հնագոյն օրինակը ԺՈ. դարու, զոր յիշեցինք³, զըրշին կողմանէ ունի յիշատակարանս. «կանոն խորհրդածութեան սուրբ իւղոյն՝ զոր միունն կոչեն. բայց մեք ոչ իշխեմք գրել, զի մի՛ անհնազանդ գտանիցիմք սուրբ Լու-

1. Գրլթ. Ա. Ղար. — 2. Արք. 1897, 142-43: — 3. Աստ. 141.

սաւորչի աթոռոյն և մեծի հայրապետին
մերոյն : Բնագրին մէջ կար, բայց ինք
զգուշացաւ օրինակել հասարակաց մաշ-
տոցին մէջ, ըստ որում արգիլուած էր՝
զեղծմանց տեղի չտալու համար : Լամբ-
րոնացին կը հաստատէ նոյնպէս՝ թէ կա-
թողիկոսն իւր համացեղից «ունի իշխա-
նութիւն ձեռնադրել եպիսկոպոսս և տալ
զմիռոնն» : Եւ ակնարկելով յոյն մետրո-
պոլտաց, կ'ըսէ՝ թէ անոնց ալ յատուկ
է «օրինել զմիռոնն» զոր պահէ եկեղեցի
յաւելուածով¹ » :

Այս ամէն ըսածէս կը տեսնուի՝ որ միւ-
սոնի օրինութեան վերապահութիւնը մեր
հայրապետին՝ նախնական կամ ընդհա-
նուր սովորութեան մ'արդիւնքը չէր, այլ
հետեւողութեան ու պատշաճութեան, և
իրր կապ մը հովուապետին ու եպիսկո-
պոսաց մէջ : Այսպէս պատշաճութիւնը կը
պահանջէր եւս՝ որ Բագրատունեաց և Ռու-
բինեանց օրով կաթողիկոսն օծէր նորըն-
տիր թագաւորը, ինչպէս կը տեսնենք միշտ
պատմութեան մէջ : Եւ այս երկու իրա-
ւունքներն իրեն տուողն էր հոգեւոր պետի
աստիճանը, ոչ թէ ստացած ձեռնադրու-
թիւնը, որ կապ չունէր այդ իրաւանց
հետ, ոչ ալ աղոնց աղբիւրն էր :

1. Աւել. պարգ. 83.

4. Դիտելի է՝ որ մեր բոլոր հայրապետք
 Մոկացւոյն պէս չէին խորհեր, նոյն իսկ
 միջին դարուն, նկատմամբ կաթողիկոսա-
 կան ձեռնադրութեան արդեանց. ինչպէս
 Գէորգ Բ, որ Աղուանից Սամուէլ ու Յով-
 նան կաթողիկոսները կրկին անգամ ձեռ-
 նադրելով¹, հասկացուց՝ թէ տարապայման
 կարեւորութիւն մը չէր ընծայեր այդ ձեռ-
 նադրութեան, որ Հայուն կամ Աղուանին
 վրայ տարբեր զօրութիւն ունենալու չէր
 անշուշտ. ոչ ալ զայն կը համարէր ան-
 ջընջելի և անկրկնելի կնիք մը, ինչպէս
 էին քահանայականն ու եպիսկոպոսականը:
 Դատարկ խօսք էր Աղուանից պատմչին
 անոնց միոյն ձեռնադրութիւնն «անկա-
 տար» կոչելը, որպէս թէ «յիւրմէ եպիս-
 կոպոսէն» առեր էր Սամուէլ², և ոչ Հայոց
 հայրապետէն: Կրնար ընտրութեան ան-
 կանոն եղանակն անվաւեր ընել կաթողի-
 կոսական իշխանութիւնը, թէպէտեւ անոնց
 հովուապետաց մեր հայրապետներէն ձեռ-
 նադրութիւն ստիպողական կամ սովորական
 չէր³: Եւ եթէ Գէորգ կաթողիկոսական ձեռ-
 նադրութիւնն իսկապէս կարգ համարէր,
 — ինչպէս կ'ընդունէր Անանիա և կը մե-
 ղադրէր անոր կրկնութիւնը⁴, — չպիտի

1. Աստ' 117. — 2. Անդ. — 3. Հմմա. աստ' 135.
 — 4. Աստ' 115.

յանդգնէր կրկնել զայն։ Զի չէր կրնար չզիտնալ՝ թէ ամէն ձեռնաղբութիւն կատարեալ և անկրկնելի է, երբ ընդունուած է եպիսկոպոսական ձեռքէն, և նոյն իսկ ապօրէն եղանակաւ, որ անզօր կը դարձընէ անով տրուած կարգին իրաւունքը, բայց ոչ և կարգը։ Արդէն Բ առաքելական կանոնը, ի հնուց ընդունուած ու յարգուած հայ եկեղեցւոյ մէջ, կ'արգելուին ձեռնաղբութեան կրկնումը (կան, կղ, ըստ յն, կը)¹։ Ուստի յայտնի է՝ որ կաթողիկոսական ձեռնաղբութիւնը կարգ մը չէր համարեր Գէորգ, որով կը լուծէր ու վերստին կու տար։ Եաւ յաշս Շնորհալոյն՝ օրհնութենէ աւելի բան մը չէր այն, և իւր ընտրութեան համար ժողովեալ եպիսկոպոսաց կ'ըսէր. «Եւ զօրննուրիւն ձեր աստուածային, որ հանդերձեալ է իշանել ի վերայ մեղաւորիս, լինել որպէս հուր մաքրիչ տղմոյ յանցանաց անձին խմոյ»։ Ասոնք՝ հիներուն ունեցած համոզմունքն էին։

Ծ. Իսկ ի՞նչպէս կրնանը խորհիլ մեր՝ արդի նայողներս հարցին վրայ։ Եթէ հաւատանը Օրմանեանի, — որ խնդրոյս մէջ ալ նետուեցաւ իւր սովորական թափով,

1. Pitra, I, 29. Մելիք Թանգ. Ա, 134. — 2. Կամկ. 24.

— կարծելով վրիպակաւ՝ թէ ուրիշ եկեղեցիք պատրիարքի ձեռնազրութեան առանձին կանոն չունին¹, և թէ «միայն մերս Հայաստանեայց կաթողիկոսութիւնն է՝ որ խորհրդական ձեռնադրութեամբ և միւսոնի օժմամբ կը տրուի», հետեւցուց՝ թէ «նուիրեալն յայդ աստիճան կը ստանայ առաւել ինչ քան զայլ եպիսկոպոսունս։ Այդ պայմանին զօրութեամբ, կ'ըսէր, Հայոց հայրապետն է միայն՝ որ կարող է անուանիլ օծեալ Հայրապետ, (անզիտանալով օծանել բառին ըրիատոնէական հին և ընդհանուր գործածութիւնը բոլոր եկեղեցականաց վրայ)՝, մինչ այլոց եկեղեցեաց հայրապետը հակառակ իրենց բարձր անուանց և կարծեցեալ տիեզերական իշխանութեանց՝ առաջի եկեղեցոյ և խորհրդական տեսութեամբ հասարակ եպիսկոպոսէ աւելի չեն»։ այլ քան զՀայոցը «նուազագոյն են քրիստոնէութեան օրինական պայմանով, զի չունին հայրապետական օծումը»²։

Այս՝ այդպէս պիտի լինէր, եթէ Քրիս-

1. Տարիներ վերջ սրբազրեց այդ սխալն ուրիշ սխալով մը, Կապուլսի ու Հռոմայ հայրապետաց մեռնադրութիւն վերազրելով (Ագդաս. 157), զոր հերթեց Հորոյ (Բիւզանդիոն, յնր. 26). — 2. Ասա՛ 144. — 3. Արու Հայաստ. 89-90. շեղազրումներն իմա են.

տոսի «Եկեղեցին» կազմուէր Օրմանեանով,
և «Խորհրդական տեսութիւնն»ու «քրիս-
տոնէութեան օրինական պայմանը» սահ-
մանելն անոր հաճութեան թողուէր։ Եա-
չկրցաւ խորհիլ՝ թէ կաթողիկոսական ձեռ-
նադրութիւնը, մարդկային գիւտ, չէր կըր-
նար Յիսուսէ սահմանուած խորհրդոց ոյժն
ու արդիւնքն ունենալ, «խորհրդական ձեռ-
նադրութիւն» լինել՝ նման քահանայակա-
նին կամ եպիսկոպոսականին։ Այնպէս որ
աշխարհիս բոլոր եպիսկոպոսաց ձեռքերն
և ամբողջ իւղերն եթէ գային թափուէին
զլխոյ մը վրայ, չէին կարող ոչ նոր խոր-
հուրդ մը, և ոչ ալ սահմանեալ խորհըր-
դոյն մէջ նոր կարգ մը ստեղծել, ինչ որ
փրկչական իշխանութեան յատուկ գործ
էր, ինքն խոկ նշանակել իւր շնորհաց աղ-
րիւրները, ինչպէս ուսոյց առաքելոց և
անոնք զործադրեցին։ Զի եթէ մարդիկ
իրաւունք ունենային խորհրդներ ու վար-
դապետութիւններ հաստատելու կամ ջըն-
ջելու ըստ հաճոյս Եկեղեցւոյ մէջ, քրիս-
տոնէութիւնը կը դադրէր քրիստոնէութիւն
լինելէ, և կը դառնար մարդկային կրօնը
մը, խաղալիկ ամենուն ձեռքը։

Այնպէս կը հաւատար հին Եկեղեցին՝
թէ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը
շնորհէ քահանայութեան լրումը։ «զբար-

ձրուրիւն և պիսկոպոսուրեան փառաւորու-
րեան Աստուծոյ զպատիւ մեծ », կ'ըսէք
հայ վարդապետի մը ձայնը՝¹ գիտակից ու
հաւատարիմ թարգման տիեզերական Եկե-
ղեցւոյ համոզման։ Եւ այն՝ որ մեծազոյն
փառաւորութիւնն ու պատիւն է, յաւե-
լուած չի կընար ընդունիլ նորամուտ հայ-
րապետական ձեռնադրութեամբ, կը կըրկ-
նենք, ստիպուած ենք կրկնելու մեք եւս
այսօր հին Եկեղեցւոյ հետ, եթէ անոր հա-
ստարիմ հետեւող կը դաւանինք զմեզ։

Եպիսկոպոսներ են՝ որ կը ձեռնադրեն
հայրապետը։ Արդ անոնք՝ թուով աւելի
կամ պակաս, այնչափ կարողութիւն կամ
կարգ կրնան տալ իրենց ձեռնադրելոց՝
որչափ իրենք ունին. սարկաւագութեան,
երիցութեան և եպիսկոպութեան կարգերը։
Հետեւարար անբաւական են աւանդելու
կաթողիկոսին եպիսկոպոսականէն վեր
կարգ մը՝ զոր չունին իրենք. բաց ի հայ-
րապետական իշխանութենեն, որ ոչ թէ
յատուկ կարգէ մը, այլ հաւաքականու-
թենէն կամ զայն ներկայացնող ժողովէն
կը բղխէ, ու կը տրուի ընտրութեան ձեռ-
քով, սկսեալ Եկեղեցւոյ առաջին դարե-
րէն, ինչպէս տեսանք ուսումնասիրութեանս
Ա զլխոյն մէջ։

Քահանայապետական օծումն ալ՝ —
ինչպէս և քահանայականն ու եպիսկո-
պոսականը՝ — ուրիշ բան չէ իւր ծագ-
մանը մէջ՝ բայց փոխառութիւն հին առուե-
րական օրինաց¹ սեպհական ու համազօր
քահանայապետուրենեն² կամ օրինակէն³ որ
նոյնպէս իւղով կ'օծուէր, և որուն յա-
ջորդեց ճշմարիտ քահանայապետն Քրիս-
տոս⁴, օծեալ Հոգով սրբով⁵ փոխանակ
իւղոյ, և նոյն օծուրիւնը⁶ տուաւ նաեւ
իւրմէ կարգեալ քահանայուրեան⁷, ինչպէս
ըսինը վերեւ: Հետեւարար ստուերական
իւղոյն յաւելումն ոչ մէկ հիմնական կամ
իսկական տարբերութիւն կընար բերել
յիսուսաւանդ իրական քահանայութեան
երրեակ կարգերուն վրայ, զորս ծանօթ
տեսանը առաքելոց օրերէն⁸: Ոչ ոք կը
խորհի՛ թէ լատինածէս ու հայ քահանայք
ու եպիսկոպոսունը՝ որ կ'օծուին, կարգի
առաւելութիւն մը կը ներկայացնեն իրենց
արեւելեան կարգակցաց վրայ՝ որ չեն օ-
ծուիր: Ոչ ալ ուրեմն մեր կաթողիկոսաց
օծումն աւելի վեր կը դասէ զանոնը միւս
հայրապետաներէն:

1. Երր. Ժ., 1: — 2. Ղ. հա. Ը., 2,12: — 3. Երր.
Ը., 5: — 4. Անդ. Թ., 1: — 5. Գրծ. Ժ., 38: — 6. Ա.
Յով. Բ., 20, 27: — 7. Ա. Պետր. Բ., 5: — 8. Աստ.
107–108,

Նորամուտ իւղդ իւր ընդունուելէն յի-
տոյ եւս՝ հայ ծիսի հոգւոյն մէջ ոչ յատ-
կանիշ մը համարուեցաւ և ոչ ազրիւր քա-
հանայապետական իշխանութեան։ Ապա
թէ ոչ՝ կամ պիտի վերապահուէր կաթո-
ղիկոսաց միայն, և կամ նորակնիքները,
եկեղեցիք, խաչեր, պատկերներ, սկիճ,
զանգակ՝ որոց կը մերձեցնենք մի եւ նոյն
մեռոնը, նոյնպէս «օծեալ հայրապետներ»
պիտի դառնային։ Ո՛չ, այլ աղով սրբու-
թեան զրոշմ մը կը ստանան անոնք՝ օծման
ընկերող աղօթից օժանդակութեամբ։ Խակ
քահանայական կարգին մէջ առաքելաւանդ
ձեռնադրուրիւնն է՝ որ կը սրբացնէր իւղին
ընդունելութենէն յառաջ, և կը սրբացնէ
նաեւ յետոյ։ Զի առաքելական, կամ որ
նոյն է՝ աստուածային հաստատութեան
մ'արդիւնքն՝ ոչ ոք և ոչ մի նոր բան կա-
րող էր նուազեցնել կամ փոխանցել իւր
վրայ։ Եւ եթէ յաւելուածական ձեռնա-
դրութիւնն ինքնին, զի առաքելական չէ,
եպիսկոպոսականէն աւելի կարգ մը չի
կրնար տալ, այդ մասին դեռ աւելի անզօր
է ու կը մնայ օծումը, կ'ըսէ մեզ միտքը։

Հայաստանեայց եկեղեցին ալ չճանչ-
ցաւ՝ ընդհ. Եկեղեցւոյ հետ իւր միութեան
շրջանին՝ առանձին խորհուրդ մը, կարգ
մ'իւր կաթողիկոսաց վրայ՝ եպիսկոպոսա-

կանէն զատ, ինչպէս տեսանք¹. այլ հովուապետական իշխանութեան բարձրութիւնը միայն, աւանդելի եպիսկոպոսին, և ի հարկին քահանայի մ'ալ: Զսուրբ Յովսէփ, որ զուրկ էր՝ ըսինք՝ եպիսկոպոսական ձեռնադրութենէն անգամ, Դաշտար չէր վարաներ սահմանել «զարդարեղիաթողիկոսն Հայոց», և «զլուխ ամենայն Հայոց քահանայութեանց»: Ուրեմն այդ պարզ երէցն արդէն կատարեալ կաթողիկոս մ'էր յաչս իւր հօտին: Մեր հայրապետները Լուսաւորչէն մինչեւ թողար, որ չունէին կաթողիկոսական ձեռնադրութիւն, և մինչեւ Ժիշտար, նաև օծումը, Օրմաննեանի ըմբռնած «խորհրդական տեսութեամբ» իրենք եւս «հասարակ եպիսկոպոսներէ աւելի» լինելու չէին, և անոր երեւակայած «օրինական պայմանով՝ նուազագոյնք էին» քանի իրենց օծեալ յաջորդները. և յետոյ յանկարծակի հնարուեցաւ հայ իսկական ու եզական կաթողիկոսութիւնը, բարձր քան բոլոր միւս պատրիարքները, որոնք զեռ իմացած լինելու չեն այս իրողութիւնը. ապա թէ ոչ՝ բոլորն ալ կը փութային ձեռնադրուիլ և օծուիլ: Այսպէս Օրմաննեանի զիւտիդ հետեւանքները մասամբ մ'ողբերգական են

1. Առաջ 110-12, 154. — 2. Փարպ. 282, 285.

և մասամբ մ'ալ զուարճալիք, արդիւնք
անոր ակնախտիղ բաներ ըսելու տենդին,
որ ապահովագոյն առաջնորդը չէր կարող
հանդիսանալ՝ ոչ պատմաբննական և ոչ
վարդապետական ասպարիզի մէջ։

Եզրակացնելով, կաթողիկոսական յե-
տամուտ ձեռնադրութիւն և օծութն՝ անոր
իշխանութեան կամ պաշտօնին աւանդման
արտաքին ու հանդիսական ձեւ մը հա-
մարելի են, և ուրիշ ոչինչ։ Զարդ մը,
անշուշտ մասամբ մ'ալ օգտակար՝ իւր բե-
րած օրհնութեամբ, ինչպէս Շնորհալին
ըսաւ։ Եւ ըստ էութեան հաւասար անոր՝
զոր ուրիշ եկեղեցեաց հայրապետներն ալ
կ'ընդունէին ու կ'ընդունին։ Իը համեմա-
տի թագաւորական օծման, որ հոգեւոր
զօրութիւն մը կը շնորհէ՝ յաջողապէս ի
գլուխ տանելու ժողովրդեան առաջնորդու-
թիւնը։ Այսցան. և աւելին՝ եթէ կան դա-
ւանողներ՝ — սին և զուր տեսութիւն է,
անհաշտ քրիստոնէական կրօնից հիմնական
սկզբանց հետ, և այն լրջութեան՝ զոր
պէտք է ցուցնէ զարգացած ու գիտակից
ազգ մը, ինչպէս կը բաղձանք ու կը պա-
հանջենք՝ որ լինի մերը։

Հիմայ որ կաթողիկոսական ձեռնա-
դրութեան պատմականը տեսանք, կ'արժէ
որ ամբողջութեամբ յառաջ բերեմ ձեռ-

նաղրութեան կարգին լամբրոնեան ընազիրն ալ, կատարեալ զոհացում տալու համար հնասիրաց։ Լամբրոնեանը, որովհետեւ անոր նախորդը չունինք՝ ըսի, կամ զէթ անծանօթ է ինձ, և կը մնայ Տարսոնի առաջնորդին զարդարածը միայն կամ խմբազրածն առաջնոյն տարրերով։ Զայս պիտի տամ, որ ինքն իսկ հետաքրքրական է, հեռանալով հայրապետական ձեռնաղրութեան այժմու կարգէն։ Աղրիւրներս երեք են՝ Ա. Ղազարու մատենաղարանէն։ Ա., Կոստանդին կաթողիկոսի օրինակին նոորազիր զաղափարը, թ. 1141. — Բ., 1345ի մաշտոցը, թ. 1173. — Գ., 1365ի ձեռնաղրութեան զիրքը, թ. 960։ Ասոնց ընտրելազոյն ընթերցուածները կը զնեմ ընազրին մէջ, և անկատարներն ի ծանօթութեան, հաշուի չառնելով ուղղազրական սիսալները։ Իսկ ս. Գրոց ընթերցուածները կը նշանակեմ յապաւմամբ, ըստ որում յայտնի են ամենուն։

Գ

ԿԱՆՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶԵՈՆԱԴՐԵԼՈՅ

ՅՈՐԺԱՄ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք ի պատիւ կարողիկոտուրեան տանս Հայոց, նախ ընտրել պարտ և ըստ կարողիկ եկեղեցեացն սահմանի, բոլոր ժողովուրդը հայասեռ ազգին՝ հանդերձ ամենայն ժառանգառուաշըն եկեղեցոյն և երկուուսան եղիսկոպոսաւք։ Եւ² ընտրեն ի նոցանկ երիս արու։

Եւ քենուրեամբ ամենայն ժողովոյն ընտրեն զելին² ի նոցանկ, վկայեալ⁴ յամենայն⁵ ի զործու բարիս, և ի վարս տառաքինիս սուրբ և անարատ, զիտուրեամբ և իմաստուրեամբ լի, որ կարաւղ⁶ իցէ հովուել զժողովուրդին՝ որ յԱստուծոյ հաւատացի հմա։ իսկ յետ այսորիկ հսկումն լինիցի։

1. Բ և Գ մեռադրել։ — 2. Գ չունի Եւ։ — 3. Գ զմի։ — 4. Ա վկայեալս։ — 5. Գ յամենայնի։ — 6. Բ և Գ կարող։

Եշ ի վաղին ի սկիզբն պատարացին խնդրեն յընտրելոյն հարցաքննութեամբ ըգ-վարոց և զգործոց նորա, և դրաւանութիւն հաւատոյն, որպէս և կայ գրեալ² ի ձեռ-նադրութիւն ևպիսկոպոսին։ Եշ ապա երա-նեն ի խորանն, և սկսանին աադմու. Զո-զորմութիւնս ըս տէր յաւիտեան, մին-չե յայն տեղի, հաստատեցից յաւիտեանս յաւիտենից (ԺԲ, 1-26):

Եշ սարկաւագն քարողէ.

Ազաշեցուք զմարդասէրն Աստուած վասն ծառայիս նորին, որ ընտրեցաւ և կոչեցաւ ի կարգ պաշտաման և ի պա-տիւ քահանայապետական³ աթոռոյ սրբոյն թաղէոսի և Բարթուղիմէոսի⁴, և խոս-տովանողին Քրիստոսի սրբոյն Գրիգորի, զի արժանի լիցի ի ձեռն կոչմանս և ձեռնազրութեանս առնուլ շնորհս և զաւ-ըութիւն ի բարութեանց տուղէն յամե-նակալէն Աստուծոյ կեցուացէ և ողորմեսցի։ Կեցու, տէր։

Ողորմեաց մեզ, տէր Աստուած մեր։

Եշ ասեն քառասուն Տէր ողորմեա. և ապա մայրաբարձրացի ևպիսկոպոսն ասէ.

1. Բ և Գ զառանդութիւնն, — 2. Գ կարգեալ, — 3. Ա քամանայտկան, — 4. Բ Բարբողոմէոսի. Գ Բարդո-ղիմէոսի. նոյնպէս և յեսոյ։

Աստուածային և երկնաւոր շնորհը, որ
միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորու-
թեան առաքելական եկեղեցւոյ, կոչեն
զայս անուն յեպիսկոպոսութենէ ի կա-
թողիկոսութիւն, տանն թորգոմայ ի վե-
րակացութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպա-
սաւորութիւն և յառաջնորդութիւն, ըստ
վկայութեան անձին իւրոյ և ժողովրդեանն։
Ես դնեմ ձեռս ի վերայ. ամենեցեան
աղաւթս արարէք, զի արժանաւոր լիցի
զիշխանութիւն առաքելական աթոռոյ ա-
նարատ պաշտել առաջի սեղանոյ Աստու-
ծոյ։

Գոհանամք զքէն, Աստուած մշտնջե-
նաւոր և յաւիտենական, անսկիզբն, հզաւը
զաւրութեամբ և մեծվայելչութեամբ, ա-
րարիչ բոլորից և տէր ամենայնի, որ
միշտ վայելչարար բանաւորապէս փա-
ռաբանիս ի հոգեղէն և ի հրեղէն սքան-
չելի արարածոց քոյ։ Վասն զի դու ես
Աստուած անսկիզբն և անժամանակ, ա-
հաւոր և սքանչելի. որ և անկարաւտ
գոլով յամենայնի, կամեցար հեղուլ զա-
ռատապարգեւ ողորմութիւն տէրութեանդ
քոյ¹ ի ձեռն արարչութեանդ քոյ, զի
մի՛ դու միայն վայելեսցես յանճառ վա-
յելչութիւն թագաւորութեանդ² քոյ, այլ

1. Ա, Բ, Գ խառն կը զործածեն քոյ և քո։ — 2.
Բ և Գ բագաւորութեան։

զի և յարարածս սփռեալ տարածեացի
բարերարութիւն զթութեանդ ըոյ:

Դու ստեղծեր քեզ գերապայծառ հրա-
շակերտ սպասաւորս հոգեղէնս, հըեղէնս,
և զաւրս անմարմինս¹, որք միշտ սար-
սափելի զեղապարութեամբ² վայելեն ի
փառաց լուսոյ աստուածութեանդ ըոյ: Եւ
ոչ վարկար զնոսա միայն փառարանիչս
անզուզական աստուածութեանդ ըոյ. այլ
յաղթեալ յանսահմանելի զթութեանց
ըոյ, ստեղծագործեցեր և զ'ի հողոյ ըզ-
մարդն ըոյին խել ձեռաւք, ըստ պատկե-
րի ըում ձեացուցանելով, և իշխան³ զո-
յիցս ևս կացուցեր, և հաղորդս և փա-
ռարանիչս ընդ վերնական զուարթնոցն
զստորարնակ հոգանիւթն հաստատեցեր,
հոգւով բանականաւ և փառաւք պայծա-
ռացուցեր: Որովհա և այժմ զմեր անար-
ժանութիւնս ի թիւ անդրանկացն՝ որ յեր-
կինսդ են՝ զրեցեր, և ի բանական և ի
հոգեւորական պաշտամնս յայսոսիկ զմեզ
հրաւիրեցեր, և քահանայապետս և երի-
ցունս և սարկաւագունս⁴ և սաղմոսերգուս

1. Գ. չունի հոգեղենս . . . անմարմինս; — 2. Գ. գե-
րապարաքեամբ; — 3. Գ. իշխանաց: — 4. Կիսասար-
կաւազը, մինչեւ Ը դար անյիշտատկ և անզոյ մեր ըով,
և Ժ. զարդն արդէն ծանօթ (Հմմտ. զործս՝ Հայ Ծէսը,
79–81), չկայ հոս, հաստատելով ըստածս՝ թէ սոյն կանո-
նիս տարերը նախկին կանոնչն առնուեր են (աստ' 128):
Կաթ. ըմտք. և Զեռմ.
- 12

և վարդապետս և զայլ ևս աստուածաշնորհ կարգս ըստ վերնական դասուցն ի տաճարի փառաց անուանդ քոյ՝ ի սպասաւորութիւն ահաւոր աստուածութեանդ քոյ արժանաւորս առնելով յաւրինեցեր, որպէս և հաճոյ խսկ եղե¹ նախախնամաւդ ողորմութեանդ քոյ՝ ընտրել զմեզ ի ժողովրդենէ քումմէ, առնել հաղորդս պաշտաման վերնոց դասուցն, ի փառարանութիւն մշտնջենաւոր և անմահ թագաւորութեանդ . քոյ:

Ուստի և մեր անարժանը գոլով հողանիւթեայքա՝ որպէս եմք՝ բաւական արժանաւորիլ այսմ մեծի և ահաւոր խորհըրդական կոչմանս, որում և հոգեղինացն և հրեղինացն սարսափելի է, եթէ ոչ դու. Աստուած մարդասէր, զիջանիս ըստ մերում տկարութեանս, որպէս և հրափեցեր զմեզ ի պաշտաւն փառաց անուանդ քո սրբոյ:

Որ առաջեցեր զմիածին որդիդ քո զտէր մեր Յիսուս Քրիստոս զբանդ և զբարերարութիւնդ, որ վերաստեղծեաց միւսանցամ ի հնութենէ ապականութեանն մեղաց, և լուսաւորեաց զխաւար մտաց մերոց լուսատեսիլ ծագմամբ զալստեանն իւրոյ, և ուսոյց կարդալ առ Հայրդ² բա-

1. Գ. յաւ. եւս — 2. Գ. հայր:

րեզութ և մարդասէր, և առ նախախնաշ
մաւղ և կենդանարար Հոգիդ սուրբ։ Որ
և խոնարհեցաւ իսկ զթութեամբ ի կարիս
մեր, որ նոյն ինքն է ճառագայթ փառաց և
սկատկեր բարերարութեանդ ըոյ, և զգե-
ցաւ մարմին անապական յանարատ Աս-
տուածածնէն և ի միշտ կուսէն Մարիա-
մայ, և այսու զաւրութեամբ շնորհաւը
կենազործեալ՝ արար զփրկութիւն ի մէջ
երկրի հաճութեամբ ըոյ, և զանձառ և
զանապատում խորհուրդն անհասութեան¹,
որ ծածկեալն էր յաւիտեանցն և յազ-
զացն՝ յայտնեաց մեզ²։ Որում և ողոր-
մութեան արժանաւորեալը, հաղորդը ե-
զեաք³ աստուածութեան նորա, որ դատա-
պարտեաց զմեղս ի մարմնի խրում, և արար
խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ
խաչին խրոյ, և անապական թաղմամբն
և համբարձմամբն յերկինս։ Վասն զի
նստելով նորա ընդ աջմէ ըումմէ, առա-
քեաց զէակիցն իւր և զհամագոյակիցն
ըո զՀոգին սուրբ ի դասս սրբոց առաքե-
լոցն՝ մինչզեռ նստէին ի վերնատանն խոր-
հըրդոյ, և բաժանմամբ հրեղէն լեզուացն
ի նոսա՝ արբոյց նոցա զհուրն կենդանի
զկիզանաւղն մեղաց, և նորքաւը ամենայն

1. Գ. անհատութեան։ — 2. Գ. չունի մեզ։ — 3. Բ.
և Գ. եղեալը։

տիեզերաց, զորս և դու իսկ յառաջգիւտութեամբ սահմանեցեր լինել նոցա քարոզս սըրոյ Երրորդութեանդ, սերմանել զբանն կենաց: Որոց փոխանորդս և ժառանգս միշտ յարուցանես ի սուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ, հովուել ինամով և պահել զգուշութեամբ զբանաւոր հաւտ քո՝ զոր ստացար քեզ ի ժողովուրդ արեամբ միածնի քոյ, լինել նախանձաւոր գործոց բարեաց:

Վասն որոյ աղաչեմք զբարերարութիւնդ քո, տէր, ընկալ զպաղատանս մեր ամենեցուն զժողովելոցս¹ ի տաճար փառաց սըրութեան անուանդ քոյ. և զծառայս քո, զոր ընտրեցեր և կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քո, և ի սպաս պաշտաման սուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ, լինել վերակացու և քարոզ ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ, ընկալ և շնորհեա սմա զաւրութիւն և շնորհս առաքելական. և զաւրացո՛ ի գործութեան՝ կալ առաջի անարատ վարուք և առաքինասէր գործովք, հովուել զհաւտ իւր սըրութեամբ և արդարութեամբ զամենայն աւուրս կենաց իւրոց, լինելով ի կեանս իւր և ի գնացս անրիծ և անարատ, զարդարեալ ամենայն գոր-

1. Գ. ժողովելոց:

ծովք առաքինութեամբ, պարկեցա, հեզ,
երկայնամիտ, անոխակալ, ողորմած, խա-
ղաղասէր¹, ժուժկալ, զթած առ ամենե-
սեան :

Իշխանութիւն կալցի առաքելաբար յեր-
կինս և յերկրի թողուլ զմեղս, բանալ
զղբունս արքայութեան միջնորդութեամբ
իւրով այնոցիկ՝ որ կամիցին գալ առ քեզ :

Բաշխեսցէ և տացէ ըստ իւրաքանչիւր
պատշաճի զկանոնեալս, եղիցի հայր և
այցելու որրոց և այրեաց ժողովրդեանն,
որ է ճշմարիտ կրանաւորութիւն։ Մի՛ եր-
բեք անքնին և վաղվազուկ ձեռնազրու-
թեամբ հաղորդեսցի մեղաց աւտարաց,
այլ զարժանաւորսն կացուցանել սարկա-
ւազունս և երիցունս և եպիսկոպոսունս՝
ի պէտս առաքելական եկեղեցւոյ :

Անբամբաս պահեսցէ զանձն իւր առ
մարդիկ, և անարատ առ քեզ սրտագէտդ
Աստուած, որպէս զի անարատ զնացեալ
յամենայն ճանապարհս արդարութեան
ըստ կամաց քոց² որրոց և բարեսիրաց,
արժանի լիցի յաւիտենական կենացն ընդ
ամենայն սուրբս քո։ Եւ հանդերձ ամե-
ներումբը՝ զորս ընծայեսցէ քեզ, փառա-
ւորեսցէ զքեզ, Հայր ամենակալ, և զՈր-
դիդ քո միածին զտէր մեր Յիսուս Քրիս-

1. Գ. Խաղաղադրաբ։ — 2. Ա. չամի քոց։

տոս, և զնախախնամաւղ և զկենդանաւրար Հոգիդ բո սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն¹:

Եւ ապա այս կանոն կատարի:
Սադոս ձև. Յիշեա տէր զԴափիթ:

Ընթերցուած յԵլից

Խաւսեցաւ տէր ընդ Մովսէսի և ասէ.
Եւ դու մատուցես... ի յիշատակ հանապազորդ առաջի Աստուծոյ: (ԻՌ, 1-29):

Ընթերցուած յառաջին թագաւորութեանցն

Եւ մանուկն Սամուէլ պաշտէր... եւ մեծացաւ մանուկն Սամուէլ առաջի տեառն: (Բ, 18-21):

Ընթերցուած յԵրկրորդ Թագաւորութեան

Եւ եկին ամենայն ծերքն... և տէր ամենակալ էր ընդ նմա: (Ե, 3-9):

Ընթերցուած յԵզիկիէլէ մարգարէէ

Եւ եղիցի ի մտանել քահանայիցն... ի մտանել յարտաքին սրահն: (ԽԴ, 17-21):

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ

Բայց դուք քահանայք տեառն կոչես ջիք.... զցնծութիւն առաջի ազգաց: (ՂՋ, 6-11):

1. Ա և Գ չունին ամեն.

Պետրոսի առաքելոյ ի կաթուղիկեայց
Թղթոյն ընթերցուած

Ի բաց թաւթափել . . . կոչեաց յիւր
սրանչելի լոյսն: (Ա. Պետ. Բ, 1-9):

Ալէլուիա. Ասդմոս ձժի. Խոստովան
եղերուք տեառն, զի բարի է, զի յաւիտեան:

Աւետարան ըստ Մատթէոսի

Եւ ելեալ Յիսուս ի կողմանս... եղեցի
արձակեալ յերկինս: (ԺԶ, 13-19):

Ապա մի ոք կամ երկուք յեպիսկոպոսացն
ասեն զբարոզս զայս.

Աստուած մեծ սրանչելազործ զաւրու-
թիւն, որ արարեր զփառաւորեալս և
զանքնինս ի պատիւ փառաց տէրութեան
աստուածութեանդ քո. աղաչեմք:

Որ արարեր քեզ սրբասացս զքերով-
քէսն և զսերովքէսն¹, և զսմենայն դասս
հոգեղէն և հրեղէն զուարթնոցն, ընդ նոսին
և ի հոգեղինացս հաճեցար ընդունել փա-
ռարանիչս և երկրպագուս ամենազաւը տէ-
րութեանդ քո. աղաչեմք:

Եղեր մարդ ճշմարիտ, եկիր կամաւ ի
փրկութիւն մեզ ճառագայթդ փառաց և ծա-
զումն անիմանալի բնութեանն, և ողոր-
մութեամբ բարձեր զպարտիս մեր, մար-
դասէր. աղաչեմք:

1. Ա. զսերաչքէսն և զքերաչքէսն:

Ընտրեցեր զեկեղեցի. քո տաճար փառաց անուանդ քում սրբոյ, և պստկեցեր զմանկունս սորա ի զարդ փառաց լրման աստուածութեանդ քո. աղաչեմք:

Կարգեցեր ի սմա հովիւս և վարդապետո՞ հանդերձ ամենայն բարեկրաւն պաշտաւնէիւր, և զամենայն դասս զինուորութեան սորա հաղորդս արարեր անմարմնոց սըրբասաց փառարանչացն. զքեզ աղաչեմք:

Ընկալ և այժմ զծառայս քո՞ զոր ընտրեցեր և կոչեցեր յառաջնորդութիւն կաթողիկէ եկեղեցւոյ քում սրբոյ, և լեր սմա օգնական և պաշտպան՝ հովուել զնորժողովուրդ քո՞ զոր ստացար պատուական արեամբդ քո սրբոյ. աղաչեմք:

Պահեա զսա անխիղճ ի զործ մշակութեան առաքելական աթոռոյ տանս Հայաստանեայց, և առաջնորդեա սմա յամենայն ճանապարհս արդարութեան. աղաչեմք:

Յիշեա զուվստս սիրելեաց քոց, և հեղ զառատ ողորմութիւնդ ի վերայ ժառանց գութեան երկրի քոյ. խնդրեմք:

Զաւրացո զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ առ ի հովուել զժողովուրդս քո՞ ի զաւրութիւն ամենազաւր բազկի քոյ. և զամենայն դասս ժառանգաւորաց եկեղեցւոյ քոյ պահեա՝ հանդերձ վանականաւը և ճգնազգեաց միանձնացելովք. խնդրեմք:

Հաստատեա ի զաւրութիւն ամենաշաղթ բազկի քոյ զբարեպաշտ թագաւորն . . . հանդերձ իշխանաւը իւրովը և ամենայն զինուորեալ մանկամբը իւրեանց, և շնորհեա ի սիրտս նոցա զիսաղաղութիւն եկեղեցւոյ քոյ և ամենայն ժողովրդեանս, խնդրեմբ¹:

Փրկեա զժողովուրդս քո և աւրհնեա ըզսոսա՝ որը երկիր պազանեն առաջի ամենազաւր տէրութեանդ քո. խնդրեմբ:

Եւ ևս առաւել զյորզորումն սիրոյ:

Զանձինս մեր: Ազորմեա մեզ²:

Եւ առաջին կարողիկոսն առ զադարս դայս³.

Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց, որ արարեր զամենայն յոչընչէ և ածեր զմեզ յայս կենդանութիւն, և ցուցեր մեզ ճանապարհ կենաց և փրկութեան, և արժանաւորս արարեր զմեզ այսմ ահաւոր և երկնաւոր խորհրդոյ քահանայական կոչմանս: Դու ես՝ որ եղիր զմեզ ի պաշտանս յայս զաւրութեամբ սուրբ Հոգւոյդ, կարգեցեր աւետարանիչս նորոյ կոտակարանացս: Դու ես՝ որ շնորհեցեր մեզ զզիտութիւն սրբութեանդ քոյ. և ով

1. Բ աղայեմբ: — 2. Բ և Գ ողորմեաց: — 3. Բ և Գ չոնին դայս:

է բաւական խաւսել զզաւրութիւնս քո,
և լսելի առնել զամենայն աւրհնութիւնս
քո, տէր ամենայնի և արարիչ երկնի և
երկրի և ամենայն երեելեաց և աներե-
ւութից արարածոց քոց, որ նստիս յա-
թոռ փառաց և զխոնարհս տեսանես։ Ան-
սկիզբն անբաւ բնութիւն, Հայր տեսոն
մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ
է պատկեր փառաց քոց և կնիք և նկա-
րագիր անպարազրելի¹ էութեանդ. որ յան-
ձըն իւր ցուցանէ զՀայրդ համազոյ. որ
նոյն ինքն է բան կենդանի, լոյս ճշմա-
րիտ, իմաստութիւն և զաւրութիւն յա-
մենայնի, Աստուած յառաջ քան զյափ-
տեանս։ Որով և Հոգիդ քո սուրբ յայտ-
նեցաւ մեզ, որ է հոգի ճշմարտութեան,
հոգի իմաստութեան և հանճարոյ և զի-
տութեան, խորհրդոյ և զաւրութեան և
երկիւղի և աստուածպաշտութեան. որով
և որդեզրեցաք իսկ Հաւրդ երկնաւորի և
ընկալաք զառհաւատչեայն պտուղ հան-
դերձելոց և յաւիտենից բարեացն։ Որ
նոյն ինքն է կենդանարար զաւրութիւն,
յորմէ ամենայն բանաւոր և մտաւոր ա-
րարածք զաւրանան՝ առ ի զքեզ² աւրհ-
նել, զքեզ զովել, քեզ մշտնջենաւոր փա-
ռատրութիւն³ մատուցանել, վասն զի ա-

1. Գ չունի բառզ։ — 2. Երեքն ալ քեզ։ — 3. Ա.
փառառութիւն. Գ. փառարանութիւն։

մեներեան ստեղծուածք անարատ ձեռաց
քոց եմք։ Քեզ երկիր պազանեն հրեշ-
տակը, հրեշտակապետք, աթոռք, տէրու-
թիւնք, իշխանութիւնք, զաւրութիւնք։ Զքե-
շուրջ կան քերովքէք բազմատեսակը և
վեցթեեան սերովքէք, որք սաւառնաթե-
ւեալք աղաղակեն անլոելի ձայնիւ, և զե-
րեբսրբեան աւրհնութիւնս մատուցանեն՝
ասելով. Առըք, սուրք, սուրք, տէք զաւ-
րութեանց, լի են երկինք և երկիր փա-
ռաւք քո։

Դու ստեղծեք զմարդն հող յերկրէ, և
ի պատկեր քո բարերարութեանդ պատուե-
ցեր զնա, և եղիր զնա յաղենական զը-
րախտին փափկութեան ի կեանս անվախ-
ճանս և ի հանգիստ բարութիւնս. և ի
պահել պատուիրանին՝ խոստացար նմա
զմշտնջենաւոր կեանս և զանապականու-
թիւն։ Այլ զի անցին զպատուիրանաւ
քո, և անկան ի պատրանս խարէութեան
աւձին, ապա և մահկանացու եղեն իւրեանց
կամակոր¹ պատուիրանազանցութեամբն,
զորս արդար զատաստանաւ քո մերժեցեր
ի զրախտէն փափկութեան յաշխարհս
յայս. որ և սահմանեցաւ նոցա ի քումմէ
բարերարութենէդ զառնալ անզրէն ի հող
յորմէ ստեղծան։

Սակայն ի վերայ այսր ամենայնի ո՛չ
անտես արարեր։ ողորմածդղ¹ Աստուած,
զգործս ձեռաց քոց։ այլ հայրախնամ
ողորմութեամբ քո գթացար յազգս որդ-
ւոց մարդկան, և առաջեցեր զորդիդ քո
սիրելի զծոցածինդ և զէակիցդ և զփա-
ռակիցդ²։ Որ իբրև եկն լրումն ժամանա-
կի ըստ կանխասաց մարգարէիցն գուշա-
կելոյ, եկն կամաւը քո և զզեցաւ մար-
մին յանարատ կուսէն Մարիամայ Աս-
տուածածնէն, և ճանապարհորդեաց ընդ
ամենայն կիրս մարդկային կենցաղոյս
առանց մեղաց։ Վասն զի ի յերկրի երե-
ւեցաւ և ընդ մարդկան շըջեցաւ Աստու-
ածն յաւիտենական, որ փրկեաց զմեզ
ի խաւարային կուսպաշտութենէ կամա-
ւոր չարչարանաւըն և անապական թաղ-
մամբն, և լուսափայլ և կենսարեր յա-
րութեամբն, և ստացաւ զմեզ իւր ժողո-
վուրդ սեպհական, ի թագաւորութիւն,
ի քահանայութիւն և յազգ սուրբ։ և
լուաց ի ջուր³ սուրբ աւազանաւն, և ա-
րար բնակարան և աւթեւան Հոգւոյն սըր-
բոյ։ համբարձաւ յերկինս և նստաւ ընդ
աջմէ մեծութեանն ի քարձունս։ և զբա-
րեխնամաւղ և զէակից և զմշտնջենաւու-

1. Գ. ողորմած։ — 2. Գ. չունի և զփառակիցդ։ —
3. Ա. յուրբ։

բակից Հոգին սուրբ առաքեաց ի բարձանց
ի դասս սրբոց առաքելոցն, որոյ եկեալ
ի սուրբ վերնատունն¹ յաւուրն մեծի ի² կա-
տարման սրբոյ պենտեկոստէիցն³, մկըր-
տեաց զնոսա ի հուր աստուածութեան իւ-
րոյ, և բաժանեալ ի նոսա հրեղէն լեզուաւր,
արբոյց նոցա զհուրն կենդանի և կենդա-
նարար, որը վիճակեցան յազգս մարդ-
կան, երկնագործեալ⁴ տարբերութեամբ լե-
զուացն հրեղինաց ի ձայն հողմոյ, և ընկա-
լան զձեռնադրութիւն քահանայապետու-
թեան և վարդապետութեան, առեալ իշխա-
նութեան շնորհս թողուլ զմեզս և ունել,
առնել նշանս և արուեստս և հալածումն
զիւաց և լուծումն ախտից և քակտումն
մեզաց⁵ և ազատութիւն ի ծառայութենէ
ապականութեան յազատութիւն փառաց
միածնի որդւոյ քոյ սիրելոյ, և զնալ ի
պատուիրանս նորտ և արժանի լինել
խռոտացելոց բարութեանցն, և լուսաւո-
րել ծննդեամբ սուրբ աւազանին վերա-
զրութեամբ Հոգւոյն սրբոյ:

Նաեւ տունս թորզոմայ, որ է Հայաս-
տան աշխարհս մեր, վիճակեցաւ երկուց
ընտրելոց նորին աշակերտացն բարզուղի-

1. Ա, և Բ վերնատանն: — 2. Գ չունի ի: — 3. Գ
պենտեկոստէիցն: — 4. Ա երկնագործել: — 5. Գ չունի
և քակտումն մեղաց:

մէսսի և Թաղէսսի, որ և լուսաւորեցին իսկ զկողմս հիւսիսոյ ի սառնասառոյց հեթանոսական խաւարային դիցապաշտ կըռուապաշտութեանցն։ Զոր և վերստին զնոցին կարգ պաշտաման պակասութեան ելից մեծն Գրիգորիոս՝ ճշմարիտ խոստովանաւզն Քրիստոսի քոյ և Լուսաւորիչն մեր¹, որ և զպակասութիւն չարչարանաց միածնիդ քոյ ելից ի մարմնի իւրում իւրովք բըրտնաջան և բազմամեայ չարչարանաւքն։

Եւ արդ, տէր մեր և Աստուած բարերար և բարեխնամող², Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բարեխաւսութեամբ սոցին³ ընտրելոցն զորս յիշատակեցաք՝ ընկալ զաղաշանս ժողովրդեան քոյ, զորս ժողովեցեր ի յարկի փառաց սրբութեան քոյ. և զծառայս քո զայս զձեռնազրեալս ի մէնջ՝ զոր դու իսկ ընտրեցեր և ընկալար ի քահանայապետութիւն և յառաջնորդութիւն աշխարհիս Հայոց, անշարժ պահեա ի կոչումնս յոր կոչեցաւ։ Շնորհեա՛ սմա սիրտ զգաստ՝ զգուշութեամբ պահել զամենայն պատուիրանս քո, սիրել զըրեզ յամենայն զաւրութենէ և ի բոլոր սրտէ և ի բովանդակ մտաց իւրոց, որպէս զի գնասցէ ճշմարտութեամբ ի ճանապարհս արդարութեան, սուրբ սրտիւ և

1. Գ չունի մեր։ — 2. Ա բարեխնամ։ — 3. Ա եոցին։

անկեղծաւոր հաւատով առաւելեալ ի զործըս բարեաց՝ ըստ կամաց քոց բարեսիրաց։ Կացցէ հաստատուն և անարատ ի կարգի բահանայապետութեան առաջի քո ի կաթողիկէ առաքելական եկեղեցւոջ, շխնեալ և հաստատեալ ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց և մարզարէից։

Եայեա՛ բաղցրութեամբ ի ժողովուրդս քո, յիշելով զուխտ և զողորմութիւն սիրելեաց քոց, և պահեա զսուրբ եկեղեցի քո անարատ յերեւելեաց և յաներեւելեաց թշնամեաց ճշմարտութեանն . վասն զի զինք արեան միաձնի քոյ է, շինեալ հաստատուն և անշարժ հաշտարար պատարագաւ։

Պահեա՛, տէր, ընդ երկայն աւուրս ըզպատուական հայրապետու և զզլուխ¹ մարմնոյ եկեղեցւոյ քոյ, առաջնորդել հեղութեամբ և ուղղափառ վարդապետութեամբ ժողովրդեան քոյ։ Բարձրացո՛ ի մէջ տիեզերաց զեղջիւր աւծելոյ քո եկեղեցւոյ սըրբութիւն։ Զգեցո՛ սմա պատմուճան ցնծութեան և ուրախութեան, որ է արդարութիւն և սըրբութիւն, առաւելեալ քան զականակապ վակասն² ահարոննեան³ պատմուճանին, որ էր⁴ ստուեր հանդերձելոցն ըստ երկուսան ցեղիցն որդւոցն իսրայելի։

1. Ա. զգուշիս։ — 2. Գ. գական պատուական։ —
3. Ա. ահարոննեան։ — 4. Բ. և Գ. է.

Տուր սմա շնորհս առ ի սպասաւորութիւնս յայս, որպէս ետուր աւրէնսղբին Մովսիսի հաւատարիմ ծառային քոյ, և հոգելից տեսանողին Ամառուելի, և մեծի վիմին հաւատոյ երանելոյն Պետրոսի զըւխաւորի առաջելոցն, և ընտրելոցն քոց որդւոցն Որոտման և այլոց սրբոց՝ զորս յիւրաքանչիւր ժամանակի¹ ընտրեցեր, և ի ձեռն նոցա բարեզործեցեր յազգս մարդկան։ Նոյնպէս և զսա արժանաւորեա լինել սպասաւոր նորոյ ուխտի քոյ, և ըգժողովուրզս² քո՛ որ հաւատացաւ սմա, զոր ընկալար արեամբ միածնի քոյ, անարատ պահեա, որպէս զի մերկացեալ զամբարշտութիւն և աշխարհական զցանկութիւն, մեոցին մեղացն և կեցցեն արդարութեանն, զգեցեալ զսրբութիւնն Քրիստոսի քոյ։ Եղիցին³ մի հաւտ և մի հովիւ, և ի միասին արժանաւոր լիցին յափտենական ուրախութեանցն հասանել ընդ ամենայն սուրբս քո։

Եւ մեր ամենեցուն ընկալեալ⁴ զսա հոգեւոր և սուրբ ողջունիւ, զոհասցուք զքո առատ մարդասիրութենէդ՝ յազագս տուեցելոցս մեզ բարեացս⁵, և խոստացելոցն հանդերձեալ անսպառ կենացն,

1. Ա. չունի ժամանակի։ — 2. Ա. ժողովուրդս։ — 3. Բ և Գ եղիցի։ — 4. Գ. ընկալեալը։ — 5. Բ և Գ բարեաց։

որոց լիցի ամենեցուն մեզ արժանի լինել շնորհաւք միածնի քոյ տեառն մերոյ թիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հաւը ամենակալի և համազոյակցի Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յամենայն արարածոց, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա զգեցոցանեն զգեստ¹ սպիտակ բոլորաստորոտ ի ներքոյ, և յաչ և յանեսկ կողման աղանելեացն ծիրանի կամ սեաց ոռոք՝ կցած կարանաւ. և բող երկտակ ի զրոյին. և ոռասեոց ոսկերել զպարանցաւն՝ փրկչական և Աստուածածնի և սրբոց հայրապետացն կերպագրուրեամբ քանդուածեալ. և ի վերայ նախորտ² բազմախաչ նկարուք³ և անկիւնիւք զարդարած. և կոնքեռ⁴ զգաւտովն ի ձախու կողմանն, նոյնպէս ոսկերել նկարիւք և պատկերաւք քանդակած. և այլ կոնքեռ կտաւեայ զմատանցն միջոյ. և կաշիկ յոտսն: Եւ ապա նատոցտանեն յարոռ, և առ հասարակ առեներեան քանանայքն և յոդովորդյն համբուրիեն զաչն, և պաշտեն շարական⁶ Այսօր ուրախացեալ ցնծան, և ՈՐՔ արժանաւորեցայք, և որ այլ մի լոռ

1. Բ զգեստ: — 2. Ա և Բ նամփորդ: — 3. Ա. նկարիւք: — 4. Բ և Գ կոնքեռն: — 5. Բ և Գ մասեանցն: — 6. Բ շարականք:

միոչէ. և վասս տուեալ ասեն՝ կց. Ավուցան շնորհը, և Հարսնացեալ։ Եւ իսկոյն ի ժամ մտանեն, և յորժամ սկիզբն առնե հայրապետն պատարագին և ասիցէ Տէր Աստուած զաւրութեանց, վերացուցանէ զքողն և բացաւ զլխով աշարտէ ըդխորհորդն։ Նոյնպէս և եպիսկոպոսքն զգենուն ազանելիս, և ի վերայ նափորտ և եմիփորտն և բազպան արկցնեն, և ուսանոց և կոնքեռ² զանեակ³ բարձաւքն որպէս կարողիկոսն. բայց ոչ սրողին և ոչ բազմախանեն զգենուն։ Եւ քանանայրն զգենուն ազանելիք, և ի վերայ ուսանոց և նափորտ⁴, և⁵ բազպան ոչ ածեն։ Եւ ասրկաւազունքն հորանի գաւուերյժ ակիտակ հանդերձիւ, և զանեակ ուսովքն ուրար արկանեն։ Եւ այս պէս ամենեքեան առ հասարակ ակումբ տնեալ յաջ և յանեակ սեղանոյն, կան ի ըստ պատու հայրապետին սրբոյ։ Բայց նախ քան զպատարագն յորժամ աշարտի արկու առեւտարանին, հանեն զեմիփորտնեն⁶ զնայրապետին և զեպիսկոպոսացն մինչեւ կատարի պատարագն, և ապա դարձեալ զգեցուցանեն։ Եւ յետ այսորիկ խորհրդածին ի դիմաց պատուիրանաց Հոգոյն սրբոյ՝ առ

1. Ա. վառառորեալ տակ։ — 2. Ա. կոնքեռն։ — 3. Բ և Գ. անեակ։ — 4. Ա. նափորտն. Բ և Գ. նոմիփորտն։ — 5. Ա. ի։ — 6. Ա. և Բ զոմիփորտնեն։

ի¹ խրատ նորակերտ հայրապետին։ Եւ առնեն Աղմ։ ԻԲ։ Կցորդ։ Տէր հովուեսցէ զիս։ Եւ ապա ընթեռնուն։

Պետրոսի առաքելոյ ի կաթողիկեաց² Ա.
Թղթոյն ընթերցուած

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ . . .
Նմա իշխանութիւն և փառք յաւիտեանս.
ամէն։ (Ե, 1-11)։

Աւետարան ըստ Յոհաննու

Եւ իրրեւ ճաշեցին . . . ասէ ցնա՞ եկ զկնի իմ։ (ԻԱ, 15-19)։

Եւ ապա փառս տուեալ սրբոյ Երրորդութեանն, որ և առնենեալ յաւիտեանս.
ամէն։

Եւ սկսանի առաջին³ կարողիկուն⁴ շարական, Այսաւը ուրախացեալ ցնծան.
Եւ երրան մինչ ի տեղի կերակրոյն։

Զերչանիկ սուրբ հայրապետն հայատուանեաց զակը կոստանդին զատացաւդ սորին յիշեսիք ի Քրիստոս պատահազդ ամին։

1. Բ և Գ չունին իւ — 2. Գ կարողիկից։ — 3.
Գ առաջի։ — 4. Բ կարողիկուն։
-

ՎԱՍՆ ՕՇՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅ¹

Նախ՝ զի ասէ Բռուբինեաց պատմութիւնն. Զժե թվին Հայոց ի Մամեստիկա օծեցին զթակոր կաթողիկոսն. Երկրորդ՝ Դիոնսոսիեա մեկնիչն ասէ այսպէս. օծանեն զեպիսկոպոսս և զհայրապետոս. ոչ յատուկ ի վերայ եպիսկոպոսին ասէ. Երրորդ՝ Վանական պատմագիրն զրէ՝ թէ զՊետրոս պատրիարքն Սարգիս կաթողիկոսն ի կենդանութեան իւրում օծեալ էր կաթողիկոս իւրում ձեռօքն². Չորրորդ՝ Համբարձման քարոզն ասէ՝ թէ Քրիստոս նախ օրհնեաց և ձեռնադրեաց զառաքեալսըն, և ապա յղեաց զՀոգին սուրբ. վասն այն պատճառին մեք այլ աւրհնեմք առաջ և տամք զաստիճանն, և յետոյ օծանեմք մեռոնով³: Հինգերորդ՝ Թումա պատմագիրն զրէ՝ թէ երկոտասանն եպիսկոպոս օծանեն կաթողիկոս Հայոց⁴. և եթէ ոչ գտանի, Չ կամ Գ:

1. Աղբերբ տես աստ' 149. — 2. Օժանելդ կը նըշանակէ ձեռնադրել. Հմմտ. աստ' 46, 143. — 3. Տաթեւացւոյն խօսքն է (Քրզ. ձմբ. 662), որ աստիճանդ և օծանելդ զործածեր է անորոշ ձեւով, և կ'իմանար քահանայականն ու եպիսկոպոսականը, այլուր եւս յիշուած իւրմէ (աստ' 142): — 4. Աստ' 136.

Եւ օծանեն զգագաթն խաչանման մեռոնաւն սուրբ. մեծ քաշեն զիսաչն ի ծոծրակէն՝ մինչեւ զա(j) ի բթին վերայ ի ճակատն, և ի աջ ականջի տակէն մինչեւ ի ձախ ականջի տակն, և բոլորապատ ի ճակատէն, ի յականջին վերայէն, ի ծոծրակին վերայէն, ի ձախ ականջին տակէն՝ մինչեւ ի բթին վերայ, և ասէ զիւր ազօթքն. Դղուխ քո առծեալ եղիցի. զիտ յաւծումն եպիսկոպոսին և կարդա¹: Եւ ապա կոչէ զանունն զեպիսկոպոսին, կաթողիկոս ասա: Եւ ետոյ զաջ բութն կնքէ օծութեամբ, և ասէ. Աստուած հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի²: Եւ տան եպիսկոպոսունքն ի ծեռն բոլորագլուխ զաւազան, և ասեն զնորա աղաւթքն³. և տան զկնիքն

1. «Գլուխ քո եղիցի օծեալ և օրհնեալ երկնային օծութեամբ՝ ի պատիւ եպիսկոպոսութեան, յանուն Հօր և Որգոյ և Հոգույն սրբոյ՝ այժմ և միշտ...»: (եպս. մեռնդր. կանոնէն):

2. «Ած. Հայր տն. մերոյ Յի. Քի. որ կամօք իւրովք բարձրացոյց զբեզ ի պատիւ եպիսկոպոսութեան, կարողութեամբ իւրով կնքէ զբեզ յօծումն սուրբ և լնու առատապէս Հոգեւոր օրհնութեամբ: Վասն որոյ օրհնեալն ի բէն օրհնեալ եղիցի, և սրբեալն ի բէն սրբեալ եղիցի: և ամենայն զոր ինչ կնքես ձեռամբ քո և բութիւ, սըրբեցի. և յորոց վերայ Հանգչիցի աջ քո, եղիցի նոցին փրկութիւն և ողորմութիւն»: (նոյն կանոնէն):

3. «Ծնկալ ի բեզ զայս ցուպ և զաւազան պատույ տառչնորդութեան, առ ի զչարագործն դատել արդար


որ (է) մատանին կաթողիկոսութեան, դնելով ի մատն միջին, և ասեն զնորա ազօթքն¹. և տան զաւետարանն, և ասեն զնորա աղաւթքն այլ²: Եւ այս աղօթքնիս ամենեցեան յեպիսկոպոս օրհնէքէ զիտ և կարդայ:


և անաշառ իրաւամբը, և զհնազանդսն հովուել և արածել յօրէնս և ի պատուիրանո Աստուծոյ յամենայն ժամ».
(նոյն կանոնին):

1. «Ընկա՛լ մատանի առհաւատչեայ հաւատարիմ, և մա զգուշութեամբ յաստուածային ըս փեսայութիւն սուրբ եկեղեցւոյ՝ ճշմարիտ և ուղիղ հաւատով».
(նոյն կանոնին):

2. «Ո՛ս ըեղ այժմ զաւետարանս երկնից արքայութեանն, և զնացեալ քարոզեցես ժողովրդեանն՝ որ յԱստուծոյ ըեղ հաւատացաւ: Եւ Աստուծ որ կարողն է՝ աճեցուացէ զնոսին շնորհօքն իւրովք, և թագաւորեցէ նոցա յաւիտեանս յաւիտենից».
(նոյն կանոնին):







ՅՈՒՅՈՒԿ ԳՐՈՅԱ

Աշու. 5:

Ա. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ. 7-106:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ. 8-15: - Ա-Գ
դարերուն, մասնակցութեամբ կղերին ու ժողովրդիան. 8-12: — Կղերին վերապահելու ջանքեր. 12-13: — Միջամտութիւն աշխարհական իշխանութեան. 13-14:

Բ. ԱՐԴԱՌՈՒՆԵԱՑ ԵՐԱԱՆ. 15-22: — Կ'ընտրեն թագաւորն ու մեծ իշխանք միայն. 15-19: — Կևարիոյ աթոռին հաւանութիւնը, և նորընտիր հայրապետաց երթը հոն. 19-22:

Գ. Ե-Թ ԴԱՐԵՐՈՒՆ ՄԷՋ. 22-32: — Ընտրութիւնը կ'անցնի Պարսից արքային. 22-24: — Պարձեալ կը փոխանցուի հայ ազատանւոյն. 24-26: — Եպիսկոպոսք կը սկսին մասնակցիլ իշխանաց հետ. 26-30: — Քմայական միջամտութիւնք Արաբաց. 30-32:

Դ. ԽԱԳ-ՐԱՏՈՒՆԵԱՑ ԵՐԱԱՆ. 32-39: — Ընտրողք մերթ իշխանք են եպիսկոպոսաց հետ, մերթ վերջինք միայն, արքայական հաւանութեամբ. 32-39:

Ե. ԿԵԼՎԿԵԱՆ ԵՐԱԱՆ: Ընտրութիւնը կղերէն, հաճութեամբ արքային, մերթ և զործակցութեամբ իշխանաց. 39-44:

Զ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԻՒՅ ՅԱՅՈՐԻՒՆ : Կաթողիկոսներ՝
որ իրենց յաջորդը կը նշանակեն. 44-50:

Ե. ԵՎԱՆԱԿ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ. 51-64: — Հրաւէր
նուիրակով. 51: — Հրաւիրեալք. 51-54: —
Ընտրութեան վայրը. 54-56: — Ժողովոյն նա-
խազահը. 56-57: — Առաջարկող ընտրելոյն.
57-58: — Ընտրութեան կիլիկեան ձեւը. 58-60:
— Ընտրութիւն վիճակաւ. 60-61: — Ատենա-
խօսութիւն ընտրելոյն. 61-62: — Ընդհանրա-
կան թուղթ. 62-64:

Ծ. ՀԱՆԳԱՄԱՆՔ ԸՆՏՐԵԼՈՅՆ. 64-79: — Կ'ըն-
տրէին ամէն վիճակէ. 64-66, 199: — Մերթ
տոհմային ժառանգութեամբ. 66-70: — Տարիք
ընտրելոյն. 71-72: — Անոր մէջ կը փնդոէին
բարեպաշտութիւն և զիտութիւն. 73-74: — Ար-
տաքին վայելչութիւնը հաճելի. 75-78:

Թ. ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԵՅԻՆ ՆԵՐԲԵՒ : Անկարգութիւնք
և զեղծմունք ընտրութեանց մէջ. 78-86: — Ժո-
ղովուրդը կը սկսի մասնակցիլ ընտրութեանց.
80: — Ընտրութիւնը թղթերով. 84:

Ժ. ԱԹՈԽԵԿԵՑՈՒԹԻՒՆ. 88-96: — Թագաւորաց
ձեռքով. 86-87: — Նախարարաց կողմանէ. 87-
88: — իշխաններէ և եպիսկոպոսներէ միանգա-
մայն. 88: — Պառակտմունք և վրդովումներ
այդ առթիւ. 88-91: — Կիլիկեան ազնուացած
ձեւը. 91-93: — Խորթ կերպեր Հայաստանի
մէջ. 93-96:

ԺԱ. ԶՈՒԳԱԿԵԴՈՒ ՄՅ մեր և այլոց մէջ. 96-106:
— Հայկական կերպն ու բարւորումն արտաքին
ազգեցութեամբ. 97-99: — Հեթանոսաց ներ-
մուծած խանգարմունք. 99-100: — Ժողովուրդը

կը յաջորդէ ազատանւոյն. 100: — Ընտրութիւն
աթոռակցի, տեղապահի և յաջորդի. 101-103:
— Տոհմային ժառանգականութիւնը. 104: —
Աթոռընկեցութիւնը. 105:

Բ. ԶԵՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ. 107-176:

Ա. ՄԻՒՍ ԱԶԴՅԵՐՈՒ ՄԵԶ, առաքելոց օրով ու մի-
շին դարերուն. 107-109:

Բ. ԱՐՔԵՄ ԱՀԱՅ ՄԵՐ ԳՈՅ: Դ-Ը դարերուն գեռ
չկար. 109-116:

Գ. ԱԿՈՐ ՃԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ: Կը սկսի երեւիլ Թ
դարուն, և կը շարունակուի միշտ. 116-121, 199:

Դ. ԱՆԱՌԱՅ ՎԵՃՐ ԽՈՍՐՈՎՈՒ ՀԵՄ՝ Նկատմամբ
անոր տրուած կարեւորութեան. 121-125:

Ե. ԶԵՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆ: Կրկին էր. հինը՝
որ կորսուած է. 125-126: — Նորը՝ խմբազր-
ուած Լամբրոնացիէն. 126-129, 177 ծն. 4:

Զ. ԱՐԱՐՈԴՈՒԹԻՒՆ. 129-131: — Հայրապե-
տական քողը. 131: — ԶԵՈՆԱԴՐՈՂԱց Թիւը.
133-36: — Ո՞վ ձեռք կը դնէր. 136-137: —
Աւետարանի գործածութիւնը. 138: — Մատա-
նւոյն տուչութիւնը. 138-139:

Է. ՕՆՈՒՄՆ. 139-152: — Աներեւոյթ և անզոյ
մինչեւ ԺԷ դար. 139-149: — Նոյն բառը հին
մատենազրութեան մէջ այլաբանական իմաս-
տով. 142-47, 148, 150: — Օծումը կը հնա-
րուի ԺԷ դարուն. 149-152:

Ծ. ԱՐԴԻՒՆՔ. 152-172: — Տարածայնութիւն
Անանիայի ու Խոսրովու մէջ ասոր մասին. 152-
154: — Հայ եկեղեցւոյ տեսութիւնը Ե դարուն.
154-155: — Կաթողիկոսին եպիսկոպոս ձեռ-

Նադրելու իրաւունքը. 155-160: — Սիւսոնի և
թագաւորի օրհնութիւնք. 160-163: — Բ Գէորգի
համոզումը. 164-165: — Օրմանեանի տեսու-
թիւնն ու հերքումը. 165-172: — Կաթողիկո-
սական ձեռնադրութեան կանոնին աղբիւրները.
172-173:


Գ. ԿԱՆՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶԵՐՆԱԴՐԵԼՈՑ.
174-195:


ՎԱՍՆ ՕԽՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅ. 196-198:


ՈՒՂՂԵԼԻՔ ԵՒ ՑԱԽԵԼԼԻՔ .

ԵՒ Տ-Ն

- 17 16 տոռաշնորդիք . յառ. Շահակայ յաշորդին :
 55 14 Ատեփ. Գ. ռադ. Ատեփ. Գ.
 60 8 ժողովուրթ ռադ. ժողովուրթ
 65 17 Հաւանեսցիք : յառ. Եւ Պարտաւայ ժողովոյն
 (771) մե կանոնը կը պատուիրէ վանականաց
 անշարժ մեալ իրենց մենաստանին մէջ, օրայց
 եթէ յառաշնորդաց կոչեսցի յառաշնորդու-
 թին եկեղեցւոյք :
- 66 56. 2 Բ, խ, 2 ռադ. Բ, Ե, 2
 84 13 կաթուղիկութեան ռադ. կաթուղիկոսութեան
 113 17 կար. յառ. և կրնար օգնել անոր խեղա-
 թիւրման :
- 118 24 ժեռնազրութիւնը, յառ. որ սկսեր էր Թ. կամ
 թերեւս Ը զարէն :
- 144 5 յառաջ, յառ. ինչպէս վերեւ. Դաղարէն ռև
 կաղանկատուացիէն .
- 152 5 մելանովը, յառ. և որ անկասկած իւր դերն
 ունեցաւ օճման ընդունելութեան մէջ :







(In 164)

800

ԿՈ Ա. 1
803

ՀԱՍԽՈՍԱԿԱՆՔ ՆՈՅՆ ԳՐՉԻՆ.

ԵՐԴՈՒՄՆ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷջ. — Մանր նկարագիր զանազան երդմանց, արարողութեանց, պահարանաց, բժժանաց. էջ 326.

ՃԱՇԵՐ ԵՒ ԽՆՃՈՅՔ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. — Ընդարձակ նկարագիր հին ազնուականութեան, վանականաց ու ռամկին ճաշերու և ընդունելութեանց. էջ 504.

ՀԱՅ ՄԷՍԸ 1911 ՏԱՐԻՈՑ ԱԶԳԱՑԻՆ ՍԻՒՆ-ՀՈԴՈՍԻ ԳՈՐԾՈՑ ՄԷՋ. — Քննութիւն և ծրագիր ծիսական նորոգութեան. էջ 200.

ՀԱՅ ԴՐՈՇՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. — Պատկերազարդ ուսումնասիրիւթիւն, որ լաւագոյն ծանօթութիւնները կու տայ նիւթին վրայ. սպառած ու կրկին տպագրուած. էջ 112.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅ ՏԱՐԱՁԻՆ. — Անոր 25 դարերու նկարագիրը, 142 գունաւոր ու սև նկարներով, մէկ եռագունով, և զքեղ տպագրութեամբ. էջ 486.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ. — Կը նկարագրէ հին հայ պատանւոյն սնունդը, կրօնական, մտաւոր, մարմնական ու զինուորական կրթութիւնն ու խաղերը. էջ 430.

ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆՔՆ. — Անոր ծագման. նրւեռատեսութեան ու բաժանման գԱՍ Դիմնարար Գիտ. Գրադ. քննուած ու դրուած նո



901000869